

ՏՅԻՆԳՅՈՒՄ

Բազին

ԸՄՍԸԳԻՐ

Գրականություն
և Արվեստ



ԺԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ 3

ՄԱՐՏ 1974

digitised by A.R.A. @

մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

•

Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ	Յուզարկաւորութիւն մը
Յ. ՕՇԱԿԱՆ	Սերմնացան
Դ. ՊԵՂՏԵԱՆ	Էական մարմին
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Հորիզոնէ հորիզոն
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Նահանջ օրումն նահանջ ժամը
Բ. ԿՈՒՆԵԱՆ	Տպաւորութիւններ
Ս. ԿԵՐԱԿՈՍԵԱՆ	Շեշտեր մըն ու մեծաշուք
Պ. Ս.	Իսահակեանական առասպելներ
Ք. ՃԻՆՊԱՇԵԱՆ	«Ռուսիան զրկուած է իր ամէնէն գեղեցիկ ձայնէն»
* * *	Եդ. Տասնապետեան
ԵԴ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ	Բացման նառ
Մ. ԻՇԽԱՆ	Խօսք՝ Յ. Օշականի մասին
Պ. ԱՆՆԱՅՏՈՅԵԱՆ	Հայկական պետական տպագրութեան երգչախումբը




162-2000

digitised by

A.R.A.R.@

9000



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ.Գ. ՅԱՐԻ, ԽԵՒԻՑ

ՄԱՐԻՑ 1974

ՊԵՏՐՈՒԹ

Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ

ՅՈՒՂԱՐԿԱԴՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

(ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԻՔ

ՀԵՂԵԱԿԸ
ԲԵՄԱՆԻՉԸ, ՎԱՐՅԳԵՍ
ԲԱՆԱՏԵՂՈՐԸ, ԱՐՄԷՆ
ԲԱՆԱՏԵՂՈՒՆ ԸՆԿԵՐԸ, ԱՐՄԷՆ

ԱՆՑՈՐԻ ՄԸ
ԲԵՄԱՆԱԿԱՐԸ, ՊՕՂՈՍ
ՈՍՏԻԿԱՆ ՄԸ
ԹԱՓՈՐԸ

ՏԵՍԱՊՈՆԸ՝ ՓՈՂՈՑ ՄԸ

1974 JUN 201d

12000

Բեմը սկիզբին բաց է, մութ ու մերկ:

ԲԱՆԱՏԵՂՈՐԸ (մերս կը մտնէ ձախէն ու կը թալէ դէպի աջ մէկէ մը ետեւը—
յածի տէս: Աջ կողմէն դուրս կ'ելլէ):

ԱՐՄԷՆ (ներս կը մտնէ ձախէն): — *Ո՛ր, զնայ այս տղան, իր սենեակն ալ
չէր: Աճէն օր տշտեղերը կ'ըլլար, արդ յանկարծ ձամբան կը շեղէր:
Գիտեմ, զիս չամշցեցեալս համար, պարտքիս համար: (Ցամկալած ճեղ-*

ւած) Աստուած իմ, եթէ չգտնեմ գլխուն փորձանք պիտի գայ: (Դաւիթ կ'ընել վագելով աջէն):

Նոյնպէս ձախ կողմէն ներս կը մտնեն հապնեպով հեղինակն ու քեմադրիչը: Հեղինակը ձեռքին մէկ տետրակ մը՝ ձեռագիրը):

Հեղինակը (քեմադրիչին). — Ե՛ր, ո՛ւր է Արմէնը:

Բեմադրիչը. — Հիմա հոս էր: Ձեմ գիտեր մէկէն ո՛ւր կորսուեցաւ:

ՀԱՆԴԻՍՏԵՍ ՄԸ (տաքի, սրահի առաջին կարգերէն ձեռքով ցոյց կու տայ քեմին աջ կողմը, գաղտնիք մը մէջտեղ հանդիպելու). — Հոն, հոն առջաւ, հիմա տեսաւ:

Բեմադրիչը (հանդիպատեան). — Շնորհակալութիւն: (Ծափ գարնելով) Արմէն, ո՛ւր ես:

ԲԱՆԱՍՏԵՂՄԸ (ներս վագելով, ձախէն). — Հոս եմ, մի վախճար: Ձեմ փախած:

Բեմադրիչը. — Եղբայր, ինչո՞ւ ինքնագլուխ կը գործես: Իմ գիտցածովս քեզի հրահանգ տուող չեղաւ:

ԲԱՆԱՍՏԵՂՄԸ. — Հրահանգ: Ի՞նչ հրահանգ: (Հեղինակին) Պարոն Հեղինակ, ձեր առաջին բնութագրանութեան իսկ գուշ չըսէ՞ք, որ վարագոյրը բացուելուն՝ ես բեմ պիտի մտնեմ: Սխալ էր ըրածս:

Հեղինակը. — Ո՛չ, սխալ չէր, բայց զեռ տեսնել չէր, որովհետեւ բեմը արդէն քայքայ է: Ատենը որոշողը ներկայացումին ղեկավարն է:

Բեմադրիչը. — Այլապէս ինչպէ՞ս կարելի է գործողութեան ամբողջութիւնը պահել: Միւսները ինչպէ՞ս պիտի հետեւին քեզի, եթէ ներդաշնակութիւն չըլլայ: Եթէ միւսները պատրաստ չեն քեզի հետեւելու...

ԲԱՆԱՍՏԵՂՄԸ. — Միւսներն ալ ինծի պէս գիտեն բնութիւնը: Գրուած է: Այդ մասին հանդիստ եղիր: Երբ ես ներս մտնեմ՝ անոնք կը հետեւին ինծի: Այդ քու ներդաշնակութիւն ըսածդ սա մարդուն գործին մէջն է արդէն: Մի անգամ ընդմիջտ այդ գործին մէջն ենք, այդ ներդաշնակութիւն ըստիդ մէջը: Ա՛յնքան մէջը, որ անկէ դուրս գալը անկարելի է: Գլխով-տաքով մէջն ենք, բանտարկուած ենք:

Բեմադրիչը. — Շատ լաւ, աղէկ հասկցեր ես, պաաւօ: (Բեմին վրայ նայ) — Լաճ մը նետելով) Եթէ բեմադրիչին հրահանգին հետեւիլ չես ուզեր, գոնէ խաղին հետեւէ, խաղէն հրահանգուելու տրամադրութեան մէջ եղիր, իսկ աստիկա կրնայ ըլլալ երբ բեմը պատրաստ է: Գիտես, որ տեսարանը փողոց մըն է: Ո՛ւր է փողոցը, Արմէն, քնաչրջի՞կ ես, ի՞նչ ես:

ԲԱՆԱՍՏԵՂՄԸ. — Փողոցը: Ամէն տեղ փողոց է: Ո՛ւր որ Արմէնը ոտը կու թէ, հոն փողոց է, ո՛ւր որ ալ գտնուի Արմէնը՝ փողոց է, տունը, ճաշարանը, պէտքարանը, ո՛ւր որ ալ ըլլայ: Գրուած է, այդ ներդաշնակութիւն ըսածիդ մէջ գրուած է, տեսարանը՝ փողոց մը:

Բեմադրիչը (ձեռքի շարժումով մը Արմէնը կ'ընդմիջէ, յետոյ ծափ գարնելով). — Պողոց: (Բեմավայրը ներս կը մտնէ աջէն) Անհերիք է յանձնարար, Պողոց, անընդունելի: Ինչ որ է, վերջը կը տեսնուինք: Հիմա տուր փողոցը, շուտ:

Բեմադրիչը (ներս մտնելով). — Երբէն ի վեր փորձերը տեքորներու մէջ կը խաղան:

Բեմադրիչը. — Ի՞նչ փորձ, տղա՛յ, դո՛ւն ալ Արմէնին պէս խելքդ կորսնցուցեր ես:

ԲԱՆԱՍՏԵՂՄԸ (բողոքելով). — Խելքս կորսնցուցեմ եմ:

ԲԵՄԱՅԱՐԴԱՐԸ — Ես ի՞նչ գիտեմ, հեղինակը ըսաւ, որ ասիկա ներկայացում է, փորձ մըն է:

ԲԵՄԱՐԴԻՉԸ — Բան մըն ալ չես հասկցեր, Պօղոս: Հեղինակը բնաւ ներկայացում չէ չէ՛ ըսած:

ՀԵՂԻՆԱԿԸ (Պօղոսին) — Այո, ես չըսի, թէ ներկայացում չէ: Ներկայացում է, այնպէս՝ ինչպէս հիմա երբ դուք կը խօսիք, բան մը կը ներկայացնէք, բայց ատոր համար նախապէս փորձ ըրած չէք:

ԲԵՄԱՅԱՐԴԱՐԸ (զարմամբ) — Դուք ըսիք, որ ձեր հետապնդած նպատակին մէջ ներկայացումի սկզբունք չկայ: Ուրեմն փորձ է: Եթէ փորձ է՝ տեքորի պէտք չկայ:

ՀԵՂԻՆԱԿԸ — Եթէ ներկայացում չէ (Սրահը ցոյց տալով), այս բազմութիւնը ի՞նչ բան ունի հոս:

ՀԱՆԴԻՍԱՏԵՍ ՄԸ (պոռալով) — Դուք ձեր աղտոտ լաթերը լուալ՞ու եկեր էք հոս, թէ ներկայացում տալու: Ըրածնիդ խայտառակութիւն է: Ամօթ է ձեզի: Ազդին պատիւ չի բերեր:

ՈՒՐԻՇ ՄԸ — Ես տուէք ձեր դրամները:

ՈՒՐԻՇ ՄԸ — Այո՛, կ'ուզենք, կ'ուզենք: Ե՛տ տուէք ձեր դրամները:

ԲԵՄԱՐԴԻՉԸ (բարկացած) — Պօղոս, կ'աղաչեմ, փողոցը, չո՛ւա փողոցը: (Գառնալով միւսներուն) Սկսի՛ք:

ԲԵՄԱՅԱՐԴԱՐԸ (քեները փարսելով կը դիմէ դուրս ելլելու) — Լա՛ւ, լա՛ւ: **ՀԵՂԻՆԱԿԸ** — Այո՛, սկսի՛ք: (Ձեռագրին էջերը կը դարձնէ: Բեմագրիչը կը մօտենայ իրեն: Միասին կը քննեն ձեռագիրը):

ԲԱՆԱՍՏԵՂԻՉԸ (մինչ վարագոյրը կ'իջնէ բեմին մէջտեղը, ճիշդ միջոց մը ձգելով առջամասին վրայ: Վարագոյրը կը ներկայացնէ փողոցը) — Շատ ունակներ:

ԲԵՄԱՐԴԻՉԸ (Ետ դառնալով, բարկացած) — Նորէ՛ն սկսանք:

ԲԱՆԱՍՏԵՂԻՉԸ — Արդէն սկսած ենք: (Կը մօտենայ հեղինակին, ձեռքը անոր քունքի տեղի վրայ դնելով) Այս թուղթերուն համաձայն՝ կրկնութիւն չի կրնար տեղի ունենալ եւ այս պարագային (Բեմագրիչին) ո՛չ դուք եւ ո՛չ ալ հեղինակը իրաւունք ունիք միջամուխ ըլլալու: Հեղինակը նոյնիսկ սրբազրեւու իրաւունք չէ տուած ինքզինքին: Միմիայն այս է, գո՛րծք, ճշմարիտ հեղինակութիւնը: Հեղինակին կամքով հեղինակութիւնը անցած է գործին մէջ, ուրկէ կարելի չէ ստորակէտ մ'իսկ փոխել: Ասիկա հեղինակին ջանադրոված ազատութեան զաղափարն է, որ ինքնիք վրայ մերադարձ չի կրնար ունենալ: Ազատութիւնը միշտ առաջնութեան է: Երբ խաղը ներկայացում չէ, այլ ապրիլ է, ապրելուն մէջ կրկնութիւն չի կրնար տեղի ունենալ: Միմիայն մարդուն ներքին թելադրութիւնները կը գործադրուին, ճիշդ ըլլան անոնք թէ սխալ: Դատելու պաշտօնը ձեզմէ վերցուած է: Ա՛յո է, պարոն բեմագործ, հեղինակին գործին թելադրութիւնը, օրէնքը:

ՀԱՆԴԻՍԱՏԵՍ ՄԸ — Կեցցէ: Բայց սկսանք ձանձրանալ ձեր հաշիւներէն:

ԲԱՆԱՍՏԵՂԻՉԸ (առաջաքեմ գալով: Հասարակութեան) — Կը սխալիք, հաւատացէք, շտաշա՛ր կը սխալիք: Այս հարցը շատ կենսական հարց մըն է: Հեղինակը իր գործով փափաքած է մեզ ազատ ձգել, իսկ այս մարդը կ'ուզէ անպայման բռնութիւն բանեցնել մեր վրայ: Հոս դուք եւ ձեռք չկայ: Բոլորս խնդրոյ առարկայ ենք: Ամէնքս մատնանշուած ենք այս խնդրով:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԷ.— Մենք հոս տրտուութեան համար չենք եկած։ Ատիկա
 իր տեղը ունի։ Մենք հոս եկած ենք պրօստների համար։
 ԲԱՆԿԱՍՏԵՂՄԷ.— Ազգի բոխք։ Շնորհակալ եմ, չառ աղէկ։ Ատիկա իր տեղը
 ունի, իր տեղը, աշխիքն՝ փողոցը։ Ահա ասիկ (Գծազրուած պատը
 ցոյց տալով) փողոցը։ Փայտը, որ սպասութեան ամէնէն կաշկանդ-
 ւած տեղն է։ Խնայուած փողոցներ։ Կ'աճապարես տուն երթալու հա-
 մար, գործի երթալու համար, վազել կ'ուզես՝ չես կրնար։ Եթէ վա-
 զես՝ մէկը կամ միւսը պիտի հրմշտկես։ Ուրիշիկ չափ ներդրութիւնը ք-
 ա՛ն՝ յանցաւորի զէմքը մ'աթկելով, քեզի ապուշի տեղ կ'առնեն, թշու-
 մական նայուածքներ կը նետեն վրայ, կը հայհոյեն, կը նախատեն։
 Քիչ առաջ, երբ այս տեղէն վազելով անցայ, տեսաք, չէ՞, չէք կրնար
 երեսակայել, քանի հոգիներ վերադարձնելու դիւ։ Աստուած իմ, կարծես
 չարիք ընելու համար ըլլար փողոցը։ Դուք չ'ասկեցաք վազելուս պատ-
 ճար։ Բայց ինչպէ՞ս պիտի հասկնայիք։ Ձեզից որ հասկնանք։ Իմ
 բրածս հոն գրաւած է (Եւց կու տայ եղիմակիմ ձեռքի տետրակը)
 ա՛ռա այդ տետրակին մէջ։ Ձեռագիր բռնողը ինքն ալ չի գիտեր, թէ
 վազած ատենս ի՞նչ վերադարձնելու ստացայ անցորդներէն։ Հոգիս
 մէջ ի՞նչ քննախնդրութիւններ արթնցան, դուք ստիպուած էի խեղդել։
 Եւ ինչո՞ւ համար, խնդրեմ։ Որովհետեւ յանկարծ միաքա ինկաւ, որ
 կրնամ Արաքսին հանդիպել։ Արաքսը ամէն օր ասկէ առնէ կ'երթայ-կու-
 գայ։ Ատենէ մը ի վեր Արաքս ինձի պարտք ունի։ Ամէն հանդիպելուս
 կ'ամնայ, կը քծնի, կը ստիպուի սուտ խօսել, երեսները կը կարմրին։
 Գիտեմ, Արաքսը պատուաւոր եւ պատուական մարդ է։ Ձեմ ուզեմ որ
 նեղուի։ Ատոր համար կը փախչիմ իրմէ, երբ յանկարծ կը պատրաստ-
 ւիմ փախչելու տալանալէ բռնուած, անցորդներուն կը դարձուիմ, նե-
 րողութիւն, նորէն ներդրութիւն խնդրելով, բայց մարդիկ ներքէ չեն
 գիտեր, պէ՛տք երեսիս կը նային, կը կշտամբեն, միշտ կը կշտամբեն,
 բայց եւ չեմ ուզեր որ Արաքս նեղուի։ Երբ ունենայ՝ ինքնարարար
 կը վերադարձնէ։ Ատիկա ինքն ալ գիտէ, բայց կը նեղուի եւ ես չեմ
 ուզեր որ նեղուի։ Ամբողջ օրը ախուր կ'ըլլամ, հաց չեմ կրնար ուտել,
 կոկորդս կը մնայ։ Ձեմ կրնար քնտնել։ Ատոր համար փողոցը փոխե-
 ցի։ Տեսաք, չէ՞, ինչպէս կը վազի։ Ըսի ես ինձի, Արաքսն, եկուր գնա՛
 աւ փողոցէն, Արաքսը բնաւ աղ փողոցէն չ'անցնիր։ Այդ փողոցը նուազ
 երթելու ունի, առելի չուտ առնէ կը հասնի։ (Միւսները անհանգստու-
 քեամ ճշմոներ կ'ընեն, ցակառնիմ կը չեմ ընեն) Ա՛հ, դրօսանքի համար
 եկած էք։ Ատանկ ըսիք, չէ՞։ Մի փախչաք, պիտի ունենաք թէ՛ դրօ-
 սանք, թէ՛ դուարճութիւն։ Ձեզ ալ կը ճանչնամ, դուք ալ անոնց պէս
 (Փոփոխելով ցոյց տալով) մաքուր ապրանք մը չէք, կը դողաք ձեր աւը-
 ւած դրամին վրայ, բայց պիտի չ'զղջաք ձեր տուած դրամին համար։
 Տունը կ'ենայիք՝ ի՞նչ պիտի ընէիք, յօրանջելով ժամանակ պիտի ան-
 ցընէիք կամ հրիկ-կնիկ կու պիտի ընէիք։ (Արաքսն մէջ բողոքի շար-
 ժումներ) Մի նեղուիք, վերջը կը զղջաք, դրօսանք, դուարճութիւն,
 ուղածնուղ չափ պիտի ունենաք, պոնէ ձեր տուած դրամին չափ։ (Հե-
 ղիմակիմ) Այնպէս չէ՞, պարո՛ն հեղինակ, թէ՛ դուարճութիւն, թէ՛ դրօ-
 սանք, քանի ձեր դործը կատարեալ խեղկատակ մըն է (կը խնդայ) եւ
 ըսել, որ մեզի խորունկ խորհրդածութիւններ հրամցնելու միտքով
 ճաճայ ելած էք։ Ես՝ Վարդան Վարդանեանս, Արաքսն, ապատութեան
 սիրահար բանաստեղծը ըլլալէս ի վեր բոտ ձեր կամքին, կ'ենքս ճըշ-

մարիտ խեղկատակ մը եղած է՝ հակոտակ ձեր կամքին եւ ի հեճուկս ձեր յարկումեցողութեան, տհալին քանակութեամբ մանրամասնութիւններ չէք կրցած նախատեսել:

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ (նկրտ խուժելով: Անոնցմէ մէկը՝ Արմէնիւն) — Կրբաւ, Արմէն, շատ երկար եղաւ: (Բեմադրիչը ցոյց տալով) Ուղած-նիս սա մարդուն զոխուն խաղ մը խաղալ էր:

ՈՒՐԻՇ ՄԸ — Իրաւ է, վերջ տուր: Արաւիլ ցոյց տալով) Մարդիկը պիտի ձանձրացնեն: Գափը մի անցրինք:

ՈՒՐԻՇ ՄԸ — Ձգէ, Արմէն, դասը ողորդ ասիւր: Ա՛յ կրբաւ, եկուր:

ԲԵՄԱԴՐԻՅԸ (պոռալով) — Ի՞նչ դաս է, ի՞նչ: Խնթեցե՛ք էք դուք: Տեղեր-նիւղ: Սարսկներ: Ի՞նչ կր կարծէք դուք ձեզ, խաժաճիկներ: Խօսքը դրամը տուողինն է: Տեղերնիւղ: (Հեղինակիւն, կողմնակի) Դո՛ւք էք յանցաւորը: Խաղին օրէնքը փոխելով կառուցաւածքին մէջ բաց տեղեր ձգած էք: Այս պարտնները լուրջի կ'առնեն ձեր քայքայները: Սրտոնց նա-յեցէք, զեկամարի պէտք չունին եզեր: Տեսնուա՞ծ բան է: Առանց զեկամարի՝ խաղին դարձողութիւնը կը փոխ, լարելութեամբ կ'ըլլայ, լա-րելութեամբ:

ԲԱՆԱՍՏԵՂԵԸ (հառաւաճաւքեան) — Հասկցա՛ք ինչ բան է կ'ուզէ: (Երկու ձեռքերով լուծ կը կազմէ վզին շուրջ, լեզուն դուրս կը ետեւ. ըն կ'ընէ գլխու ցնցումով մը: Յետոյ ուշի գալով) Ո՛ր է չիւք, Հա, բանաստեղծ բլլալէս ի վեր, այսինքն՝ Վարդանը Արմէն բլլալէն ի վեր, տեսնելիք բան էր, ականջներս մէշտ ներքին ձայններու ունկնդիր, ներքին մղուժ-ներուս, որ ալիք-ալիք կը բարձրանան կոխ բլլալու համար: Այո, կր-ուի: Ներսը միշտ կոխի արամադրութիւններ կան: Ամէն ինչ հերքելու տրամադրութիւններ: Արմէն բլլալէս հապիւ ժամ մը ետք պողոտային վրայ մուրացկան մը ինծի կը մօտենայ, աչքերը ճղւած, վիպր ծուռ, դէմքը լացակուծած, ձեռքը երկարած: Զդուելի տեսարան մը: Ներսէս ձայն մը յանկարծ պոռաց, զա՛րկ, Արմէն, զա՛րկ, կոտրէ՛ սա անպի-տանին քիթը-բերանը, որ համարձակել է սպեղցնել մարդկային դէմ-քը: Եւ զարկէ: Ի՞նչ ըրի, Աստուած իմ: Մուրացկանը գետին գլորե-ցաւ: Անցորդները վրաս յարձակեցան: Աղուոր տոբոց մը տուին, վրաս թքեցին ու գացին զիս մուրացկանին քով մայթին վրայ տապալած ձկնով, երկուքս ալ սոսկայի սպեղցած: Ամէն օր կոխ էր անկէ ետք: Ամէն օր քիթ-բերանի կտրուտէք: Ա՛յ, ի՞նչ աղուոր օրեր էին: Բայց հիմա (կը նայի միւսներուն, որ սկսած են դուրս ելլել) պէտք է եր-թալ: Խաղը պիտի սկսի (Գլուխը ծուռ՝ կը ետեւի միւսներուն: Պահ մը ետ կը նայի: Հանգիստակներուն) Հա, գրօսանք կ'ուզէիք: Կեցէք, պիտի ունենաք ե՛ւ գրօսանք, ե՛ւ դուարճութիւն, ուղածնուդ չափ: Հոս եկողը երբեք չի զղջար տուած գրամին համար: (Կը վազէ, կը կենայ ու յանկարծ կը ծախ ռա դուրս կ'ելլէ):

ԲԵՄԱԴՐԻՅԸ (խօսելով) — Տապալապը անցաւ, ուրեմն կրնանք սկսիլ:

ՀԱՆԴԻՍԱՏԵՍ ՄԸ — Ըսել է մինչեւ հիմա սկսած չէ՛ր: Եթէ գիտնայինք, քիչ մը ուշ կու գայինք, գոնէ լաւ մը ճաշած կ'ըլլայինք: Ես մասա՛հ եմ, որ ինծի պէս չճաշած եկողներ շատ կան:

ՀԵՂԻՆԱԿԸ (կը մօտենայ քեմիւն առաջամասը) — Այո, իրաւունք ունիք եւ իրաւունք չունիք: Իրաւանին մէջ երեկոյթը սկսած է: Ի հարկէ, ինչ որ տեսաք բուն նիւթը չէ, բայց նիւթէն աւելի բան մըն է: Մենք ու-

ղեցինք առանց փորձի ներկայացնել խաղը, որպէսզի աւելի իրական
ըլլայ: Պատրաստուած խաղը միշտ արուեստական բան մը ունի: Ամէն
անգամ, որ մարդիկ քով քովի կու գան հաւաքականութիւն մը կազ-
մելու համար, միշտ ալ անհնազանդներ, հերքողներ կ'ըլլան, մինչեւ
որ օրէնքը գանձեց հանգարտեցնէ: Ճշմարիտ կազմակերպութիւն մը
հնազանդութիւն կ'ենթադրէ: Ահա այդ հնազանդութեան է, որ Արմէն
ինքզինքը կը հակադրէ: Հասկնալի է, Արմէնը բանաստեղծ է: Բա-
նաստեղծները անհնազանդ մարդիկ են, զոնք միւս մարդոցմէն աւելի
անհնազանդ: Այդ պատճառով իսկ մեղքերով աւելի բեռնուած: Բայց
մի մոռնա՛ք, որ Արմէնը նաեւ Վարդան է: Վարդանը առիթէն օգտուե-
լով՝ Արմէնին մեղանշումներով իր մեղաւոր ձգտումները կը ջանայ ի-
րագործել: Դերասանը դարձանալի մարդ մըն է, խառնածին մը, Ար-
մէնի եւ Վարդանի խառնուրդ մը, որուն մոլուցքին թիրախ եղաւ մեր
հաւատարիմ եւ համբերատար ղեկավարը: (Զայն ցոյց տալով) Բե-
մադրիչին պարտականութիւնն է խաղին կանոններուն հնազանդեցնել
զերակատարները:

ՀԱՆԴԻՍԱՏԵՍ ՄԸ.— Ըսել կ'ուզէ՞ք, որ ոստիկանի պաշտօն կը կառարէ:

ՀԵՂԻՆԱԿԸ.— Ծի'չէ այդպէս: Կը տեսնէ՞ք, որ դուք ալ Արմէնէն վարակուած
է՞ք Վարդանին պէս: Ասոր համար բաւական եղաւ, որ բեմին եւ սրա-
հին մէջտեղ բարձրացած պատը վերցնենք: Այդ պատը հիմա պատ-
րանք մըն է, ձեզ, հանրութիւնը հանդիսականի դիրքէն գործող մաս-
նակցութեան բերող: Տեսնուած բան է, որ հանդիսատեսները բեմի
գործողութեան մասնակցին: Մենք այդ հրաշքը դործեցինք: Բոլորս
ալ մեղքի եւ անմեղութեան երկընտրանքի մէջ ենք: Կը տեսնուի, որ
մեղքը աւելի մեծ քաշողութեան ուժ մը ունի մարդոց վրայ, քանի որ
անոնց իրաւունքներուն շրջանակին ընդլայնումովը անհատը ինքզին-
քին կը թոյլատրէ ընդմիջել խաղին կազմակերպութեան ի վնաս, ցըց-
ւելով անոր օրէնքին դէմ, փոխանակ դայն պաշտպանելու: Բայց ի վեր-
ջոյ վերջին խօսքը կազմակերպութեանն է, ինչպէս պիտի տեսնէ՞ք խա-
ղին վերջաւորութեան բանաստեղծին մեղանշումներուն պատժելի
ընդհանուրին կողմէ: (Բեմադրիչին) Շարունակենք:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Արմէն:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ. (ներս կը մտնէ, կը կանգնի յանկարծ ու հտդարձ կ'ընէ):

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Ո՛ւր կ'երթաս:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.— Ո՛ւր կ'երթամ: Վարդանը հետս առնելու: Անանկ անակըն-
կալ հրաման կու տաս, որ անապարանքիս մէջ Վարդանը հոն մոռցայ,
Անոր վրայ աւելի վստահութիւն ունիմ, քան քու վրադ: Ձեռագիրը
կարդացուած օրը Վարդանն է, որ ամէն բան արձանագրեց: Միայն
անոր հրամաններուն կրնամ հպատակիլ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Իսկ ես ի՞նչ եմ հոս:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.— Դուն ծախուած մարդ մըն ես:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— ԲԼբանդ գոցէ եւ հնազանդէ: Ո՛վ է քեզի վճարողը, ե՞ս թէ
դուն: Վերջին խօսքը վճարողինն է: Հասկցա՞ր: Գալէ՛:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ. (կը շտկուի, կը սկսի ֆալսի: Բեմէն դուրս ելլել տալը, հա-
սարակութեամբ) — Հասկցա՞ք, հիմա հասկցա՞ք: Ձեր դրամովը մեր
զլխուն բռնութիւն կը բանեցնէք: Այս մարդիկը կ'ուզեն, որ դուն հոգիդ
ծալես, գործքին մէջ նետես ու քալես իրենց շինած հոգիովը, իրենց

ուղածին պէս: Կ'ուղեն որ միայն աջ ոտքով քալես, ձախ ոտքդ անդոր-
ծած ութեան դատադարձում են: Ահա ախպէս, աջ-աջ-աջ (Ամէն մէկ
աջ ըսելուն՝ աջ ստիճ տալ կը թշու մէկէն կ'իյնայ: Մինչդեռ հա-
սարակութիւնը կը խնայ, ինք ստիճ կ'ելլէ, վրան գլուխը կը շտկէ,
յետոյ ուսերը քօթուելով դուրս կ'ելլէ):

Ձախէն դուրս կ'ելլեն հեղինակն ու բեմադրիչը:
Բեմը պահ մը պարապ կը մնայ: Աջէն ներս կը մտնեն
երկու-երեք հոգի՝ իրենց առջեւէն ճշելով երկամիւ ցած
կառք մը, որ ծածկուած է սեւ կտուով: Անոնց կը հե-
տեւին երէցները, սեւ հագուած, յետոյ երիտասարդ-
ները: Թափօրը կը յառաջանայ դանդաղ, շատ դան-
դաղ: Երբ կառքը միւս կողմէն դուրս ելած է, Արմէն
ներս կը մտնէ աջէն, շուարած, թափօրին երկու կող-
մերէն ելք կը փնտռէ, կը փորձէ անցնիլ, բայց փող-
ցը լցուն է: Ձի կ'ընար: Անհանգստութեան նշաններ
ցոյց կու տայ: Ուսի հպումներով կը հասկցնէ, թէ կը
փափաքի անցնիլ, միւսները կարեկցական ժպիտներով
կ'ընդունին իր հրմշտութիւնը: Ինքն ալ կը ժպտի ա-
նոնց: Բոլորը կը խօսին, քանի մը կը պատմեն, այն-
պէս մը, որ Արմէն չիմանայ, միշտ անձայն: Անձայն
շրթունքներով, աչքերու, ձեռքերու եւ դէմքի խաղե-
րով: Նոյն պահուն, Արմէն իրեն կը նայի աչքերը զար-
մանքով բացած, երբ Արմէն գայն հրելու վրայ է: Կը
ժպտի: Գլխով գոհունակութեան նշան կ'ընէ: Արմէն
յուզուած է: Կը վարանի նստից բանալու: Արմէն կը
խօսի Արմէնին, բայց միայն շրթունքները կը բանին:
Միայն լսելի կ'ըլլայ ուրախութեամբ ըսուած լաւ է,
լաւ, պաւս, էկար: Յանկարծ կը լրջանայ, վախճայ
որ չգայիք կ'ընէ: Այդ պահուն, շուրջիններն ալ ետ կը
դառնան զարմացած, բոլորը միասին մէկ նայումով
անոր կը նային լաւ, լաւ կ'ընեն, ուշ լինի նուշ լինի:
Անոնց զանգուածային յանկարծական շարժումը կ'անդ-
րադառնայ առջեւէն քալողներուն վրայ: Մականթա-
ցութիւն եւ տեղատուութիւն: Առջեւէն, սեւագգեստ-
ները, որ աւագանին է, ետ կը դառնան մէկ մարմին
եղածի պէս: Կը նային Արմէնին՝ ձեռքերնին փոքերնուն
վրայ, թեքել մը կուգ ուսերով եւ դէմքերնին խոժառ,
որոնց վրայ ոչ մէկ շարժում կայ: Ոչ մէկ գիծ կը շար-
ժի: Ոչ մէկ կծկում: Անոնց բարկութիւնը, որ հիմա կը
կակաղնայ, դէմքերը կ'երկարէ, կզակներուն կու տայ
անկման մէջ բռնուած քաղցած անշարժութիւն մը:
Ոչ մէկ աչք կը թարթի: Նայուածքները յար եւ նման,
կարծես մէկ նայումով ըլլային, սեւեռուն, խիստ, մա-
րած: Երբ բոլոր դէմքերը եւ մարմինները միասին իբ-
րեւ մէկ զանգուած կռնակ կը դարձնեն վերջապէս,
խայտառակ ըսելով, թէ եւ ոչ մէկ բերան կը բացուի:
Անոնցմէ միւսներուն վրայ կ'անցնի սարսուտ մը, որ
ամէն խօսակցութիւն անկարելի կը դարձնէ: Շատ,

շատ կը ժպտին, շարունակ կը ժպտին, յիմար ժպտով մը :

Խափօրք կը շարունակէ առաջանալ կամոց-կամաց : Արմէնին փախչելու մէկ մօր փորձին առեմ, Ժողովները մէկը միւսին հանգիստ եւ քույր միասին, սրտանման ժպտով մը, քեքեւ մըն ալ գլուխ շարժելով *հեար, ազէկ բրբր հեար, ալ տեղէն մի շարժիր*, կ'ըսեն : Ինչպէ՞ս շարժի այդքան սպառնալիքի տակ, վառագի սպառնալիք կայ իրեն շաղկապած ժպտանելուն մէջ, բայց ունեմ դիմախաղով մը ոտքերի սեւազգեստ երէցներուն կը վերագրեն զայն, սքանցմէ կը վախճան : Անոնց վախը կը փոխանցուի Արմէնին՝ իրենց ժպտանելուն միջոցաւ : Անգամին մէկ անգամ ետ դառնալէ յետոյ, սեւզամ մըն ալ ետ չեն դառնար, բայց կոնակները, դանդաղ ճալուածէն օրօրուն, Արմէնը կը կշտամբեն : Այդ տեսէն մէջընդմէջ սպառնալուն մը իջնցնի Արմէնին, որ ձեռքի անկապ շարժումներով մտէն հետացնել կ'աշխատի իւր յատուկութիւնը : Արմէն ալ խոժոռ կոնակներուն կը մայր երկուցով. յափշտակուած, իրեն կը քնի, քէ ունեմ կը պոռան *խալտուակ, խալտուակ, չե՛ս ամշնար մեղմօրէն կրկնուած* : Բեմին լռիւթը կը մայրին, մինչդեռ կը կրկնուին *խալտուակ, խալտուակ* բառերը, հետզհետէ մուտքելով : Արմէն ներս կը մտնէ ձախէն, երազելու :

ԲԱՆԱԿՆԵՂԾԸ. — «Խալտուակ, խալտուակ», բռն չեմ հասկնար : Ի՞նչ բան կ'ուզեն : Մէկը չ'ըսեր, թէ ինչո՞ւ համար պէտք է ամշնար : Կատարեալ հանելուկի մէջ ինչո՞ւ եմ : (Յանկարծ ձայնը քարծխացնելով) Եւ ո՞վ են այդ մարդիկ ի վերջոյ : Ո՞վ իրենց տուած է դիւ բռնարարելու իրաւունքը : Երանի թէ համարաւ փոխած չ'ըլլայի : Փորձանքի մէջ ինչպէ՞ս : Յանցանք մը գործած եղայ : Հանցեալ... Ատոր համար դիւ բռնի կերպով թափօրի մէջ ժողովել կ'ուզեն, պատժելու համար : Իրաւունք ունին : Ինչ պէտք ունէի համարաւ փոխելու : Անոնց համար, բրածս կեանքի տոջէն փոխուած է : Դատաւար թիւն : Իրաւունք ունին, պատժելու : Հարկու տրժանի եմ պատիժի : Եթէ մարդ մը իր իրաւունքը չ'պաշտպանէ, ինչի՞նչ մարդն է : Ատիկա զէջ օրինակ մըն է ուրիշներուն համար : Պէտք է դիմադրուել կեանքի խոչընդոտներուն : Պէտք է պայքարել : Փոխանակ Արմէնին հետ հանդիպումներէ փախչելու, պէտք է որ ե՛ս փնտէր զինքը ու պատուի երեսին. «Արմէն, չափը անցուցիր : Դիտես որ ես ունեւոր չեմ, դրամիս պէտք ունիմ : Գոնէ մաս առ մաս ետ դարձուր, եթէ մէկ անգամէն չես կրնար տալ» : Քիչ առաջ սուտ կը խօսէի, երբ անգի կ'ըսէի, թէ համարու չեղումս կատարած էի աւելի շուտ տուն հասնելու համար : Կարծես թէ գիւրիին բլրար տունց դրամի տպրելը՝ գրամի սերիին տալով : Կարծեմ քիչ տալիս բախ, թէ հանգիստ սրտով տուն կ'երթայի, տունց ամապարելու, խանութներուն ցուցադրեղէնը լցելով, երբ միտքս ինկու, որ կրնայի Արմէնին հանգիստ, մտաւանդ այդ ժաման : Ատենէ մը ի վեր Արմէն ինքի դուժմար մը պարտական է : Ամէն հանգիստս կը նեղուի, բառեր կը ծած-

ծրմէ բաներ մը ըսելու համար, բայց բան մըն ալ չ'ըսեր, գիտնալով, որ ոտու պիտի ըսէ ինչ որ ալ ըսէ: Կը մնայ դէմքին ծամածոութիւններուն վրայ: Ծիլդ տտոր համար կը խուսափիմ իրեն հանդիպելէ: Երբ զինքը կը տեսնեմ հեռուէն, անմիջապէս ճամբաս կը փոխեմ, դիմացի մայթը կ'անցնիմ կամ ետ կը դառնամ յանկարծ մէկու մը պէս, որ բան մը մոռցած է: Կը պատահի, որ ամբոխին մէջէն դուրս ելլէ մէկէն ձուկի մը պէս, որ ջուրէն դուրս կը ցատկէ եւ դէմ գիմաց կը գտնուինք երկուքս ալ շուարած: Գիտէ՞ք ինչ կ'ընեմ այն տոնն, պարզապէս ապուշ կը ձեւանամ, ինչպէս սովորութիւն է ըսել բանաստեղծներուն համար, «լուսինին մէջ կ'ըլլամ»: Գիտեմ, Արսէն քիթին տակէն կը խնդայ: Նորէն լուսինին մէջն է կը մտածէ: Ասիկա առաւելութիւն կու տայ իրեն եւ նոյնիսկ զինք կը փրկէ հապիտութիւններէ: Ես կը նախընտրեմ անոր այդ խեղճ գոտարճութիւնները եւ ոչ թէ միմոտութիւնները, որ իր դէմքին կու տան ողորմելի արտայայտութիւն մը, որմէ ես իրմէ աւելի կը տառապիմ: Ուղղակի կը տոռապի իմ բարեկամութեանս զգացումը: Մի խորհրդ, որ մարդասիրութեամբ կը փախչիմ, Պարզապէս կ'ուզեմ խնայել ինծի այդ անհանգստութիւնը: Ա՛հ, գիւրիւն է մարդու մը համար իրեն վերապահել գեղեցիկ դերը, երբ ինքն է դերերը բաժնողը, ինչպէս ըրաւ մեր հեղինակը, որ իրեն տուած է ամէնէն ազնուական դերը: Ուրիշ է իմ պարագաս: Ընթերցող կ'ըսեմ, պիտի խոստովանիմ, եթէ նոյնիսկ, ամբարտաւանութիւն տեսնէք ըսելիքներու մէջ: Արսէնին դէմքին քաջաշուքներուն պատճառով տառապանքի զգացումէն զերծ մնալու համար կը փախչէի: Դժնդակ բան մըն է այդ զգացումը, որ կը պլլուի սրախդ, ինչպէս երբ սարդը իր ջղային թաթերուն մէջ կը սեղմէ որսացած ճանճը եւ հեշտանքով ուժեղ առ ուժով կը ծծէ անոր պիւնը: Այդ պահուն այնպէս կը շարժարուէի, որ կ'ուզէի անոր երեւիս պոռալ ամբողջ ուժովս անտեսանելի Արսէնին. «Արսէ՛ն, դադրեցուր դէմքդ սա անպիտան խաղերը: Եթէ դրամի պէտք ունիս, Յարէ՛մ կու տամ, միայն թէ դադրեցուր սա դժոխային խաղը»: (Կրկին հառաքանութիւն) Եղածը ի՞նչ է, պարտք ունի եղբոր թող չտայ: Թող մոռնայ, լմնցաւ: Թող լմննայ սա խաղաթիւնը: Ի՞նչ պէտք ունիմ ճամբաս փոխելու ամէն անգամ: Տունէն դուրս ելլելու կը վախնամ: Հապա եթէ Արսէնին հանդիպիմ: Այդպէս է, երբ մէկէ մը խուսափել կ'ուզէք, անպայման վրան կ'իյնաք: Երբ անձրեւէն փախչիք՝ փոթորիկին վրայ կ'իյնաք: Ձեզի խրատ մը տա՞մ: Եթէ հանգիստ ապրել կ'ուզէք, տունէն դուրս մի ելլէք: Ո՛վ է ըսողը, որ ամէն մարդ իր գլխարկին տակ թագաւոր է, այսինքն՝ իր երգիքին տակ ըսել կ'ուզէ: (Մտածում, կը խնդայ) Կ'երեւի մարդիկ իրենց թագաւորութենէն հրաժարած ըլլալուն համար է, որ այլեւս գլխարկ չեն դնել: Աստուած իմ, այս ի՞նչ փորձանք եղաւ: Սա վախի փողոցէն անմիջապէս տունն եմ, բայց անցնելու համար ճամբայ չկայ: Անկարելի է ետ դառնալ: Ուղեով-ձեռքով ինկած եմ ժպիտներու թակարդի մը մէջ: Կը խնդաք, հա՞, կը խնդաք: Ձէք գիտեր, թէ այդ ժպիտներուն մէջ ինչքա՞ն մասնիկներ կան, ինչքա՞ն թելեր, չուաններ, չղթաներ, ինչքա՞ն երանգներ, բիծներ ու նշաններ որ, կարելի է ըսել, թէ սովորական բառաբանէ մը աւելի հաստ հատոր մը կ'ըլլայ, եթէ անոնցմէ իւրաքանչիւրը բառով մը նշանակելու կարելիութիւնը ըլլար: Ես տեղեակ չեմ ժպիտ-

ներու այդ լեզուին, որ երեւի նոր ժամանակներու պահանջէն ծնած է: Ձեռն գիտեմ, որ ժողովուրդ կարելի է մէկու մը ամբողջ կամքը ընտանել այդպէս: Ասոր համար տեղէն չեմ կրնար շարժիլ: Ստիպուած կը հետեւիմ թափօրին: Բայց այդ թափօրը ինծի հետ ի՞նչ կապ ունի: Ինչպէ՞ս պէ՞տք ունիմ: Ձեռն կրնար առաջ երթալ: Ձեռն կրնար ետ երթալ: Վեր թքենա՞ պիտի, վար թքենա՞ ժորուք: Ազատութիւն չկայ: Մեզի տրուած ամբողջ տարածութիւնը, պիտի եւ մօրուքը իրարմէ բաժնող տարածութեան չափ է, ճիշդ շրթունքներուն պատած տեղը, հազիւ գոցուած համայրի մը չափ:

ԱՐՄԻՆ (ձախէմ Արմէնին մօտեմալով) — Ժամ մըն է քեզ կը փնտռեմ: Եկուր, մարդիկը կտողած են: Ձերբակալութեան հրամանագիր տուին: Ոստիկանները հաւելդ ինկած են: Ետեւ եկուր: Այնքան դո՛ւ էի, որ ինքնիշխան եկած էի: Կեանքիդ մէջ մէկ անգամ խեղճ բան մը ըրիր: Եկուր:

ԱՐՄԵՆ (Գովիլի ժեսքով մը) — Արսէն, գիտե՞ս, այն բանը... Ձեռն ուզեմ, որ այդ բանին վրայ մտածես: Խոստացիր, կու գամ:

ԱՐՄԻՆ — Հիմա ասոր ատենը չէ, Արմէն: Մէյ մը հոգիդ ազատենք, վերջը, վերջը: Դու չես ճանչնար այս մարդիկը: Սա ո՞ր հագուածները չկան մի, ինչեւ չեն կրնար ընել:

ԲԵՄԱՐԻՍԻ (նկար մտած ասեմ էի մը կը լուսաւորուի ձախէմ վարագոյրփողոցը ետ Գաշուած մէկ երրորդը կը կազմէ փողոցը, ուրիշ պիտի սնցմի քափօրը: Այս փողոցը գառնիկ մըն է) — Այս ի՞նչ շատախօս ես եղեր, Վարդա՛ն: Անդին քեզի կը սպասեն, դու չես այս մարդոց գլուխները կ'արդուկես: Յետոյ, բաժնեկող քնազրին հետ ի՞նչ կապ ունին: (Յոյց տալով ձեռագրի, որ հիմա, հեղինակէմ իրեմ սնցած է) Ասոնք քնազրին մէջ չկան: Բնազրէն դուրս ելլելու իրաւունք չունին: Քէ ոք իրաւունք ունի հակառակելու հեղինակի քմայքին: Հոս իշխանութիւնը քնազրին է: Հասկցա՞ր:

ՀԵՂԻՆԱԿԷՆ (նստած է օթեակին մէջ եւ գրագած է Արմէնին խօսքերը նոթագրելով) — Մի ընդմիջեմ, Վարդա՛ն, մզէ թող խօսի եւ թոյլ տուր ինծի, որ հանդիստ նոթագրեմ բաժնեկող: Հետաքրքրական է, հրաշալի: Վաղը ետ' դորձ պիտի ընենք յաւելումներով:

ԲԵՄԱՐԻՍԻ (հեղինակին) — Ներեցէ՛ք համարձակութեանս: Ես չեմ կրնար ընդունիլ օրէնքի որեւէ խախտում, եթէ նոյնիսկ ան հեղինակին կողմէ ըլլայ: Հոս իրաւարարը հեղինակն է, հեղինակութիւնը ըսել կ'ուզեմ, սա է: (Ձեռքը զարմելով ձեռագրին, կ'առնէ քարձրացնելով) Գործադրողը ես եմ հիմա: (Արմէնին) Արմէն, խնդրեմ տեղդ (Միմչադեմ դուրս կ'ելլենք աջէն):

ՀԵՂԻՆԱԿԷՆ — Վարդա՛ն, մի մոռնար, որ նոյնիսկ բացած, իմ գործս է ձեռքի ունեցածդ: Ամէն գործ միշտ սրբագրելի եւ անաւարտ է: Այս գործին մէջէն ցոյց տալ ուզած եմ, որ լինելութիւնը միշտ վերաքննելի է: Միշտ վերաքննելի: (Յուզարկաւորներու քափօրը բնմը կը գրաւէ աջէն: Գազաղիմ հտեւ աւազանին միջոց սուրի, խտաղէմ ու արարողական է: Միւսները գրագած են Արմէնով: Անոնք շաղակրատութիւն, զարմանքի ու կշտամբանքի արտայայտութիւններ: Միայն Արսէնը համոզուող ժպիտ մը ունի գէմէին: Արմէն հարց տալու ձեւեր կ'ընէ, քէ բան մը հասկցած չունի: Միւսները ցուցամատները քերանքին տանք—

լով պատասխան կու տան: Յանկարծ, Արսէն կը խնդայ քահանայի: Միւսները վարակուելով Արսէնի խնդաւէն, իրենք ալ կը խնդան, կը հեզեն Արսէնը: Յանկարծ կը պռռան իրարու նրսն նայելով) Հա՛... «չի գիտեր եղեր, արւարձանայ եղեր»:

ԱՐՄԷՆ (Արմէնի) — Ըսել է չէիր գիտեր: Ձերեւոք յուզարկաւորութիւնն է: (Միւսներուն) Ձի գիտեր եղեր:

ԱՐՄԷՆ — Ձերեւոք: Բայց ես մարդու չեմ ըսած չծխելու եւ տոնիքներու վրայ պոռայու պահանջը ալ չեմ գրացած:

ԱՐՄԷՆ (սեւագոյնները ցոյց տալով) — Անոնք ամէն բան գիտեն: Բու մըտքէդ անցածը գիտեն:

ԱՐՄԷՆ — Բայց ինչո՞վ կը հետաքրքրէ զիրենք իմ չծխելու կամ ծխելու: Եւ յետոյ, (Մտածելով) ինչո՞ւ չծխելու կը թողնեն եւ ոչ թէ ծխելու, քանի որ այլեւս չեմ ծխեր: Կը նշանակէ, որ մեռնողը ծխելու է: (Մեկուսի) Հըմ... Կ'երեւի չեն հաւատար չծխելու: (Արմէնի) Խելքս չի հասներ, ինչո՞ւ համար չծխելու կը թողնէ: Տրամարանականօրէն ծխելու պէտք է թողնէ, քանի որ չծխելովս ծխելու մեռած կ'ըլլայ, ուրիշ հարց, թէ երբեմն ես ինձմէ զազանի դրանիկ մը կը փակցնեմ շրթունքներու: Ինչ որ ալ ըլլայ, տրամարանական չեմ գոհեր եղածը: Ասիկա աւելի կատակերգութեան կը նմանի, քան յուզարկաւորութեան:

(Նորէն Արսէն խնդաւով մը կը գրգռէ միւսները, որոնք վարակուած անոր խնդաւէն քահանայներով կ'աղաղակեն):

ՄԻԻՍԵՆՔԻ — Իրապէս խենթ է եղեր: Տրամարանութիւն կը փնտէ կեանքի մէջ:

ԱՐՄԷՆ (Արմէնի) — Երբե՞ն ի վեր տրամարանական է եղեր կեանքը: (Արսէնի խօսած ասեմ, միւսները կը գուարճանան՝ հեզելով Արմէնի գրգռութիւնները): Տրամարանութիւնը, փիլիսոփաներուն, քաղաքագէտներուն եւ դատաւորներուն արհեստն է, անոնց բանն ու գործը:

(Յանկարծ, բոլորը մէկ կը լռեն: Կը նային դէպի աւագանին, որ կ'անակնբերու գանգուածով լուսին կը պարտադրէ): Թափօրը կը շարունակէ յառաջանալ: Արդէն փողօցին կէտը հտեւն է: Յուզարկաւորները քուռի մէջ ինկած են: Թափօրը կը քալէ անոնց դանդաղ շնչառութեամբ չափին վրայ, մերթ րնդ մերթ հասկէ հոնկէ խոնգոցներ արձակելով, բայց ոչ առաջին շարքերէն, ուր աւագանին կը մնայ անդդուելի՝ իր հանդիսաւոր արժանապատուութեան մէջ: Օգտուելով այդ կացութենէն եւ տեսնելով, որ կը մտնեայ իր առնելիք փողօցին ձախ թելին, միմյնայ աչ թելին սկսած է շեղիլ Թափօրը, Արմէն կը քննէ փողօցին դիրքը, դէմքին ուրախութեամբ նշաններով քանի Թափօրը իր անցնելիք ճամբան կը բանայ: Արմէն կը նայի փողօցին ու կ'ուրախանայ: Շատով պիտի կրնայ անցնիլ կը խորհի: Եւ կը փորձէ, բայց մայրիմ վրայ, խոնարհած դիրքի մէջ, ծերունի մը գլխարկը ձեռքին, գոցած է ճամբան: Երբ Թափօրը կը հասնի փողօցին անկիւնը, կը շարունակէ ձախիմ, փողօցը բարձրանալէ առաջ: Արմէն

կը շարժի նոր փորձ մը ընելու համար: Թափօրը, արդէն ծայր տուած է փողոցին մէջ: Յանկարծ կանգ կ'առնէ: Առջեւէն մինչեւ վերջին շարժերը մէկ շարժումով ետ կը դառնան: Կիտած յօնքերով, խոժոռ ու անժպիտ կը նային Արմէնին: Անոր ներկայութիւնը կ'ապահովէ գիրենք ու կը շարունակեն փողոցն ի վեր քարձրանալ: Այդ պահուստ, Թափօրին առջեւ կ'երեւի դազազը, գլուխը վեր ցցուած: Արմէն յափշտակուած անոր տեսէէն, շտապելու մտններում վրայ կը կանգնի՝ դազազը դիտելու ճիշդով մը՝ յազարկաւորներու գլուխներու վրայէն: Դազազը հիմա աւելի լաւ կը տեսնուի զառիվերին վրայ, ցցուած երկինքին դէմ, որ կը սկսի գորշանալ: Հոս-հոն ամպի ծաւեցներ, որոնց մէջէն արեւէն նառագայթի խորձեր գիրար կը խաչածենք վայրաց փայլատակումով մը, ինչպէս մեծ փոթորիկներէն առաջ: Դազազը ամբողջութեամբ կը յայտնուի: Դազազը ծածկազ սեւ վարագոյրը վրայէն առնուած է: Հաստ խողովակ մըն է՝ հսկայ սիկարի մը նմանոց: Երկինքը կը գորշանայ: Կայծակ եւ քրտն կը սկսիմ փայլիլ ու գոռալ: Տեղատարափ կը սպառնայ: Յուզարկաւորները միանաւարար կը ծռին՝ ուսերնին տեղատարափէն պաշտպանելու ձեռքով մը: Արմէն ամբողջովին կը լանուած է տեսարանով: Անդադար կը շարժի այդ ուսիս շտապելու վրայ ցցուած: Թափօրը խորունկ յագնածութեան նշաններ ցոյց կու տայ, տեղհայլի վրայ կը շտկուի իրաքանչիւր շտապելու այդ ժախ աջ ձախ ու վէտվէտում մը կը գորշմէ Թափօրին: Արմէն կը հետեւի միշտ մեծ գարմանքով: Մեռելակառքը կը հասնի գառիթափին վերելք, մինչ ամագանին հետեւէն կը ճաշէ Թափօրը, որ կը հասնի փողոցին վերի մասը, ուր երկինք, դազազ ու փողոց իրարու կը խառնուին: Երբ կը շտապունի կայծակներով, փայլատակելով մուրիւն մէջ, երբ յանկարծ, դազազը, որ հսկայ սիկար մըն էր, կրակ կ'առնէ պայթելով ու կը մթայ... կը մթայ: Մուխը կը գրաւէ ամբողջ բնութիւնը: Յուզարկաւորները, խուճապի մատնուած՝ հոս-հոն կը փախչին: Լոյսերը կը մարին, բնութիւնը մութ է:

ԲԵՄԿԻՆԻՍԻՆ (ներս կը մտնէ վազելով, ձեռքին մէկը վիրակապով կապուած վզին, հագուստները պատռուած, երեսը վիրաւոր: Եւ կը խօսի) .— Ներողութիւն, սիրելի հանդիսականներ, այս անակեղալ վերջաւորութեան համար: Ես արդէն կը կասկածէի, որ ձախող պիտի վերջանար, քանի որ խօսքս մտիկ ընող չկար, նոյնիսկ հեղինակը: Եթէ իմ վրաս մնար դորձին պատասխանատուութիւնը, աւելի խաղաղ վերջաւորութիւն մը պիտի ունենար: Ոչ ոք դիտէ, թէ ինչ պարագաներու տակ տեղի ունեցաւ մահափորձը: Կատարեալ պակուցում կը տիրէ քաղաքին մէջ այս վայրկեանիս: Առայժմ, նախընտրելի է, որ հոս մնաք: Դուք, ժողովուրդը խուճապի մատնուած, բայց, չուտով խաղաղութեան:

թիւնը կը հաստատուի՝ շնորհիւ մեր իմաստուն զեկաւարներուն։ Ո՞վ էր դադաղին մէջ զփոխային գործիքը հաստատողը։ Կը կարծուի, թէ քանաստեղծն է, թէեւ ոչ մէկ տպացոյց կայ, մեծ կասկածը, թէ ան միայն կրնայ ըլլալ յանցաւորը, որովհետեւ առաջին վայրկեանին անհետացած է։ Անգտունելի է։ Աւագանիին մէջ ոչ մէկ ողջ մնացած է, ինչ որ փնտաւորները աւելի կը զփռարացնեն։ Միւս յուզարկաւորները խուճապի մատնուած մէջտեղ չկան։ Իսկ մեր ծտոսյաւանը, ինչպէս կը տեսնէք, ողբալի վիճակի մէջ է։

Կը ներէք, հակառակ ընկալեալ սովորութեան, այս իրիկուն դերասանական խումբը պիտի չկրնայ բարեւի գալ, պարզ այն պատճառով, որ մեռածները անկարող են ոտքի ելլելու, իսկ միւսները ցիր ու ցան եղած են։ Ներողութիւն։

(Նայն առհուն, ռատիոն կը պոռայ)

ՌԱՏԻՕ.— Այլո, ալլօ, հոս, ռատիօ ազատութիւն, ռատիօ ազատութիւն։ Վերջին պահուն կ'իմանանք, որ սոսիկանութիւնը ձերբակալած է հեղինակը իբրեւ հեղինակը մահափորձին։

(Բանաստեղծը, որ ներս մտած էր խելագար՝ հետապնդուած սոսիկանէ մը, կը փախչի բնէն, դեռ անգտնանի է, քէն, սոսիկանութիւնը անդադար կը ետապնդէ գայն։ Տեսնողները կ'ըսեն, քէ խելագարած է՝ ինքզինքն մահափորձին հեղինակը կարծելով)։

Կեցցէ Ազատութիւնը։

(Վարագայր)

ՎԵՐՋ

Ս Ե Ր Մ Ն Ա Ց Ա Ն

Իրականութեան՝ ու անոր՝ արուեստով վերարտադրումին միջեւ տարբերութիւն մը կայ, գոր դժուար է տարագել: (Անշուշտ, ծանօթ է անխուսափելի ձեւագեղծումը, որ մականտագիրն է ամէն ստեղծագործ երկունքի: Արուեստագէտին տառապանքը կը թիւի այս անբաւարարութեան, գոր կը զգենու հրազը, երբ նիւթանայ, որուն կը դատապարտուի թեւաւոր պատկերը, երբ թանձրանայ): Անհաւասար է աստիճանը այս փոփոխութեան: Արուեստագէտին միտքը վերջնական ու մետաղեայ կաղապարն էրով չի գործեր արտաքին աշխարհին դիմաց: Նայնպէս այս վերջինը չունի մշտապէս բեւեռուած դէմք մը: Մնաց որ, պայմանները անփոփոխ պահելով, այս փոխադրութիւնը երբեմն ի նըպաստ է, երբեմն ոչ:

Դիտուած է, որ արտաքին երեսով տպաւորիչ, նոր, ինքնատիպ տեսարաններ միշտ կը տուածեն, երբ կ'անցնին թուղթին: Ու գաղտնիք մը չէ այն ճաշակը, որ մեր պարծումներուն պատեղէն կը կախէ այնքան սիրուն ու ոչինչ, այնքան ընտանի, բայց տափալուքեամբ դիւրահազոյց նկարներ (որսի, ձիւնի, դաշտանակարի, լեռնանկարի հասարակ տեսարաններ): Ամէնէն գեղեցիկ կիներ լուսանկարի փափին վրայ հազիւ կը պահէ գիծերու տանիլի շէնք մը: (Երեւոյթին հակառակ կողմը նոյնքան ճիշդ է տըգեղ երեսի մը համար): Ինչ որ այդ գեղեցկութեան այսպէս ըսելու համար, աներեւոյթ բայց իսկանիւթ ուսրտը կը կազմէր, մընացած է դուրս: Ամէնէն անգեղեայ դէմքը միջակ ներդաշնակութեան մը կը բարձրանայ սակայն, հասարակ միջամտութեամբ մը:

Նայնը՝ բնութեան կտորներու համար ալ: Նկարիչները երբ իրենց կողմէ բան չեն վագեցներ տեսարանի մը վրայ, չեն կրնար փրկել անոր ցրտուն ու *inerte* անշահեկանութիւնը, այս հրաշքով է, որ ամէնէն խոնարհ անկիւնը պիտի հագնէր իր քաղցր իրականութիւնը, կենդանութեան հոսանուտը, որ մեր աչքերէն, շունչէն, մորթէն ու շարժումներէն կ'անցնի, կը բարդուի իրերուն վրայ: Ու տեղի կ'ունենայ անհամ նկարը: Միւս կողմէ՝ անոնք չեն հասնիր բնութեան մեծ համադրութիւնները, անմատչելի գեղեցկութիւնները արուեստով բնկնելու: Այս պարագային ալ անոնք կը տկարանան իրերու մեծութեան դիմաց: Դեռ չեմ հանդիպած կտաւի մը, որ լեռ մը արթնցնէր իմ մտքիս, այնպէս՝ ինչպէս որ է անիկա: Ու երբ հարցը փոխադրեմք բացառիկ էջերու, բնութեան այս ճնշող կամ անպարագրելի կամ անսեւեռելի գեղեցկութեանց նուաճումին, պիտի տեսնեմք, թէ արուեստը գրեթէ յանախ յոգնած է այդ ճիգերուն առջեւ:

Հապա հոգի՞ն: Ո՞ր արուեստագէտը պիտի յաւակնէր ժամանակ մը ապրումին ամբողջ լիութիւնը, ուժգնութիւնը, խորութիւնը, հրդեհը յանձնել նիւթին:

(անտիպ)

Յ. ՕՇԱԿԱՆ

Գ. ՊԸԼՏԵԱՆ

ԷԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Վայնը կորսուած ուրիշ կու գայ ծայրածաւալ մալքը բացուիլ
մարմինն օքտոբ
յայտնաւազ
Վերը կ'ըլլայ արիւնին

մարմինը պարզուսող ծալքաւոր սրկուող կը շարժի հզօր
 ձգտում բաց
 խորունկ ձորերն ի վեր հանգեցնու թիւղերու աղային գիշերին
 ներքին ելլող կ'ընդլայնէ ուղղահայեաց առասպելը մութին

լոյսը հանդարտ կը սպառի ձիւներուն վրայ դէմքին եւ խորասույզ
 խաղաղութեամբ բարձրածաւալ
 հոսուն մութ եւ գարկ եւ երակ անցումի
 կը հաւաքուի կը բացուի անշրջագիծ ավիւանը արիւնին

գիծներուն վրայ հորիզոնային արձակուած շեղք տներու լոյսը մութին
 կը գծէ քաւ ջնջուող խաւերը հովուն կը փոխուի
 եւ մինակ պատռտուող հատուած մակերեսէն ձիւներուն
 քիւ

շրջումը խիտ կշռաւոր կը բերէ սեւ ազմուկը ներախօս անտառներու
 ձեռքը բացուող խորութիւն գուարբ
 եւ հեռաւորութեան կտրտտուող, ձայներուն
 մուսնուն մինչեւ հասուող ճիչն արարքը արտադիր

սրունքներէդ կը սուրայ ներքին արեւը գիշերին
սեւ փայլ հոսում ծանրածաւալ տիղմերում վրայ սիկեբում տարբալոյծ
հող խորանկ եւ զանդադորէն
հորիզոնային հովը կը փորէ խալացող հետքը փարիզ

փակագիծը կողերուդ ողորկ անցնող բզկտուող ծաւալներում
մութը շրջագայ կը խուծէ գիծերէն պարապին
կը փոխէ բեզ
օ ծառ պառկած քաւ պարագրումին աւիշներու տարբազադիր

յաբիրիմքոսը մարմնիդ հիւզաւոր կը բռնէ տարածութիւնը ձիւնին
կը բացուի խաւ առ խաւ ճամբայ եւ հիմա ծալուող
նոյն գիշերը անհնչելի կրակին փրկարար
կը բերես

շարժում եւ ծայրագոյն գացող մինչեւ խորութիւններն ուղղահայեաց
շրջագայում, հով պարգումը
եւ հեւք բռնող ներքին սահանքը ջուրերում
եւ գետին արգանդիդ կը բարձրանամ մինչեւ կլար ծագումը դէմքիդ անբուսած



162-2000

դէմքդ հասուն խտացեալ մակերես տիղմերու ծփացող
մետաղի ճիւղերով եւ ազի
բռնուած ցեխին տաքադադիր եւ բռնկումին
տազուած գետ, ուր կը տեսէ կարմիր փայլակը մութին

եւ դուն պարզութեան մէջ տերեւներուն խորացող ծանրացող
զացող քառսիւն կը բացուիս անշրջագիծ
կը պահես
խտուշը մարմնիդ կեդրոնացող անյայտ ծագումին մահուան

հովուն դէմ կը շարժիս, սիւսիլ, կը շարժի գիշերը անսպառ
եւ քանձը գետին արիւնի կը ծփան դէմքեր ճիւղաւոր
եւ ներքին ահազ կը պայթի երակը պրկուած
բազանգը գիշերին կը քերթէ կը սպառէ միութիւնը մարմնիդ

դէմքդ այրած ճիւղէն մութէն եւ բաց
ծակ
արզանց խորունկ
ժայթքը բխող կը բանայ բզկտուած երկինք մը քաւ աստղերու

սրինգը մարմնին կ'անցնի ծալհարումներէն հովերու
կը պեղուի կը պատուի սառած հողը քերներն
քերակզգի
գիշեր գիշերին մէջ ու խառնաբան

խաւ առ խաւ խարսխտուղ կազմուող կը կենայ քանձրը մութին
դէմքին արիւնն
տարբաղադիր
ուր խորունկ կը փորուի անբուժելի

վիզը բարձրագոյն կ'ըլլայ շրջագայուն շունչին մութի
սեւ ոգեկոչող աշխարհումը հողին
ընծայուող հովին կեդրոնախոյս
աւետող ծայրագոյն երեւոյթը խօսքին

լոյսը հանդարտ կը սպառի դէմքին վրայ հակադիր, մտնող
ճառսին
նիչը խորէն կը բաճայ հին սկիզբը ճորտուող
օ ճօն օ պայթող եղջերափող Որփէտսի

Քանձորտէն հողը մարմնիդ բացուող ներքին հորերուն վրայ
ամուլ
արգասանդ
ծաւալազ ծալքերուն եւ խաղին մէջ մահուամ

եւ փայլակը կը պատուէ խոնաւ արտը անտառներու գիշերին
կը ժայթքէ գիշերը դէմքիդ
լոյսը աւելի մութ լոյսը աւելի սեւ խորութեամբ արգանդիդ
լուսիններ կը խտանայ ձայնիդ մէջ

մետէօրա բնկած ակօսող արտը կողերուն եւ ծովին
ցաւը ծայրագոյնին
եւ հողը բերրի անբաւական մէջ
ռոտող սերմը սրբազան կը բանայ լայնալին հունը փորիդ

ձեռքերուդ վրայ շիւթիւնը արեան ծովային
ազ եւ աւիշ եւ խազ եկող
նորագուող առաջին երակէն մայրերուն ուղղահայեաց
եւ ծագումէն մութին

ճշանագիր նախագիծ հանձնքն ի վեր գորութեամբ
դէմքդ տեսա
եւ անա կայսրութիւնը ինչիւն նախնական
սեւ ազմուկը մերախօս շրջուող կ'արեւի

եւ դուռ սահող կ'անցնիս արագութեամ մէջ ինչիւն
շնչուող կազմուող
անկարելի հեռաւորութեան
հակամ մարմին խաղին խօսքի եւ մահուան

մկան
պրկուող մկանին դէմ ճիշին
ծայրագոյն սահմանին սուրի հաւաքուող լռութեան
ձիգ ու խոյացող կը կռուիս մարմնին դէմ ինչիւն

վիհ եւ մայր միասին
հատուող երակը քացաւ տարբերութիւնը ծագումին
ու դէմքդ քանդուած կաթողիկէ
ու կատրուած հիմա նախադասութիւնը մարմնիդ

կամարը սրունքներուդ քացուռդ տարբեր կամարներու հազորդութեան
կամարք եւ դուն աղօթք արձանացեալ
կեցած սեմին, անշափելի
ձգուող սրտին մինչեւ եւ հոգեբաւ տարերկրի

մարմինդ մութին մուտք
եւ անց
երկարող երկնապակի թարձութեան,
ուր կը պահես կարմիր ճանաչումը երեկոյին արեան

Ժպիտդ հոգի եւ մահուան հաւասար խորութեան
ծայրագոյն լոյս ու ծայրագոյն ցաւ
հեռացող սահմաններէն, տիրող
լռութեան, ուր կ'ամփոփուի ընծայուող գլուխդ գոհի

գիշերէն տակի մութ եւ մեռած
սեռին մէջ եւ գիտցող ընկղմումը փերթաածին
երկինքն ի վառ տարբերութեան քացուռդ
Օրին կայր եւ աչք եւ աստղ միասին

մարմնիդ խորութիւնը խոհուն կ'ըլլայ երեկոյ ծիածան
բացուող մութին եւ անով
բացազ կրկին նոր ժամանակը օտար
գիր տարբերութեան հոգեբուն կտրտուած

քայց դուն ի՞նչ հոգ կորսուած ու կեցած քերթածի ծագումին
անվիտփայլ եւ հեռու ստեղծման տեսումին
ցաւէն քանդող քանդակող
ամուլ կորուստ գոցող լիութիւնը արեամ

ճեռքս դանդաղ կը բերէ մանուկ դէմքդ ընկզմած
եւ հաւասարակշիռ մութին լոյսին
կ'ըսեմ սկսող
ծագումը ճայնիդ խորունկին քառերու

մարմին էական եւ բեքեւ եւ պարող եւ գիծին հաւաքող ծաւալները հովին
կշռոյթիս հակադիր եւ անող
քայլին մէջ, միացնող
շուրթիւնը մութին քառերու լռութեան

ճարին վրայ ձիւն եւ փայլ եւ արիւն երկդիմի
այլակերպ մարմինը՝ քեւերուն
կ'առնեմ նամչցուած
առասպելը գէմքին կը խորանայ տողերուն

Գ. ՊԸԼՏԵԱՆ

4. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

ՀՈՐԻԶՈՆԵ ՀՈՐԻԶՈՆ

Թ.

ՄՆԱՍ ԲԱՐՈՎ ԽՈՎԱՍԱՐ...

Սասունցի Դաւիթ մնաս բարով կ'ըսէր Մովսսարին, երբ մաժբայ կ'ելլէր Մսրայ Մելիքը հարուածելու:

Դիւցաղնական հպարտութիւնը հայ ազգին:

Մենք մնաս բարով ըսինք Մովսսարին, զայն անտէր-անտիրական ձգելով ձիւնապատ հորիզոններուն մէջ:

Երկրաշարժ համաշխարհային:

Ախարհը խառնակոյտի վերածող փոթորիկներ՝ հիւսիսի սառնամանիքներէն:

Բռլէւիզմ...

Բանականութեւ քայքայում: Վերադարձ դէպի տուն:

Հայ ժողովուրդը՝ միմակ, կեանքի ու մահուան մանապարհին վրայ: Իր հայրենի հողին վրայ: Արիւնք, ու անթաղ զոհեր:

Ման կամ ազատութիւն կ'ուռած խօսքը, այդ օրերուն, իսկուպէս միակ բանաձեւէն էր: Այդ ապրումներն ունէինք բոլորս:

Իրական հորիզոնի վերիվայրումը բոլոր տեսակի երկրաշարժները կը զերազանցէր:

Այդ երկրաշարժը եթէ աշխարհը կը ցնցէր, Հայաստանի վերիվայրումը կը զանաւորէր հրաբխային ժայթքում մը, որ ամէն յոյս իր լաւային տակը կ'առնէր:

Ու մենք այդ լեռներուն եւ ջրհեղեղներուն մէջէն ընթանալով, կառնած էինք մեր հողին ու ժայռերուն, Հայաստանը մեր որբերուն պահելու համար:

Ձորաբանականութեւ քայքայում: Վերադարձ դէպի Ռուսաստան: Քայքայիչ, վտանգաւոր ու զինեալ խուճապ, Հոկտեմբերի եւ Նոյեմբերի վաթսուն օրերուն:

Մենք, այժմ գիտեալ, բայց ժողովրդական բանակ՝ մեր ժողովուրդի քանակով: Մեր գէժ կը շարժի պարտուած թրքական բանակը, Հարիւր հազարէն աւելի կազմով, Տրուպիզոնէն մինչեւ Վանի շրջանը:

Աշխարհը մեզ միեակ ձգած է, լքած, նոյնիսկ կրնամ ըսել՝ դաւաճանած է:

Հենինի ողջոյնները աշխարհին՝ կարծես հրաւէր մըն է թուրքին, որ ուսերու լքած հայկական նահանգները վերագրաւէ, իրրիւ նուէր նոր սկսած բռնկելով...

Ահա պատկերը երկրաշարժին եւ հրաբուխին, որուն զիմագրելու ելած ենք, կառած մեր յեռներուն եւ ժայռերուն:

Այդ օրերու մասին դրուածքներ կան, գրքեր կան. որոշ չափով գէշ-քերն ու նահանջները նկարագրուած են: «Արեւմտեան Հայաստանը» (1914-1918) գրքին մէջ եւ ալ ականատեսի վկայութիւններն արձանագրած եմ: Բայց այժմ, երբ 55-60 տարի անցնելէն ետք, կ'անդադառնամ այդ օրերու մեր շարժումներուն, զիմագրութիւններուն, մաքրագործումներուն, նահապետական ընկերներուն, մեր ժողովուրդի մէծ ու պզտիկ զանգուածներու ալելաբոյն, անվերապահօրէն կը վկայեմ, որ մեր դրածները կաթիլ մը ջուր է, նետուած այդ օրուան հոսցած կաթսային մէջ:

Այդ օրերու մեր կեանքն ու շարժումները եռացած կաթսայ մըն էին: Հայաստանի արիւնքոտ հողն ու քարերը կը խօսէին, կ'աղաղակէին: Մէկ տարուան ազատագրումը հայրենի նահանգներուն, մեզի կէս դարու կեանք ու վճարակաւթիւն տուած էր: Այդպէս կը զգայինք:

Հայաստանը պիտի վերականգնէ:

Սուգը պիտի մոռնանք...

Ու Մամիկոնեաններն ու Բաղրատունիները, արշակունիներն ու Արծրունիները հանգիստ պիտի գտնեն իրենց դարուսը դամբաններուն մէջ:

Նոր հայր, մնացորդը պիտի խոյանայ վեր, դէպի Մասիս, Սիփան ու Մոլոսար, ծովացած ուրիշ, յարութիւն առնողի հրաշալիքով:

Ու հիմա... նահանջ ու ճակատամարտ: Գիշեր ու ցերեկ: Հայոց աշխարհը կը թնդայ: Լեռներն ու ձորերը կ'արձագանգեն: Ու մենք օր մը թըշնամին կը հարուածենք, միւս օրը դէպի Մասիս կը նահանջենք, արիւնքոտութիւն մեր սրտերը: Երբ տասը քիլոմէթր հող, մեր հայրենիքէն, կրկին կ'անցնի արիւնքոտ թուրքին ձեռքը:



Անդրանիկ, Մուրատ եւ Սեպուհ ճակատագրական զիմագրութիւններէ ետք, Կարինէն սկսան նահանջը: Հայկական նահանգները ապահովող զխաւոր ճակատը Կարինէն էր: Գնդապետներ եւ զօրավարներ կային, բայց ընդհ. հրամանատարը Անդրանիկն էր, որ այդ օրերուն պաշտօնապէս զօրավարի աստիճան ստացած էր:

Նահանջէն քանի մը ժամ առաջ էրգրումէն հեռաձայնի պիտիւր կանչուեցայ: Անդրանիկն էր խօսողը:

— Էրզրումը կը թողնենք: Դուք զիմագրեցէք, մինչեւ մենք անցնինք Բասէն...

Յաւալի լուրը հասկցայ: Մեր նահանջը Ալաշկերտի ճամբան պիտի բռնէր:

Խօսակցութիւնը վերջ գտաւ: Այդպէս էր այդ օրերուն:
Ճակատներուն վրայ՝ Թրքական բանակներուն դէմ կռիւն կեանքի
կամ մահուան արիւնոտ պատկերը ունէր: Բայց այս կռիւ մենք կը վարէինք
աւելի հաստատուն կամքով եւ խոհեմութեամբ:

Խոհեմութիւնը կու գար այն վճռական կամեցողութենէն, որ կը ճշգ-
տէր փրկել մեր ազոտագրուած ժողովուրդը, որքերը, հաստատութիւնները:
Ներքին խորունկ կամք մը եւ վճռականութիւնը կար բոլոր ղեկավարներու
եւ զործիւններու վարմունքին, ու նաեւ զինուած ժողովրդական գունդերուն
մէջ, — փրկել մեր ժողովուրդը քրտական հարուածէն: Գոնէ մնացորդը
մնայ...

Կը կռուինք վճռականօրէն, բայց մեր ժողովուրդի փրկութիւնը, տե-
ղափոխութիւնը, ապրելու միջոցները առաջին տեղը կը գրաւեն մեր զործե-
լակերպին մէջ:

Այդ օրերուն, Խնուսէն կը վարէի մեզի ենթակայ շրջանները: Մեր յա-
ռաջապահները Մշոյ գաշտի Սուլուի կամուրջին զուխը բռնած են: Թուր-
քերը այդ կամուրջին զիժաղրութեան առջեւ կանգ կ'առնեն:

Մեր դրամած ճակատներուն տարածութիւնը ընդարձակ էր: Տրապի-
զոն, Էրզրում, Տարօն եւ Վասպուրական: Ու այդ տարածութիւնները իրար-
մէ անջատուած էին անհաշուելի լեռներով ու ձորերով, որոնք մեր ուժերը
իրարմէ կ'անջատէին:

Գլխաւոր եւ վտանգաւոր ճակատները Կարինի, Երզնկայի եւ Բաքերդի
շրջանները կը ներկայացնէին: Թուր-Թրքական պատմական պատերազմները
ճամբայ ելած են դէպի Կարս-Կարին-Երզնկա: Հիմա, երբ ուսանական բա-
նակները քայքայուած՝ տունը դարձած են, Թուրք բանակի զունդերը կ'առա-
ջանային դէպի Վան, Մուշ, Խնուս: Սակայն Թրքական բանակի գլխաւոր ու-
ժերը Կարին-Կարս ճամբան բռնած էին:

Քանի մը արիւնոտ բախումներէ ետք, Անդրանիկ երբ տեսաւ ուսա-
կան մնացորդ գունդերուն նաւանը, առանց իր արածութեան եւ Երզնկայի
անկումը, ստիպուած անցաւ Բոսնէն, Կարս եւ կեդրոնացուց իր գունդերը Ա-
խալքալաքի շրջանին մէջ: Մուրտա եւ Սեպուհ Ախալքալաքի վրայով անցած
Թիֆլիս, անկէ հիւսիսային կողմաւ:

Վանի եւ Տարօնի ուժերը կը յամառէին մնալ իրենց դիրքերը, բայց
մենք կը գիտակցէինք, որ մեր կոնակը վտանգուած է:

Անդէն ժողովուրդը եւ որբերը շարաթ մը առաջ ճամբայ հանած ենք
դէպի Ալաշկերտ: Յառաջապահ եւ թիկնապահ խումբեր ժողովուրդին նա-
հանջին կ'ընկերանան:

Մեր զինեալ ուժերը Խնուս մնացին եւ Թրքական ճակատի բոլոր յառա-
ջացումներուն դիմադրեցին: Թրքական ուժերը կաշկանդուած մնացին: Անոնք
կը կարծէին, թէ զօրաւոր զօրամաս մը կայ իրենց դէմ:

Մենք բռնեցինք Խնուսի եւ Ալաշկերտի դաշտերու եւ լեռներու ճանա-
պարհը դէպի Մասիս, երբ սպառնով եղանք, թէ ճամբայ ելած, անդէն ժո-
ղովուրդը արդէն Ալաշկերտի շրջանը հասած է եւ կ'առաջանայ դէպի Մասիս:

Վանի շրջանի ուժերը երկուքի կը բաժնուին: Մեծ մասը կը բռնէ Պարս-
կաստանի ճանապարհը ու անկէ կ'իջնէ Պաղտատ ու Պասրա... իսկ դէպի Ա-
րարատեան աշխարհ յառաջացող զինուած ուժերն ու ժողովուրդը բազմաթիւ
ընդհարումներով եւ կորուստներով կը հասնին Մասիսի ստորաբը:

Խնուսի եւ Մուշի շրջանի ուժերը երկու ամիս զիժմանալով կըրցան ի-

րենց շուրջը եւ թիկունքը մաքրել թշնամիներէն. ապաւովելով մեր նաւանջի
ճանապարհները:

Մալաղկերոցիք եւ բուլանուիցիք Սիփանի աջ թեւով վեր բարձրա-
ցան Ալաշկերտի գաւառը: Մուշի եւ խնուսի ուժերը լայն ծաւալով լեռնային
ճանապարհները մաքրեցին եւ ժողովուրդը շարժեցաւ դէպի Ալաշկերտ: Զօ-
րամաս մը թիկունքը կը պաշտպանէր տեղահան ժողովուրդին: Թշնամիին
յառաջուպաները միշտ հանդիպեցան մեր յետապահներուն ուժեղ հարուա-
ծին եւ ռաիզուեցան կասեցնել իրենց յառաջիազացքը: Լեռներն ու ձորերը
մեզի օգնական դարձած էին...

Մաքրողործումի աշխատանքը լրիւ գործադրուեցաւ նաեւ Ալաշկերտի
շրջանին մէջ:

Վտանդը կը զղայինք, բայց աշխարհի վերիփայտումը չէինք կրնար
չափել: Երբ բուլանուիցիք բուլանուի գիւղերէն ուժերը քայքայման կ'են-
թարկէր, մենք կը վտանգուէինք թրքական ճակատէն, որուն պարտութիւնը
մտաւուտ էր: Դաշնակիցներու յաղթական մեծ շարժումները Դերմանիոյ ու-
ժերը պարտութեան կը մատնէին: Թուրքիան ալ պարտութեան ճամբուն մէջ
էր: Միայն հայութիւնը վտանգուած կը մնար:

Հայ զորամասերը նոր սկսած էին կազմակերպուել: Ռուսական բանա-
կի քայքայման հետեւանքով՝ հայ զորավարներն ու սպաները նոր գունդերը
կազմակերպեցին Աղզային խորհուրդի իշխանութեան հրահանգով: Երկրի
ժողովրդական զորամասերը զաղթող ժողովուրդը պաշտպանելու եւ թիկունք-
ները մաքրելու աշխատանքին նուիրուած էին:

Մենք պատերազմի ալիքներուն ենթարկուած էինք այդ հինգ-վեց ա-
մբաներուն: Ռուսաստան եւ ռուսական բանակը երկրաշարժի եւ հրաբուխի
մատնուած էին:

Մենք՝ հայերս, կը մնայինք միմակ. թէ արեւելեան եւ թէ արեւմտեան
Հայաստանի մէջ, թուրքն ու քիւրտը մեր դէմ...

Ռուսական բանակին մէջ գործող հայ սպաներէն ու զինուորներէն մաս
մը կը համախմբուէր Աղզային խորհուրդի շուրջ, ու այդպէսով կը կազմու-
էր նոր հայկական բանակը՝ զօրավար Նազարէկեանի, Սիլիկեանի, Արա-
բատեանի եւ Դրոյի հրամանատարութեան տակ: Ու ատիկա տեղի կ'ունենար
1917ի վերջերուն, երբ բուլանուիցիք ցնցումը ստանալու իրաւունք կ'ունէր
Ռուսաստանը: Վրացիները իրենց անկախութիւնը կը հետապնդէին: Թաթար-
ները Բուզուն կեդրոն ընտրելով՝ թուրքերուն կը սպասէին եւ թաթարական
ընդհանուր բռնկումներու ետեւէ էին, ու թշնամի՝ հայութեան: Հայերը ամ-
փոփուած Աղզային խորհուրդի շուրջ, թիֆլիս նստած, հայկական գաւառ-
ները պաշտպանելու եւ Հայ Դատը հետապնդելու ետեւէն էին: Հայկական գա-
ւառներն ալ իրենց Աղզային խորհուրդները ունէին: Աղզային խորհուրդի նա-
խագահն էր Ա. Ահարոնեան: Երեւանի Աղզ. խորհուրդի նախագահը՝ Արամ:
Արեւմտահայ խորհուրդի նախագահը՝ Վահան Փափաղեան:

Անդրանիկ Արեւմտահայ խորհուրդի անդամ էր, ու խորհուրդին փա-
փառքով էրզրումի ճակատի հրամանատարութիւնը ստանձնած էր:

Ահարոնեանի նախապահութեամբ գործող Արեւելահայ Աղզ. խորհուրդն
ալ Անդրանիկի հրամանատարութեան ուժ տուաւ եւ թիկունք կանգնեցաւ ա-
նոր զինուորական աշխատանքներուն:

Զօրավար Նազարէկեան նշանակուեցաւ հայ բանակի սպարապետ:
Հայկական ուժերը կազմաւորուեցան թիֆլիս, Կարս, Ալեքսանդրապոլ եւ Ե-

րեան: Այս պործողութիւնները կը կատարուէին ընթացքին, երբ վանք, ճարտար եւ էրզրումը միայն իրենց ժողովրդական պիտեալ ուժերուն ապաւինած էին:

Թրքական յառաջխաղացումը կը շարունակուէր: Բուլղարիկեան նոր իշխանութիւնը թուրքին բարեկամ կը դառնար: Իսկ թուրքերը Խուսաստանի քայքայումը տեսնելով՝ իրենց աչքերը յառած էին Խարպէյնանին, անկէ անդին թաթրական եւ թուրանական տարածութիւններուն:

Ու մենք մինակ էինք: Միշտ լքուած ուրիշ ազգերէն, ապաւինած մեր ուժին, «Մահ իմացեալ անվստիսիւն է» քարոզումով:

Միակ բարեբախտութիւնը, որ այդ օրերուն քաժին կ'իյնար անդէն հայ ժողովուրդին, այն լքուած ղէնքերն էին, որ մեր ժողովուրդը գինուած բանակի մը կը պերածէր: Մնացորդ քիչն ալ մէծ լսն մըն էր տալիսներով անդէն տառապող հայ ժողովուրդին:

Զինուած այդ ժողովուրդը մահ պատերապիւի հոգեբանութիւնը ունէր: Կեանք կամ մահ: Այս իրողութիւնը կը ստատուէր Հայաստանի ամբողջ տարածքին: Արեւելահայ եւ Արեւմտահայ կեանքին հաւասար չափով:

Ահա կեանքի այն խառնարանը, որմէ կ'անցնէինք 1914 Յունուարէն մինչեւ 1918 Մայիս 28-ը:

•

Ճանապարհները կտրել անցնելը դիւրին է եւ սովորական: Այդ օրերուն մեր ճանապարհները արիւնոտ էին ամէն քայլի:

Լքուած էինք: Բայց թուրքի տէրին ամէնէն վտանգաւոր թշնամին հայն էր:

Եթէ թուրքերը հայ ժողովուրդի ցեղասպանութիւնը բաւական չէին համարեր եւ միացորդն ալ ոչնչացնելու ձգտումը ունէին, մենք ալ մեր շրջապատը մաքրելու ճանապարհը բռնած էինք: Թրքական յառաջխաղացքի դէմ կռիւ: Թիկուէքը կտրողներուն՝ մահացու հարուած:

Այս էր մեր առօրեան: Գիշեր եւ ցերեկ: Հանդիստն ու քունը՝ հաղապէս:

Հինգ ամիսներ տեւող Նախնջի այդ օրերը դար մը կարելի է հաշուել: Ինչպէ՞ս անցնիմ այդ օրերու վրայէն:

Ինչպէ՞ս դրի առնեմ ամէնօրեայ կորուրի քայլերը եւ նաեւ տառապանքները: Տառապանք՝ հերոսաբար ինկածներու ժառին: Տառապանք՝ մեր որբերուն եւ ժողովուրդին տեղափոխութեան տեսարանէն: Սրտի գոշունակութիւն՝ արիւնալի յաղթանակի մը առթիւ:

Քայլէ՞ աչքդ ամէն կողմ: Ուժերու համադրութիւն՝ աջ ու ձախ թեւերու: Թիկուէքին մեծ ուշադրութիւն, թրքական թնդանոթները կը գործեն: Երբեմն ալ յառաջապահ ձիաւորներ կ'երեւին:

Մեր ուժեղ հարուածը մէկ-երկու օր մեր կռնակը կ'ապաշուէ:

Բայց այս խառնաշփոթ վիճակը վերջ չունի: Կարծես հաշտուած ենք արիւնալի երեւոյթին հետ, ու այդ օրերը դարձած են բնական՝ իրրեւ հայ-թրքական պատերազմի երեւոյթ:

Յեղասպանութիւնը դարձած է բնական առօրեայ: Մահն ու ազատութիւնը իրար գրկած՝ կ'անցնին հայոց լեռներէն, դաշտերէն, գիւղերէն: Այսինքն՝ հորիզոնները կտրող ճանապարհներէն, որ անվերջ է: Օրը տարի է:

Յաջորդ օրը, հրը իրարու կը հանդիպինք ու զինուորը ողջ կը գտնենք, կարծես թէ հրկար տարիներէ ետքն է, որ իրարու կը բարեւենք:

Մահ կամ Ազատութիւնը քառ է թուղթի վրայ: Ես այդ վճռական միտքը կը կարդայի Ռնուտի, Ալա:կերտի եւ Մասիսի ճանապարհներուն վրայ՝ արձանագրուած արիւնոտ տառերով: Ու մենք կ'անցնէինք այդ ճանապարհներէն, որոնք այդ օրերուն, մեր ճրնական կեանքնի պատկերը կը դրոշմէին:

Վեց ամիսներու ամէնօրեայ մահ: Նաեւ ամէնօրեայ վերականգնանում: Թիւն: Դժուարին անցքեր. արիւնոտ րնդւորումներ: Տխրութեան եւ յուզումի ալիքներ: Վճռական հարուածի հպարտանք ու կամքի ամրացում: Ամէն օր, ամէն ժամ: Տարբեր այլազանութեամբ՝ տարբեր ճակատներու վրայ: Գրեթէ իրարմէ կտրուած լեռներով ու ձորերով: Այնքա՛ն ուռըհանդակներ նահատակուեցան ու միայն քիչերը կրցան մեր տեղեկութիւնները հասցնել հեռուոր ճակատներու վարիչներուն: Մտահոգութիւնը յերան մը ծանրութեամբ միշտ նստած կը մնար պատասխանատու ղեկավարներու գանկին: Ու մենք կը նահանջէինք դէպի Մասիս:

Մասիսը ցցուն, երկնակարկառ գեհութիւն: Իսկ մենք՝ յողնաքեկ, անքուն, ձեռքը գէնքի բլթակին: Եարժէ՛՛՛ որքան կրնաս, դիմացի՛ր՝ որքան սիրտդ կը արուփէ: Ժողովուրդով եւ զինուորներով մտահոգուէ ամէն վայրկեան: Ու փոքր յաջողութեան առջեւ՝ հրճուանքով հոգիդ դարձուր երկնակարկառ:

Վեց ամիսը սովորական կեանքի կարճ ժամանակ մըն է: Մեր այդ օրերու վեց ամիսը վեց տարիներէն աւելի էր: Անվերջ, արիւնոտ խառնարան: Այդ վերիօրումներուն ընթացքին, միակ ձգտումը մեր ժողովուրդի փրկութիւնն էր: Նաեւ մեր թիկունքին մաքրագործումը:

Ճանապարհները կարճ կտրեմ, որքան կարելի է արագ: Արագ՝ ո՛չ թէ ճանապարհներու եւ հորիզոններու անցքերէն, այլ թուղթին վրայ շարած այս սողերէն:

Վեց ամիսէն արդէն հասած ենք Մասիսի բարձունքին:

Արարատեան աշխարհը դէմս փռուած է, ու կապոյտ գլխարկ մը ունի գլխուն: Սեւնն է:

Ես կը դարձնեմ ձիւ: Բաղրեւանդ, Տարօնն ու Վասպուրականը լըքւած են: Տխրաղէժ է մեր աշխարհը: Միայն Սիփանի ճերմակ գազաթը կայ այդ հորիզոնին վրայ:

Այդ մայրկեանին կը մտածեմ, թէ Սիփանի ճերմակ ճառագայթումը հայ ժողովուրդին պայծառ առաւօտ մը պիտի բերէ իրեն հետ...

Երազանք եւ գալիք օրերու իրականութիւն:

Նոյն երազանքը ունէինք, երբ հեռու լեռներէն Մասիսի գազաթը կոթողուած կը տեսնէինք երկնքի տարածքին:

Թող ընթերցողը չդարձնայ, երբ Մասիսի բարձունքին կեցած եմ հեռուորներով, բայց Մասիսի փոխարէն՝ հեռաւոր Սիփանը կը տեսնեմ: Մասիսը այդ մայրկեանին մերն էր: Ու մենք, միշտով ու կարօտով՝ Սիփանին յառած էինք մեր աչքերը:

Երէկ այդ պատմական բարձունքը մերն էր, ու այսօր մնացած է թրւնաթիւն խաւարին մէջ: Միայն անհասանելի փայլուն գազաթն է ուզատ ամէն տիրապետութենէ ու իր ճառագայթները կը բաշխէ տեղահան եղած հայ ժողովուրդին:

Հոգեկան տառապանքի դադարը կ'ընդհատուի միայն ինչպիսիք ինչ անհատի կողմից ինքնապատժապանքով, որի համար չկ'առաջադրված ոչինչ, այլ միայն ինքնապատժապանքով, որի համար չկ'առաջադրված ոչինչ, այլ միայն ինքնապատժապանքով:

Բայց երբեք, աստուծոյ բոլոր մերն էին: Ու մենք՝ զինուած ու վճռական, Հայաստանի մերն է, կ'ընտրենք եւ անոր տէր պիտի մնանք: Այս մտածումը մեզ այնքան կը մխիթարէ, որ կորուստին մեծութիւնը կը մոռնանք:

Ընելիք ունինք: Թիկունքին դէմ աւելի վճռական է մեր կեցուածքը: Դէմ առ դէմ կռիւր, աչքի տեսողութեան ու մտքի բժշկական պարզ հորիզոնն է: Միշտ հոգ, թիկունքին եկած հարուածը շատ վտանգաւոր է: Հանգիստ ու միամիտ կ'ընթանայ: Յանկարծակի մահացու հարուածը կ'իջնէ կոնակիդ:

Զգարմանաք, երբ ըսեմ, որ Մասիսի բարձունքներէն իսկ կոնակիս հարուածողներ երեւցան, ու մենք բորբոքուն կ'իբրոյ՝ զանոնք մաքրեցինք: Անցի՛ր Հայաստանի երկնակարկառ կուրծքին վրայէն, ա՛ւ՝ թշնամին այդտեղն իսկ կոնակիդ հարուածէ...

Անդուսպ գարձան մեր մարտիկները եւ մաքրեցին մեր ճանապարհը... րը, ու նաեւ շրջապատը:

Զինուած Հայութիւնը կերպարանափոխ եղած էր:

Եթէ անցեալին Ֆետայիներու նշանաբանը «Մահ կամ Ազատութիւն»ն էր, այժմ զինուած Հայ զանգուածները կը շարժէին վճռական կեցուածքով: Նշանաբանը Հայաստանի հորիզոնին վրայ արձանագրուած էր, — «Ազատութիւն կամ մահ»...

Այդ օրերու կեանքը կ'ընթանար այս ճանապարհով:



Մասիսի վայրէջքը...

Լեռներու բարձունքներէն չէ, որ կ'իջնենք: Հոգեկան բարձունքները կորուստի ճամբան բռնած են: Վանք, Տարօն ու Կարինը դատարկուած են Հայ զանգուածներէն:

Ու մեր սիրտը այնքան դատարկ է, որ մորմոքն ալ չենք զգար:

Միակ միտումը, որ մեզ առաջ կը մղէ վերելքներէն ու վայրէջքներէն, Թշնամիին սիրտը դատարկելն է: Մորմոք չունեցող այդ սիրտը:

Կառուած Թշնամիին միայն թրջական բանակը չէ, այլ թաթարը, թուրքը եւ անպիտանկից իսլամ քիւրտը, որոնք մեր ճամբաները կը կտրեն:

Մահացու հարուածի ձգտումն ունին, առանց գիտնալու, որ նահանջող մեր ժողովուրդը ոտքէն գլուխ զինուած է:

Ու անոնց Թշնամական արարքները կ'իյնային մեր մարտական ուժերու վճռական հարուածներուն տակ:

Իկդիր հասած եմ:

Շրջապատը երկու օրուան ընթացքին մաքրուած է մինչեւ Արաքսի ափերը: Ժողովուրդը անցած է Երեւան եւ Էջմիածին:

Արաքսը անցած՝ մեր զինական ուժերը բռնած են Էջմիածինէն մինչեւ Սարգարապատ տարածութիւնը:

Եւ ալ անցայ Արաքսը: Վրանս տեղաւորեցի Սարգարապատ գիւղէն քիչ մը հեռու, գէպի Ախուրեան:

Ով կրնար երեւակայել, որ այսօրուան Սարգարապատի կոթողը պիտի բարձրանար վրանիս տեղը:

Իրողութիւնն է, որ կ'արձանագրեմ:

Բայց կը խնդրեմ ընթերցողէն, որ չկարծէ, թէ պարծանքի նշույլ մը կ'սլանապատին մէջ անդաւորուած վրանաբնակի գէմքին:

Միջոցէպէ: Պատահմունք:

Բայց, այսօր, յիսուերփնց տարի անցնելէ յետոյ, երբ այս տողերը կը գրեւ, սիրտս չըմուռնալ կը լեցուի:

Սարգարապատի արձանը կոթողն է այն շերտներուն եւ հերոսական տաքքին, որմէ ծնաւ Մայիս 28-ի Հայաստանը, այսօրուան Հայաստանը... Եւ վաղուան Հայաստանը:

Պատմութիւնը իր ճանապարհով թող ընթանայ: Ես վերադառնամ եւ ամփոփուիմ իմ համեառ վրանին տակ, աչքս յառած Արագածին, Աշտարակին, Անիին: Մտածեմ ժանաւանդ հարիւր հազարէն աւելի այն ժողովուրդին մասին, որ անտուն եւ անապաւն՝ տարածուած է այս անապատին եւ դաշտերուն մէջ:

Ի՞նչ պիտի ընենք: Ի՞նչ պիտի բլլանք:

Մշտնջապատ հորիզոնը մթաստուեր մըն է, տարածուած հայ կեանքին վրայ: Ելքը ո՛ւր է, ի՞նչ ամբարներ կան, անորոշ կը մնան: Միայն վճռական ենք հարուածին հարուածով պատասխանելու:

Հարուածները եթէ մեր ապրած վիշտէն, հայրենի լեռներու կորուստէն, հոգեկան վրդովմունքէն կ'առաջանայ, անորոշութիւնը մեր հողին խաւարով կը լեցնէ:

Այս հոգեբանութեամբ կ'ապրինք, արթուն եւ լարուած ջիղերով:

Երեւանն ու Էջմիածինը եւ չրջակայ հայ գիւղերը տակաւին հանդարտ են:

Փոթորիկի ալիքները հասած են իրենց, բայց մտահոգ երեւոյթ մը չունին: Հին օրերու հօգորութիւնը տակաւին կը տիրապետէ իրենց հօգիին: Իրենց տան մէջն են: Ազգային խորհուրդ ունին: Հայկական բանակը կը կազմակերպուի: Կարսը մերն է: Մասիսը մերն է:

Անտուն, անապաւն երկու հարիւր հազար ժողովուրդին մէջ մասը քաղաքներու եւ գիւղերու պատերուն տակ ապաստանած է, իսկ զինուած ժողովրդական վաշտերը, փարած իրենց ղէնքին, քեանատարած՝ հանգիստ կ'առնեն երբեմն...

Մայիսի առաջին օրերէն հազիւ երկու օր անցած էր, երբ հարուածներու տակ ինկանք Արագածի, Աշտարակի եւ Էջմիածնի թաթարներէն եւ քիւրտերէն:

Մեր պատերազմը թուրքին դէմ էր ամիսներէ ի վեր: Ու հիմա, մեր բնաշխարհին մէջ, Երեւանի եւ Էջմիածնի պատերուն տակ՝ թաթարական արշաւանքի մը ենթակայ կ'ըլլայինք:

Թաթարական ողեւորութիւնը սահման չունէր: Երեւի թրքական բանակի զաղանի բաներները իսլամ այդ զանգուածին լուրեր եւ ղեկավարներ հասցուցած էր:

— Կու գան: Ոտքի ելէք եւ մեր շրջապատը մաքրեցէ՛ք:

Այս իրողութիւնները ցնցեցին մեզ:

Հորիզոն մը բացուեցաւ իմ տեսողութեան:

Ներքին պատերազմի բեմ մըն էր Արարատեան դաշտը: Մեր զինուած ու-

մերը իրենց հայնացքը դարձուցին իրենց շրջապատին: Թուրքը կը մնար Մասիսէն եւ հարսէն անդին:

Այնքան մեծ զոհողութիւններով փրկուած մեր ժողովուրդն ու որբերը վառնդի մտտեռուած էին Արարատեան զաւարն մէջ, էջմիածնի հովանիին տակ... Ու այդ վտանգը չէին տեսներ Երեւանի Ազգային Խորհուրդի անդամները: Միայն Արամն էր մտահոգուողը: Բայց ան յոյսը դրած էր հայկական նորակազմ բանակին վրայ: Դրոն բռնած էր Մասիսի ճակատը: Նազարբէկեանը սպարապետն էր: Միլիկեան՝ Արարատեան շրջանի հրամանատար: Կարսի զուեղներն ու զնդապետները Կարսի ճակատը կը պաշտպանէին:

Փորձառու զօրավարներ եւ զնդապետներ:

Պատերազմի վտանգներէն անցած զինուորներ: Անշուշտ ուստական մեծ բանակի փորձառութեամբ: Այժմ, երբ տառնձին կը դործեն հայկական ճակատին վրայ, նոր փորձառութեանց պէտք ունին: Այդ օրերու մեր կռիւները ազատագրական զոհողութիւններ էին:

Մահ կամ Ազատութիւն...

Այս բանաձեւը լատ կրկնեցի: Թուղթի վրայ արձանագրուածը այն ծանրութիւնը չուէր, ինչ որ մենք ապրեցանք այն օրերուն: Միայն կրնամ պընդել, թէ պատմութեան մէջ հազուադէպ է տեսնել ՎՄահ կամ Ազատութիւն» բանաձեւը այնքան արիւնոտ, որքան Հայաստանի այդ օրերու կեանքը եղաւ:

Ու մենք անայլալ նեւտեցանք այդ արիւնոտ յորձանուտին մէջ, որմէ նորածին մանուկ մը դուրս պիտի գար:

Մանուկները ինը ամիսէն աշխարհ կու գան:

Նորածին Հայաստանը եօթը հարիւր տարի Մայր Հայաստանի արգանդին մէջ մնաց: Հայութեան արիւնի հեղեղը դուրս հանեց այս նորածին մանուկը:

Դառնամ արիւնի հեղեղին: Նորածինը դեռ կը մնայ իր մօր տուայտող կողերուն մէջ: Ոչ ոչ պիտէ, թէ ան Մայիս 28ին պիտի ծնի:

Արիւնոտ այդ միջոցութեան մէջ ոչ ոք դիտէ, թէ վաղը արեւը պիտի ծագի: Ինքը կ'ապրէ միայն ա'յդ օրը: Ծաղկաւերէն հեռու գտնուող կարգ մը քաղաքներն ու գիւղերը իրենց պատերէն անդին չէին տեսներ:

Այդ իրողութիւնը քանի մը տող անդին պիտի արձանագրեմ:

Ընթերցողը հետս թող վերագոհնայ Մարդարապատ, Նասի վրանիս տակ, ու հետեւի այն զործողութիւններուն, որոնք փոթորիկի պէս անցան Արաղածի բարձունքներէն, էջմիածնի եւ Մարդարապատի դաշտերէն, Աշտարակէն ու Ապարանէն:

Սասունցիներն ու տարօնցիները Մայիս 3ին պատգամաւորներ դրկած են մօտս: Պահանջ ունին...

— Պարոն, այս տեղի ջուրերը խմելով՝ բոլորս պիտի մեռնինք: Լեռները հանէ մեզ, որ ազրիւրի ջուր խմենք...

— Լաւ, պատրաստուեցէք. վաղը Արաղած պիտի բարձրանաք: Միայն զինուած ուժերը պիտի շարժին: Թաթարներն ու թուրքերը պիտի գիժադրեն: Դիտեցէ՛ք, Արաղածի այս երեսին վրայ միայն չորս հայ գիւղեր կան: Մնացածները թուրք — թաթարական են: Քիչ թիւով զրտական ցեղախումբեր կան եւ կը դործակցին իսլամ թաթարներուն: Կոխով միայն Արաղածը ձերը պիտի ըլլայ... Արշալոյսը շքացուած՝ ճամբայ պիտի ելլէք:

— Պատրաստ ենք:

Ու արագօրէն գացին, իրենց զինուորները ռաբի հանելու:

Պուլանուխ-Մալադկերտի եւ Ալալկերտի ուժերը էջմիածինէն մինչեւ Սարգարապատ գիւղերը պիտի հարուածէին։ Արդէն թաթարները երեք հաս զինուորներ սպաննած էին։ Ընտանիք մըն ալ երկու աղջիկներով կորսուած էր, ու կը մնար անգտանելի, կիրքի մոտենելով ժողովրդական զինեալ խումբերը։

Երկու հազար ձիաւորներ եւ հետիոտն զինուորներ Սարգարապատէն եւ Ուճանէն վեր բարձրացան գիւղերով։

Հազար հինգ հարիւր զինուածներ ձիաւոր ու հետիոտն, զէնքի գիմացին էջմիածնի զաւրտին մէջ եւ յաղթական հասան Աշտարակ։

Մայիս 4-5 փոթորկալի գրկախառնումներ տեղի ունեցան Արագածի ամբողջ սարածքին, էջմիածնայ եւ Աշտարակի շրջաններուն մէջ։

Մայիս 5ի գիւղերը եւ 6ի տոտուն մանրամասն զեկուցումներ ստացայ քոյրը հրամանատարներէն։

Այդ շրջանները մաքրուած էին։

Ժողովուրդը տեղաւորուած էր հանդիստ եւ առատ պաշարով։

Արագածի շրջանին մէջ զոհ տուած էինք 21 մարտիկներ։ Էջմիածնի եւ Աշտարակի կռիւներուն ինկած զոհերու թիւը 354ն աւելի էր։ Բայց թշնամին ամբողջովին մաքրուած էր։ Մեծ մասը սպաննուած էր, փոքր մաս մը փախած էր դէպի Նախիջևան կամ դէպի Կաղզուան։

Այս գործողութիւններուն ընթացքին յայտնի եղաւ, որ թրքական ոսպանիւր թաթարական շրջաններու մէջ կը գործէին եւ կապ ունէին թրքական բանակին հետ։ Անոնք պիտի հարուածէին էջմիածինն ու Երեւանը ու ճամբայ պիտի բանալին թրքական յառաջապահներուն։

Արեւելահայերն ալ ընաշնչելու ծրագիր ունէին եւ կապ հաստատած էին թաթարական շրջաններուն հետ։

Ռուսական կայսրութիւնը կործանած էր։

Բուլղարիոյ քաղաքացիական կռիւի վերիվայրումներուն մէջ էր։

Կովկասը մնացած էր իր վիճակին։

Հայերը, վրացիներն ու ասորայեւ ճանցիները իրենց փոքրիկ բանակները կազմելու ճիգին մէջ էին։

Կովկասեան այս երեք ազգերուն Միացեալ Խորհուրդը Թիֆլիսի մէջ անուանական էր, ու ազգային ներքին հակամարտութիւնները իրական կեանքի պատկերը կը ներկայացնէին։

Քիչեր միայն կ'ըմբռնէին կազութեան ծանրութիւնը։ Դէպքերը անցողական կը նկատէին, սպասելով հզօր ուժի մը վերականգնումին։

Հայութիւնը կը մնար ամենէն վտանգուածը։ Գոյութեան պահպանումը տիրական էր հայու մտքին մէջ։

Հայ ժողովուրդի սրտէն եւ մտքէն բխած բաղձանքն էր.

— Այս օրերն անցնէին...

Օրը տարի էր, ու շուտ չէր անցնիր

Արեան հեղեղ կար։ Աղատութեան ճամբան չկար։

Ապրիլ՝ այդ մթնոլորտին մէջ, ուսերուդ առ հարիւր հազարաւոր ժողովուրդի պատասխանատուութիւնը։ Ու խօսք հասկցուր ամէնուն։ Կազութիւնը հասկցողներուն ուտերը կը ճղուէին պատասխանատուութեան ծանրութեան տակ։ Անմիտները կամ երազատեսները իրենք զիրենք կը զգային ապահով, Կերենակի օրերուն յեղափոխական գինովութեամբ։

Ահա այդ օրերուն, երբ Արագածի, Սարգարապատի, էջմիածնի եւ Աշ-

տարակի թաթարական վտանգը փարատած էր, Երեսնի ճամբան բռնեցի, ղեկուցում տալու Արամի նախագահած Աղային խորհուրդին:

Արդէն աթոռ մը գրաւած եւ խորհուրդի նիստին: Արամ եւ Դրո սեղանին գլուխն են: Միւս բոլոր անդամները ներկայ են: Մեծամասնութիւնը դաշնակցական, մէկ շէղոք, երկու սոցիալ-դեմոկրատական, մէկ սոցիալ-դեմոկրատ: Բոլորն ալ լաւ հայեր: Արամի եւ Դրոյի վստահութիւնը վայելող հայեր:

Ձեկուցումս կը համառոտեմ: Զինուորական կացութիւնը երկարաբանութիւն չէր հանդուրժեր: Կենթադրէի, որ ունկնդիրներն ալ նոյն զգացումը պիտի ունենային:

— ...Հասանք Արարատեան դաշտը: Կեղբոնս Մարդարապատն է: Թաթարները ամէն կողմէ իրենց զէնքերը մեղի դնւոյց ուղղած էին: Ինքնապաշտպանութեան կոչիւններ տեղի կ'ունենային դիւեր ու ցերեկ: Մեղմէ սպաննուեցան յիսունը-հարիւր հոգի: Թշնամին ալ ծանր վնասներու ենթարկուեցաւ: Ու հիմա մեր ժողովուրդը տեղաւորուած է Արազած, Մարդարապատի դաշտը, Էջմիածին եւ Արարատի շրջանները: Կերպով մը կ'ապրին, մէկ մասը քաղցած, մեծ մասը՝ բնակարաններու մէջ...

Ձեկուցմանս ընթացքին Արամի եւ Դրոյի դէմքին վրայ ժպիտի նշոյլներ կ'երեւին: Բայց իրենց աչքերը յստած են խորհուրդի անդամներուն, որոնք թթուած դէմքով մտիկ կ'ընեն:

Երբ լռեցի, պոռթկում մը փրթաւ սենեակին մէջ: Վրաս յարձակողները դաշնակցական ընկերներն էին: Անոնց զայրոյթին միացան միւս կուսակցութեանց անդամները, աւելի զայրալից, քան դաշնակցական ընկերներն: Բոլորի նախառական խօսքն էր.

— Ի՞նչ կ'ընէք: Մենք ցեղատպան պիտի դառնանք: Մե՞նք ալ թուրք ոտնադնդներու շարքը պիտի անցնինք: Մենք՝ ընկերակցականներս...

Այս զայրալից մթնոլորտին մէջ դիմագրիծս փոխուեցաւ: Լուռ, շուրջս կը նայէի եւ կը խաղայի ծուռ փայտի սեւ, որ անբաժան էր ծուռ ոտքէս:

— Ուրեմն, մենք կոտորուինք, իսկ թշնամին միշտ ազա՞տ զգայ զէնքը մեր կուրծքին ուղղելու...

Տխուր դէմքիս վրայ զայրոյթ կար, ու փայտս կը շարժէի անբնական ձեւով: Ներքին մղում մը ձեռքս կը շարժէր, ու ես կը պտտորոտուէի գայն իջեցնել դաշնակցական իմ ընկերներուս գլխուն:

Արամ եւ Դրո այդ շարժումս նշմարած էին:

Արամ ոտքի ելաւ.

— Կարո՞ւ, դուքս եկուր, քեզի հետ պիտի խօսեմ Թիֆլիսէն եկած հեռագրի մը մասին:

Դժգոհ՝ դուքս եկայ ժողովատեղիէն: Դրոն մեղի հետեւեցաւ:

Երբ մինակ մնացինք, Արամ դարձաւ ինծի.

— Կարեւորութիւն մի տար անոնց խօսքերուն: Կացութիւնը չեն ըմբռնիր:

Դրոն, ձեռքը ուսին.

— Հիմա հանդիստ սրտով կ'երթամ գործատիս քով, Մասիսի բարձունքները: Կոնախա ապահովուած է:

Զայրոյթս անցած էր:

Ժողովարան մասնէ հանդարտ դէմքով:

Արամ յայտնեց, որ Թիֆլիսի մէջ տեղի պիտի ունենայ Արեւմտահայ

Համագումար մը եւ Աղղային Խորհուրդին հետ ներկայ կացութիւնը պիտի քննեն : Ու աւելցուց .

— Դուռն, Բարունակ Կապուտիկեան, Վ. Քրմոյեան, Աճէմեան եւ ես (Արամ) ընտրուած ենք պատգամաւոր : Բայց ես, այս պայմաններուն մէջ, Նրեանէն չեմ կրնար հեռանալ : Դուռն այցելութիւն մը տուր ձեր զօրամասններուն եւ ժողովուրդին եւ անմիջապէս հոս եկուր, որպէսզի թիֆլիս մեկնիք Մայլա 12ին :

Անմիջապէս ոտքի ելայ : Մուռ փայտա շարժելով դուռն եկայ, ցտեսու-թիւն մը մրմնջալով :

Կրտսէրէն իջայ էջմիածին, անցայ Սարգարապատ եւ Աշտարակի վրայով վերադարձայ Նրեան :

12ին մենք անցանք Ալեքսանդրապոլէն թիֆլիս : Ու յաջորդ օրը, երեւելոյեան, տխուր լուրը կը հասնէր թիֆլիս .

— Թուրքերը մտած են Ալեքսանդրապոլ, իսկ Հարաւէն Հասած են Կոպլ . .

Ո՛հնք մեր տխրութիւնը ապրեցանք, իսկ թուրքերը՝ իրենց :

Հասած այդ սոսժաններուն, երբ թուրքերը կը յուսային, թէ կոնսկէն հայ յօլ տմասերը մահացու հարուածներ պիտի ստանային, թաթարական մեռելափին լռութիւնը կը պարզուէր իրենց դէմ :

Դահ պատերազմի ճակատագիրը կը փոխուէր :

Անմահութեան ձգտող Հայ ժողովուրդը զէնքը ձեռքին մահուան ճաշապահը կը բռնէր վճռական կամքով :

Ոչ ոք չիտէր, թէ պիտի ծնէր մանուկ Հայաստանը . .

(Շար .)

Կ. ՍԱՍՈՒՆԻ



ՆԱՀԱՆՔ ՕՐՈՒԱՆ ՆԱՀԱՆՔ ԺԱՄԸ

Այսօր կրնամ
Սանձագերծուիլ,
Կրնամ աճիլ, կրնամ շատնալ
Ու վարարիլ,
Բաւարարուիլ՝

Երբե՛ք սակայն:

Որովհետեւ,
Քսանըչորս ժամերն այս քիչ,
Քի՛չ կը քսուին լեցնել քեզմով...

Սովորական օրն այս ցրտին,
Աստուածային հրաշքի մը զօրութեամբ
Թէ յաջողիմ այլափոխել
Ու շատցնել
Եւ վերածել քսանըչինց եթերային մեղմ ժամերու,
Ա՛խ, այն ատեն միայն կրնամք երջանկանալ,
Աննախընթաց, անկրկնելի այս մեծ գիւտով...

Քիտեմ, գիտե՛մ,
Նսեմնք ժամն այդ
Իր մէջ լման պիտ' պարփակէ
Երջանկութիւն մ'որուն հասնիլ կ'ըզայիլը դուն,
Երջանկութիւն մ'որով ժեզի
Հպարտութեամբ պիտի գայի՝
Իմ ջիզերուս հրայրքներով,
Երանկերուս արեան հոսքով,
Իմ աւիշէն, իմ հմայքէն
Ոչիճչ, ոչի՛նչ յաղաւելով...

Այսօր, այսպէս,
Քսանըչորս կարճ ժամերս
Ընծայեցի
Նսեմնք ժամուն արարչութեան...

Է՛՛՛՛՛ ՍԱՐԱՃԵԱՆ

Բ. ԿՈԱՆԵԱՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գոյոսէումը եւ մօտակայ Ֆոթօ Րոմանոն: Հին Հռոմի վերաւոր մարմինը: Շրջապատ, մեծութիւն, ուժ: Սիւններ, քարեր, քարեր: Գոյոսէումը զիսկ եր պահէ իր հմայքը: Արձաններն ու քանդակները: Նիւթը կը պարտուի ի վերջոյ, ինչ որ հոգ էր, հոգին կը վերադառնայ: Արդեօք: Բան մը կը մընայ, կը տեսէ: Կը մոխրանայ, կը զոտուի, կը խառնայ ու ոգիի կը փոխակերպուի: Արձանագործութիւնները, գիրքը, մարդոց յիշողութիւնը, ժամանակակից, օգր, միջոցը: Բան մը, որ անմահ է, որքան մարդ կ'ապրի, եւ անկէ ալ անդին:

«Մովսէսը: Ժամը կէսօրը քանի մը վայրկեան անց է: Վարդապետը կը փակէ դուռը մեր առջեւ: Ժամը երկու եւ կէսին եկէք: Երկար քայլեր ու բարձրացեր ենք բլուրը: Նոյնը պատահած է քանի մը անգամ Ծլորանս, այլուր: Պէտք է լաւ մը յղփանան, գինիով արբենան եւ փորերը տնկեն ժամ մը: Սուրճ մը: Վարձ՝ Հռոմը: Ի վերջոյ, աշգրանն ալ գէշ չէ: Այնքան թանձարան, եկեղեցի կ'այցելենք, որ բնութենէն եւ ժողովուրդէն կտրուած ենք: Հռոմէացիները իրենց առանին գործերուն կը վազեն: Իրենց շուրջը պատմութիւն է տեղի կ'ունենայ յաւիտենական կատակերգութիւնը, — իրենք իրենց հացին ետեւէ են: Շրջապատը, պատմութիւնը եւ իրենք մէկ են: Իրենց անձէն եւ կեանքէն անբաժանելի է: Անցած է եթադիտակցականէն եւ մեր ապրումները շունին թերեւս:

Վերջապէս կը հասնինք «Մովսէսին»: Այնքան մութ է, որ ամէն երկու-երեք վայրկեանը քառորդ մը զննելու է մեքենային մէջ, որպէսզի լոյսերը վառին: Տասը-քսան հոգի հաւաքուած ենք: Տարեց զոյգ մը մատնաւոր սեւ ինքնաշարժով եւ վարիչով եկան: Ամէն անգամ, որ լոյսերը մարէին, բոլորը կը բացապանդին, բայց նոր քառորդ զննելու բարեգործութիւնը եւ կը ստանձնէին:

Կրկին նոյն հիացումը եւ նոյն յուսախարութիւնը: Ճիւղիոս Բ.ի դամբարանն է սա: Զէ այն, ինչ որ Միքելանճելոն երեւակայած ու ծրագրած էր: Պարտագրուած է իրեն, եւ ամբողջութիւնը խեղճ է հսկայ «Մովսէսին համար»: «Մովսէսը պէտք է վերցուի եւ դրուի պատուանդանի մը վրայ, ինչպէս առանձին էր Սինայի բարձունքին:

Պիացցա Նափոնայի մէջտեղի մեծ աւազանի արձանները կը ներկայացընեն աշխարհի շորս մեծ գետերը: Գործ՝ Պերնիկի: Գետերէն մէկը Նեղոսն է անշուշտ:

Միաքս Կ'երթայ Եգիպտոս, Նեղոսի հովիտը, ուր ապրած եմ կեանքիս մեծ մասը: Եգիպտոս եւ արեւը ժիշտ անբաժան են ինծի համար: Արեւուն հովիտը: Ախնադոն, առաջին արեւապաշտը: Առաջին միաստուածեանը: 1380 տարի Գրիստոսէ առաջ: Բանաստեղծ Փառաւոնը կը գրէ.

«Արշալուսը գեղեցիկ է Երկնքի հարկանքին,
Ով ապրող Ատոմ, կեանքի Սկիզբ:
Երբ դուն կը քարձարանա Արեւիքէն,
Կը լեցնես բալար Երկիրները գեղեցկութեամբ»:
Եւ,
«Ստեղծիչը հունտին՝ կնոջ մէջ,
Արարիչը սերմին՝ մարդուն մէջ»,
Կեանք կուտաւ զաւկին մօր մարմնին մէջ,
Զինք կ'աղոթէս. որպէսզի չլայ,
Կը սնուցանես զինք արգանդին մէջ իսկ,
Շունչ կուտաւ կենդանացնելու՝ ամէնը, որ կ'արարես»:
Դուն հաստատեցիր աշխարհը,
Եւ զայն հասցուցիր զաւկիդ՝
Ախնադոնին, որուն կեանքը Երկար է
Եւ իր գլխաւոր արժայակամ կնոջ,
Իր Սիրելիին, Երկու Երկիրներու Տիրուհիին,
Նեփէր-Ֆեփու-ատոմ, Նափոնդէտէ.
Ապրող եւ փոքրող. յաւիտեանս յաւիտենից»:

Արեւը: Հովիտը: Յաւիտենական Գետը: Ապրելու սէրը, պոռթկացող կիրքը, յաւիտեան ապրելու: Բրգանալու երկնքին մէջ, վիթխարի արձաններ եւ սիւներ ժամանակին դիմաց:

Նաւը գետի վրայէն դէպի անդհեականը: Սեզանը պատրաստ, Ննջա-սենեակ, գահիճ, կահ կարասի, զլեւտ, գոհարեղէն: Կեանքն ու գործիքը՝ որմերուն:

Որովհետեւ ապրելը գեղեցիկ է: Միակ փորձառութիւնը: Տիեզերական միակ նպատակը: Արարչութիւնը, աստուածայնութիւնը: Դրախտ ու դժոխք — ի՞նչ յիմարութիւն: Մեղք, շար ու բարի: Ժամանակ, միջոց, մահ: Ծը, Նունդը, ապրիլը, մեռելիլը — ամբողջութիւն են: Մութը եւ լոյսը, հակադրութիւն եւ բաժանում, սնունդ, ալյասերում եւ ազրացում, վերածնունդ, բարիք ու չարիք, — յայտնաբերումներն են նոյն երեւոյթին: Անբաժանելի, լրացուցիչ:

Արեւը հովիտին մէջ: Վերաւոր՝ բայց շմեռնող կրանիթները, որմե-
րուն երգող նկարները, բեղմնաւորութիւնը հողին, սէրը եղէգնութեան մէջ,
գեղեցկութիւնը, որ արեւին կը ծնի:

«Արշալոյսը գեղեցիկ է երկնի հորիզոնին...»

Քրիստոսէ 1380) տարի առաջ: Աւելի առաջ, ետ, ետ: Հիմա՝ փոխ
մէջ տաք, տրոփուն:

Կը շրջինք Գոլոսէումի, Հռոմի տւերակներուն մէջ: Քարը միշտ խո-
սուն է եղած ինծի համար: Թէկուզ վերաւոր, քարդուած: Սիւն մը իր կի-
սաքանդ խոյսկով աւելի գեղեցիկ է եւ արտայայտի: Միշտ կը նախընտրեմ
չլրացած արուեստի գործը: Կարծես ժամանակը վերջին եւ գերագոյն ար-
ւեստագէտն է: Ես, նոյնպէս, կը զգամ, որ պատմութիւնը ամենակենդանի
բանն է: Գիրքերուն կամ քարերուն վրայ չէ միայն, այլ կ'ապրի, միշտ:
Պէտք է լսել: Կունաչ խոսքը կը շնչոյ մարմարին սպիտակ գեղեցկութիւնը եւ
կեանքի յաղթանակին վկանն է: Քայլերուն հետ, մտքերն ալ կը թափառին,
աւելի հեռունները: Եւ շրջապատը կը կենդանանայ:

Եւ կը զգաս, որ երակներէդ ուժ կ'անցնի, կը մեծնառ, կը տարած-
ւիս, կ'իշխես: Արարչութեան թագաւորը: Կր տիրապետես ամէն ինչի, —
անցեալը, ներկան, ժամանակն ու միջոց, կեանք եւ մահ, — տիեզերական
հոլովոյթը կը դառնայ մէջդ եւ շուրջդ, դուն կը դառնաս կեդրոնը: Անկէ
անդին ոչինչ կայ: Միայն կը պղաս գեղեցիկ, երջանիկ, անմահ: Անդին ոչինչ:

Նստած ենք Վիլլա Պորկէզէի անտառը: Ի՞նչ կը պակսի ինծի: Ի՞նչ
բողոքանք: Տարիներէ ի վեր, կորսնցուցած էի անձս: Արաքութիւնը, պա-
տարանաւորութիւններու ցանցը, մեր անողի դարը, արժէքներու շրջա-
մը, եւայլն, եւայլն: Այժմ վերադարձած եմ բուն էութեանս. հողի մեր-
կութեան, այնպէս՝ ինչպէս ստեղծած էր զիս Աստուած: Յնցումներու,
չրգոյններու պէտք չունիմ զգալու համար: Զղայարանքներս վերադարձ են
իրենց մաքրութիւնն ու զգայնութիւնը: Մեծի ու փոքրի, հզօրի եւ մեղմի մի-
ջեւ ոչ մէկ տարբերութիւն: Գեղեցկութիւնը եւ խորհուրդը մէկ են:

Հիմա, ի՞նչ բողոքանք...

Ամբողջ աշխարհի մէջ, ամէնէն հզօր եւ ամէնէն քեզու թիւրով
կապուած եմ միակէ անկի մը, որ միակ զաւակն է: Եւ հետեւ է մարմնով
հիմա մեղմէ: Ան է գեղեցկագոյնը ստեղծագործութիւններու, — կինս ու
ես աւելի երիտասարդ ու գեղեցիկ, ինչպէս էինք, — շարունակութիւնը մեր
էութիւններուն, անմահութեան մեր ապահովութիւնը:

Անոր բացակայութիւնը միակ պակասն է այս երջանիկ լիութեան:
Կրնայի հիմա մեկնիլ, — ոչ մէկ վայր: Որովհետեւ հզօր եմ, յաղթահարած
եմ վախը, կոխած մահուան: Մահուան չեմ իսկ հաւատար: Պէտք է մենք
վերագնահատենք մահուան մեր ըմբռնումը, կրօնականօրէն եւ գիտական:
Վստահ եմ, որ մը պիտութիւնը պիտի փոխէ իր ըմբռնումները մահուան
մասին:

Զուրբ կը յորդի, կը ցայտէ: Ֆոնթանա տի Դրէվի: Արձանները: Զու-
րի ձայնը: Գինին՝ որուն թափանցիկ կարմիրը հրաշտութիւն է եւ բանաս-

տեղծութիւն: Ձայն, գոյն, ձեւ — հիմնական տարրերը, որոնցմով կը կերտուի զեղեցկութիւնը: Եւ Աստուծոյ շունչը, որ կը բխի արուեստագէտէն: Այս պահուստ, այս զինն, իր կարմիրի երանգով, երակներուս փոխանցող իր հեղատութեամբ, արուեստ է ինքնին:

Մէկէն կը դգամ, որ երկար, երկար տանն է, որ երջանիկ չեմ եղած: Ձեմ կըցած ընել այն՝ ինչ որ կը ցանկայի, բլլալ այն՝ ինչ որ սահմանուած է ի բլլալու: Դժբախտութիւնը հայ լինելուն: Ընտրութիւն չունիս, որովհետեւ ոտքիդ տակ սեփական հող չունիս:

Եւ ասիկա զիս կը բերէ բուն նիւթին: Անկեղծ շէի գոյցէ քիչ առաջ: Անկեղծ էի, բայց ոչ լիովին: Ձաւակո միակ սէքս է եւ միակ բաղձանքս: Անոր, կոնքս, ինծի կապուած, անբաժանելի, անմոռանալի մէկ ուրիշ բաղձանք ունիմ, որ հոն էր վաղուց, ծնունդէս, տարիներու ընդմէջէն, երազներուս, պայքարներուս, հացիս եւ օդին խառնուած, ընտանիք կազմելուս, դաւակ ծնանելուս, Հոթեանս մէջ, ամէնուր, ամէն ժամ. — Հայաստանը: Մոռոքս, արիւնս, սիրտս, ուզեզը, ամբողջութիւնս:

Մէկ բաղձանք, մեկնելէ առաջ: Գիտակցութիւնս չգաղթած: Տեսնել երկիրս: Ոչ մէկ հոգեբանութիւն, ոչ մէկ նկատում, ոչ մէկ նախապաշարում: Ամբողջ ժամանակը, արթուն թէ քուն, գիտակից թէ անգիտակից, ուրախութեան ժամին թէ տխրութեան, Եզիպտոս, Յունաստան, Ամերիկա, միշտ, անդադրում, երկվայրկեաններուն հետ հնչող, արեանս շրջանին մէջ, սրտիս տրոփուններուն, երազներուս, տեսիլներուս, սէքերուս մէջ... Հայաստան: Ձայն տեսնել: Կանգնիլ ոտքերուս՝ հողին վրայ: Ձգալ գերանդոն փորձառութիւնը: Միակը, զոր չեմ աղբարծ:

Նորցնել, — ի՞նչ կապ Տա Վինչիի, Միքելանճելոյի եւ Հայաստանի միջեւ: Աշխարհագրականօրէն, ցեղայնօրէն, գործնականօրէն — ոչ մէկ կապ: Բայց գեղեցկութեան զգացումը: Ինծի համար: Տա Վինչիին, Միքելանճելոյի եւ Ֆլորանսը, Իտալիան՝ անբաժանելի էին: Մենուզի, ազբերը, ներշնչումը, ստեղծագործական աւելը: Որքան տիեզերական, համամարդկային, ծնունդն էին հողին, որմէ ծնան, որմէ ստացան կեանքը: Ինչպէս բաժնէ Տա Վինչիին եւ Ֆլորանսը կամ Իտալիան:

Երբ կը գիտեմ գեղեցկութիւնը — կեանքը — երբ այսքան ուժգնօրէն կը դգամ գոյն, խորը ո՞վ է կեցած:

Արդեօք կա՞յ տիեզեքը գիտելու եւ զգալու ալ կերպ մը ինծի համար: Արդեօք կա՞յ բնականօրէն ազգայինի եւ համամարդկայինի միջեւ: Քրն՝ նազատներն են, որ շփոթի մէջ են: Մէկը միւսին հետեւանքն է, ինչպէս թրթռացումը ջուրի վրայ, որ կեղբունէ մը կը սկսի եւ հետզհետէ շրջանակը կը մեծնայ՝ բնագրկելով աւելի լայն հորիզոններ: Հարցը տաղանդի հարց է միայն: Որքան հզօր, շրջանակները այնքան լայն ու տիեզերական:

Վիլլա Պարկէզէի պարտէզին մէջ կան քանի մը արձաններ՝ Կէօթէի, Վ. Հիւկոյի, Ումպերտո Թապաւորի, եւ այլն: Այս յուշարձաններուն տափափութիւնը, ամէն տեղ: Հիւկոյի արձանի բացման հանդիսութեան, Ֆրանսայի դեսպանը՝ Գերմանիոյ դեսպանին ձեռքը թօթուած տանն, կը գոչէ. «Վերջապէս մեր ոյրը առիմօ ձեզմէ, մեր Վ. Հիւկոյի այս յուշարձանը հազար անգամ աւելի տգեղ է, քան ձեր Կէօթէիլը»:

Հետաքրքրականը թանկարանն է, որ հարուստ է ի մասնաւորի Գանոգայի եւ Պերիքիի երկերով եւ վերի յարկի նկարներով:

Հոն է Գանձավայի Փօլին Պոնափարտը: Կը յայտնաբերէ արձանագործի շնորհները եւ սահմանափակումները: Նէօ-գաւսական մտքութիւն մը եւ անոր ընկերացող պաղութիւնը: Պերսիկին աւելի արտայայտիչ է եւ կենդանի: Տողորուած պարոէ յուզականութեամբ, չարժեմով եւ բեմականութեամբ: Ս. Պետրոսի մէջ ամպովանին եւ Ս. Պետրոսի զահը, ապա՝ Ս. Պետրոսի հոյակապ հրապարակը արգասիքն են իր արձանագործի եւ ճարտարապետի տաղանդին:

Վերի յարկը, Ռաֆայէլի «Եղիշէն Էջֆը» եւ դիմանկարներ, Գիցեա-նոյի «Մաքսիմ Եւ պիղծ Սէրը», «Աստղիկ կը կապէ Սիրոյ աչքերը», Պոտի-շեւի, Վերոնէզ, Բուպէնա եւ այլ մեծ վարպետներ:

Միշտ նոյն յամառ զգացումը. — ինչքան տաղանդ, ինչքան գեղեց-կութիւն: Հակառակ աւերներուն, կորուստներուն: Մարդը կրցեր է իրեն ենթարկել նիւթն ու միջոցները, եւ թափանցեր ստեղծագործութեան էութեան: Դարձեր տատուած: Կոխեր ժամանակին: Չեւ ուզեր բաժնուիլ երկե-րէն: Գոյները, ձեւերը, զգացումը կը տանին կոպերուդ տակ: Գողնալու փա-փաքներ: Այժմ կը հասկնամ զեղարուեստի կարգ մը գողերու տենդը:

Մինչ պոռակէն կ'անցնինք, կը մտածեմ. — ասոնք եւս անցաւոր են, — արուեստի մեր տեսած երկերը: Ժամանակի հարց է: Միւս կողմէ, ստեղ-ծագործութիւնը պիտի կանգ չառնէ, նոր երկեր եւ նուաճումներ: Աւազանէն ջուրը պիտի հոսի, քայց միաժամանակ նորը պիտի լեցնէ պակասը: Եւ գե-ղեցկութիւնը պիտի միշտ տեսնէ:

Աւելորդ է բուկ, այցելեցինք Museo delle Terme եւ Պանթէոն: Նոյն հօր տպաւորութիւնը, ինչպէս տարիներ առաջ: Այդ դմէթը հրաշք մըն է: Նկատի ունեցէք նաեւ թուականը:

Վաղը կը մեկնինք Նափոյի: Վերջին պիւնը: Միշտ բաժանման տո-ղը: Ամբողջ օրը շրջած ենք: Մէյ մ'ըն ալ տեսնենք: Գիշերը նստած ենք Վիա Վենետո, գիւնի շէր մեզի ընկեր: Ուղիներով եւ աստուածներով բնակուած:

Ճիողդոյէն Գարափաճճիօ: Մօտ երեք դար: Այս բոլոր հարստութիւ-նը: Ժարտարապետական, արձանագործային եւ նկարչական: Երեք հարիւր տարի յաւերժութեան մէջ: Մարդկային հանճարը հրաբուխներու նման ժայթքումներ ունի: Վերածնունդ: Բառն իսկ քանաստեղծութիւն է: Բնա-շրջման օրէնքներն ու հոլովոյթը ամէն տեղ նոյն կերպով կը դործեն:

Այժմ մեր արդի արուեստը, իբրեւ հակազդեցութիւն, հեռացած է բը-նութենէն. — Գիւլպիգմ, վերացականութիւն, եւ այլն: Հմայիչ փորձառու-թիւն մը: Կրկնութենէ խորշող, որոնող մարդկային հոգին: Լէոնարտօ տա Վինչի եւ Մոնարիան: Փիքասօ, Մաթիս: Տարածքը, ամենակարողութիւնը մարդկային հանճարին:

Ի հարկէ, օր մը, Ճիողդոյի նման հանճար մը, կրկին արուեստը պի-տի վերադարձնէ կեանքին: Այդ է հոլովոյթը: Բոլորովին նոր պարունակով մը, քայց զէպի կեանք: Այդ է հոլովոյթին կեդրոնը:

Էականը փոփոխութիւնն է, վերանորոգումը: Փորձառութեան հաճոյ-քը: Ուրիշ ի՞նչ:

— Արիվեստերչի Բոմա:

ՆԱՓՈԼԻ, ԱՄՍԼՖԻ, ԳԱՓՐԻ

Նափույի եղած եմ երեք անգամ: Երբ եկայ Սմերիկա ուսանող եւ դարձիս՝ Ողիպոսոս, ապա՝ ամբողջ շաբաթ մը երբ եկայ երկրորդ անգամ ու Հասաուտուեցայ Միացեալ Նահանգներ: La Bella Napoli, «Նափուլին տես, ապա մեռիլ», O Sole Mio, եւայլն: Յուդիշ եւ անջնջելի տպաւորութիւններ: Ծոցը, հանգիւսակաց Վեզուփը, Գափրին, — աշխարհի ամենագեղեցիկ բնանկարներէն: Անհնար եղած էր առանց արցունքի բաժնուիլ: Այն ժամանակ երիտասարդ էի եւ ոռոմանթիք:

Այս անգամ կ'երթամ կնոջս հետ, զինք եւս մասնակից դարձնելու գեղեցկութեան:

Հաղիւ շողեկառէն ելած, ազոռները կը շրջապատեն մ'եզ: «Պանդոկ, պանդոկ», «Պայուսակներդ վերցնե՛մ», — կը ջանան ձեռքէդ խլել, — «Ո՛ր պանդոկը պիտի իջնէք», — աղմուկ, քաշքուշ, աներես ճանճերու նման կը փակին: O Sole Mio, — ինչ հեղեանք, — նափույիցիները յայտնի են՝ աներեսութեան, խորհրդայութեան, կոշտութեան եւ նման բաներու համար:

Թաքսի մը կ'առնենք եւ կը հասնինք Վիա Պարթենուպէ, Սանթա Լուչիայի դիմաց Հոթէլ Բոնիթինէթալ: Որքան հինցեր է: Այլու է եւ գրեթէ պարագ: Մուրճերը կ'աշխատին, ներկարարները կը ներկեն, — նորոգութեան եղանակն է: Դժկամակութեամբ, հակառակ մեր կամքին (նախօրօք վերապահած ենք սենեակը) կը մտնենք: Ողիւշի է, կը բանամ դուռը եւ պատշգամ կը նետուինք: Նափույի ծոցը մեր ոտքին: Վեզուփը ամպերու տակ է: Կը կազդուրուինք: Կ'ըսեմ, երթանք Ժովեղերիայ սրճարանը, հոն ժամեր անդուցած եմ, ծոցին դիմաց: Յուշեր, երիտասարդութիւն: Երթս Նոր Ալիսար, յոյսերը: Որոնք թօշնեցան: Յուսախարութիւնները, բայց անցեալը քաղցր է, յատկաւ այնքան յուզումներ: Ի վերջոյ, կեանքը կը յաղթանակէ:

Կը քայլենք սրճարաններու առջեւէն եւ կը ջանանք դանկ սեղան մը, որ տեսարանին նայի: Անհնար է: Ինքնաշարժները մայթերուն վրայ իսկ շարուած են եւ կը խափանեն տեսքը: Մոմփինեայ Վիա Պարթենուպէն եւ Պարաճներան ճեպուղիի վերածուած են, ինքնաշարժները ահռելի տրագոմիաբեւեռ եւ աղմուկով կը սուրան ապականելով օդը: Ալիսարն որքան փոխուած է: Թոմանթիք, գեղեցիկ Նափուլին: Բնութիւնը հոն է, բայց...

Կ'իջնենք Սանթա Լուչիա եւ կը մտնենք Մի Թերէզա ճաշարանը: Հին բերդը, ձկնորսի նուերը, ինքնաշարժի բազակայութիւնը: Քեանդի եւ — անհաճոյ դիտցումը կը չքանայ: Նուապախումբը՝ թէեւ միջակ, երգիչները՝ թէեւ ճաղատ ու թորոյթած, բայց երգը հոն է եւ միջավայր է: O Sole Mio, Torna Sorrento, Santa Lucia: Վիպային աշխարհ մը, որ այսօր կեանքի եւ տրուեստի մէջ յարդի չէ, բայց եւ այնպէս չի մեռնիր: Ամէն էակ շրջան մը, պահ մը կ'իյնայ անոր կոխարդանքին տակ: Կեանքը բուռն եւ զգացումով ապրելու մօտեցում մը, որ անմիջական է, բայց ապրելու հաճոյք է:

Ձուկը համեղ է, ախորժակները՝ բաց: Ուտելը արուեստի վայելք: Մեզ ոչ ոք չի ճանչնար հոս: Հիանալի զգացում: Մտերմութիւն եւ պարզապէս ըլլալ: Զկեղծել, չզգուշանալ, նկատումներ չունենալ:

Նափուլին դմայլծի թանգարան ունի: Բայց կինս մանաւանդ, հնամաշ սենեակէն, աղմուկէն, ճանճի նման փակշռող նափույիցիներէն ուղղակի կը խորշի: Յաջորդ առաւօտն իսկ կը մեկնինք Ամալֆի: Ինքնաշարժը կ'ընթա-

նայ նախորդի ծոցի ափերէն: Մրցասասններ, աղիներ, շոճիներ, կարմիր երգիչներ: Տերեւաթափ եւ աշնան զեռ յամեցող ոսկիներ: Վեղուվր միշտ ամպերու հտին: Կ'անցնինք գիւղերէ, փոքր քաղաքներէ եւ կը մտնենք անպտտմաներու մէջ փորուած ճամբաներ, բարձրէն ծափուն վրայ կախուած: Մթին կանաչը, խորութեան թովանքը: Իտալական գեղեցիկ լեզուն: Ամէն պահ, ամէն անկիւնէ դարձին՝ նոր տեսարան մը: Մեղք, որ նկարագրական գրականութիւնը անցած է: Կր գտնեմ գղացումս, որ կր յորդի, կր կուտակուի եւ ներքին լայնութիւն մը կր ստանայ: Երբեմն չարտայայտուած յուզումները թաղուած պանծերու կը վերածուին: Միայն քուկդ, քու հաճոյքիդ համար: Արուեստ՝ որուն վայելքը քու ս'փականութիւնդ է միայն:

Սորենասլէն կ'անցնինք (կր յիշեմ տարիներ ետ), աջին՝ Գափրին, կը դաւարունք զէպի հարաւարեւելք, Ամալֆի:

Վայրի, տարբային, յանդուլն: Ապառաժ բարձունքներու կողերուն, ծովուն վրայ կախուած: Քաղաքակրթութիւնը չէ կրցած խաթարել ոճը: Երկրաչափական ճարտարապետութիւնը չէ թափանցած դեռ: Մակերեսներ եւ խորանարդներ չեն, այլ յատկանիշ ունեցող տուններ: Գոյն, պատշգամ, թաղարներ ու լուացք, սանդուխներ: Ոչ մէկ չքեղ պանդոկ, ճաշարան կամ խանութ: Գաւառական ոճը պահուած է: Ակնորսներ եւ իրենց նաւերը:

Վերելակը տառանելով կը բարձրանայ ապառաժի մէջէն, աւելի քան քառասուն մէթր: Վերը, Գափուշինս պանդուկը, որ նախապէս եղած է վանք, աշխարհէն կտրուած: Այդ է պատճառը, որ ստիպուած փոքր եւ ժայռին մէջ, վերելակը հաստատելու համար: Կամարները, ճեմաստանը, ծաղիկներու արահետները, սանդուխտը ալ գին եւ մրգաստանը: Իսկական մենաստան մը, մանաւանդ աշնան այս եղանակին: Միայն երկու գոյղ կը մնանք պանդոկին մէջ:

Նախածաշուր կ'ընենք երգիքը: Կողը ծաղիկներու, բաղեղներու, ծառաստանի եւ ցցուող ապառաժները զաւարումով մը կ'իջնեն մինչեւ ծով: Նաւակներ ափին պառկած կամ ջուրին վրայ տարուբեր: Խորունկ խաղաղութիւն մը: Ծովուն յաւիտենական ծայրը, որ քիչ ետք այլեւս պիտակցօրէն չես լսեր: Միջմասները, շիւղերը, հողն իսկ լեզու ունին եւ ծայն: Ամէն ինչ խորհուրդ կը ստանայ:

Ամալֆիի տեսքը այս բարձունքէն՝ բարբարոս իսկ, վայրի գեղեցկութիւն: Ինչ որ այսօր կը փնտենէ արուեստի մէջ, — նախնականը, սկզբնականը, նրբացած եւ թերեկացած ասորներու խորշանքը, — բոլորը հոս են: Այնպէս՝ ինչպէս ստեղծեց մարդը, երբ գեռ աւելի մօտ էր Աստուծոյ:

Շատ, շատ գեղեցիկ վայրերը մեր մոլորակին խաթարուած են, պղծուած: Դուրստն, Ամալֆին հազուապիւս են այլեւս: Պիտի ուղէի հոս աղբիւ: Նկարել, գրել, գրել մանասանդ: Այնքան ըսելիք ունիմ: Առօրեան կպած է օտարութիւն, մտքիս: Եւ ժամանակը կը հատնի: Երազ, միակ անմահութիւնը: Երազս, — մնալ այստեղ ու թափել հողիս, այն՝ որ մահկանացու մարմնիս հետ պիտի շփեմի, բայց ես հոս պիտի չըլլամ գոյն արտայայտութեւ համար: Գիտակցութիւնս — միակ մահը:

Կէս գիշերը անց է: Պատուհանս բաց: Մովը, ծայնը, լիալուսինը: Բարբարոս բնակարար: Պատկեր, որ պիտի մնայ, մինչեւ վախճանը: Ներսը: Մահմանը անդրաթեան: Առաւելագոյնը, զոր կեանքը կրնայ շնորհել: Անկարելի երգը: Գեղեցկութիւնը անմահ: Աւելի ոչինչ: Ասկէ անդին, — սատանան տանի, այնքան անկարելի է: Մէկ անգամ միայն — յաւերժութեան

մէջ — բլրաւ տնձող, մերկ՝ ինչպէս ստեղծեց Աստուած, ահալ տարեւորներն, ժամանակին, միջոցին, գոյութեան: Անպարտելի, անկորնչելի: Մէկ անգամ միայն: Մնացեալը երկրորդ տղազրութիւն է:

Անհունորէն մեծը, անհունորէն փոքրը: Տեւականն ու անցաւորը, կենդանին եւ անկենդանը — պատրանք են: Ամէն ինչ, որ գոյութիւն ունի, կ'ապրի ու չի կորսուի: Տիեզերքը, ամբողջութեան մէջ, մանրէ մը չ'աւելնար, մանրէ մը չի պակսիր: Մահ եւ ծնունդ իրար կը հասաստակշռեն, իրար կը ժխտեն: Մնացեալը մարդկային տրամաբանութեան մէջ է:

Սորենդոյի նաւահանգիստէն կը մեկնի չուկենայր դէպի Գափրի: Էսփրէսո սուրճը, ծոփը, ապառաժներու վրայ քաղած տունները, կանաչի հեղեղը: Ետ ժամանակին մէջ, երբ մանուկ էի: Աւելի բնութեան, թան տան մը խորանային: Գիշերն իսկ՝ տանիքը պակամ, աստղերը կը յօշինք: Աւելի ետ, մեր նախահայրերը, եղբորս քոյրերը, յոյները, քուրդը, հզօր արուեստագէտներ: Արեւ, տարերք, երկիրն ու տիեզերքը: Քարայրներու պատերուն, ապառաժներու վրայ, կրակի, — նկար ու արձան: Եւ մեծ բանաստեղծները: Եզրայուէրներ կենդանի եւ անկենդան բնութեան: Այսօր, դեղաբուսութիւն մէջ կը դիմենք անոնց — նախնականներուն, բարբարոսներուն: Իրենց բնապաշտութիւնը, խորհրդականացումը, վերացականութիւնը: Զորօր գոյներն ու զիծերը:

Պարծես վերադառած եմ սկզբնական սկզբը: Մանկութենէս, պատանութենէս մաս մը, զոր կորսնցուցած էի: Արուեստի մաքուր գագաթումը, բանաստեղծականութիւնը: Տրամը, — շեղած եմ ատաքելութենէս, ինքզինքէս: Կրանուիլ անօրեայ, անցաւոր գործերով, թէկուզ օգտաւէտ: Դառնալ գերին ժամանակին, միջավայրին, քնկերային պարտադրանքներուն: Շեղիլ ատաքելութենէդ: Փայտեղ միակ պատենութիւնը յաւիտենականութեան մէջ: Կարծես Ուիլ Տիւրանդ ճիշդ է, պայմաններն ու միջավայրը կը կերտեն մարդը: Ունենալ քաջութիւնը կոտորելու կաշկանդումները եւ հետեւիլ անձի: Արդեօք քաջութիւնն է, որ պակսեցաւ մեզի: Թէ գոնեւ էր արդէն ճամբան եւ վատութիւն պիտի բլրար խուսափելը: Դժուար է պատասխանել: Չգիտեմ հարցումը յատուկ զննել: — պարտականութիւնը թէ զեղեցկութիւնը: Արուեստը: Նորարարը ըլլար կենեքդ վերատին ապրիլ: Խորութեամբ զօրացած, վերադառնալ երիտասարդական յանդգնութեան եւ տեսիլներուն: Միւս կողմէ, ստեղծագործութիւնը միշտ կը գտնէ ճամբան զէպի արեւը, լոյս աշխարհ: Արեւելքները կրնան խթան ծառայել: Առասպա՛ծ եմ միշտ ընդհանրացումներէ: Հանճարներ ինքնասոյզ, մենութեան մէջ, — հանճարներ՝ կենեքի յորձանուտին, քաղաքականութեան, պայքարիներու մէջտեղ: Ստեղծագործութիւնը կը պոռթկայ, հակառակ պայմաններուն: Ներսը, ամէն ինչ հոն է:

Շուքեանալ խորիսի կը նետէ Գափրիի Marina Grande: Ձկնորսներու ցանցերը, նաւակներու օրօրուող կայմերը, գիւղական արճաբանները: Իրաւրու վրայ նստած գունաւոր հիւզակները: Ոճը. — ինչ որ կը փնտռենք, ինչ որ կը կորսնցնենք, ինչ որ կը հմայէ մեզ: Թարմութեան գագաթում մը: Կը բարձրանանք: Կը հասնինք փոքրիկ հրապարակը, պալատականը դրկած կը դիմենք Քրիստինա Թապուչի պանդոկը: Նոյեմբերի վերջերն ենք եւ խճողում չկայ:

Ըստ մեր սովորութեան, պայուսակները կը ձգենք ներս եւ կը նետուինք դուրս: Գտնելու կղզին: Կրպակները, նեղ փողոցները, ինքնաշարժի րացակայութիւնը: Պարտէզներուն մէջ կորած վիլլաները: Գաւառական, գիւղական ոճը: Ոչ մէկ արդիական, մեր մեքենա-երկրաշփական դարը յիշեցընող կառոյց: Ամէն անկիւնէ ծովը: Հովը սաղարթներուն մէջ: Պոնտրոն, Պոնտրոն: Դեռ տարական մարդկայնութիւն մը կայ: Ամերիկա, նոյն չէնքին մէջ, դրացիներ, իրարու քովէն կ'անցնինք նեղ միջանցքներու մէջ եւ ոչ իսկ բարիլոյս մը: Կատարեալ օտարներ: Մեկուսացում մը, ալլամեր-ժութիւն իսկ: Կը վերադառնանք դողորմիկ արժէքներ, դուրս կորսնցուցած ենք եւ որոնք կեանքը հաճոյքի կը վերածեն: Կրկին քիչ մը բարդ հարցումը. — ի՞նչն է քաղաքակրթութիւնը: Գտնալով իմութիւնը կարելի չէ կասեցնել, վերանորոգումը անխուսափելի է եւ քաղձալի: Եւ սակայն, արտաքին աշխարհի (բնագիտական, քիմիական, թեքիք) յառաջդիմութեան եւ մարդկային ներքին աշխարհի յեղաշրջման խոտոր համեմատութիւն մը: Մէկը անհաւատալի — եւ անբաժանելի — արագութեամբ կը սուրայ, միւսը՝ շատ աւելի դանդաղ եւ տուժելով: Արդիւնք՝ չփոթը, բարդոյթները: Մեյամադձոտութիւնը:

Ինծի համար դժուար է եղած ճշդել, թէ մարդկային փափաքները ինչքանով կրնան ազդել քնաշրջման ընթացքին: Բնութիւնը իր ճամբան պիտի շարունակէ՝ համաժայն տիեզերական օրէնքներուն, անկասարար մեր քաղձաքէն: Միւս կողմէ. — մարդկային հանձնարը իրեն ընթացած է տարբերքի ուժերը եւ ունի կարելիութիւնը կեանքի ընթացքին աղօղելու: Գիտնականներ կ'աշխատին սնունդի եւ ուժի (էներգի) նոր աղբիւրներ ապահովելու, մարդկային քնակշիւթեան աճը շափաւորելու, օդի բարեխառնութիւնը հակալուելու, արուեստական սերնդազորութեան եւ այլ հիմնական խնդիրներու վրայ: Գոյութեան մեր բովանդակ ըմբռնումը եւ կենցաղի կերպը կը փոխուի: Ընտանիքի, սիրոյ, հաւատքի, հայրենասիրութեան, բարոյականի մեր հասկացողութիւնները արդէն հիմնովին փոխակերպուած են: Նոր աշխարհ մը: Անոնք՝ որ զին սերունդին կը պատկանին, կ'ափսոսան, դժբախտ են, դժգոհ են: Բայց դարու զաւակները արդէն կ'ապրին նոր աշխարհի մը մէջ: Հիփփիներն ու եիփփիները մեռնող աշխարհի ախտանշաններն էին:

Նոր մարդկութիւնը իր իտէալները երկնելու վրայ է: Թատակ չեն անոնք դեռ, բայց մերինքն անպայման տարբեր: Աւելի լաւ, աւելի գէշ: Ոչ ոք կրնայ պատասխանել:

Մէկ հիմնական սկզբունք անփոփոխ է: Կեանքը կը տենչայ շարունակականութեան: Բանաստեղծօրէն՝ տեւականութեան:

Զիս այս պահուս հետաքրքրողը գեղեցկութիւնն է: Արուեստը: Անանց անոր կեանքը անըմբռնելի է ինծի համար: Կոմ, տառապանք միայն: Գիտնականներու որոնումներուն եւ գիւտերուն մէջ ոչ մէկ մաս ունի գեղեցկութիւնը: Եւ իտէալը:

Մարդ միայն հացով չի կրնար ապրիլ: Աշխարհ մը, որ գեղեցկութեան զգացումէ զուրկ է, անտանելի վայր մը պիտի ըլլար:

Կը գիտեմ Գափրիի բարձունքները եւ ոտքիս տակ անսահման կապոյտը: Ամպը, որ զլիսու կը զպչի: Կը մտածեմ, — որքան կ'աճապարես, միտք իմ: Ասոնք հոս էին ի սկզբանէ եւ պիտի ըլլան: Պատմութիւնը ցոյց կու տայ, որ պատերազմներու, փուլումներու, յեղափոխութիւններու, քարոզին իսկ՝

յաջորդած է գեղեցկութիւնը: Ստեղծագործութիւնը: Յարութիւնը: Նախ՝ նիւթականը, պիւտը, բնական ուժերը, ապա՝ ստեղծագործութիւնը: Մարդկային հոգին, կեանքը, տեւականութիւնը, առանց անոր անհնար են: Տեւականութեան, — եթէ նախընտրէ՞ք՝ անմահութեան, — տարազը գեղարուեստն է:

Փոթորիկ է կղզիին վրայ: Սեւ ամպեր, մոլեգին քամի: Օդոտոտ կայսեր պարտէզն ենք: Մտերը կը դարարուին, ապառաժներու բարձունքէն մթին անդունդը վախ կ'ազդէ եւ կը կախարդէ: Տարերքի ժողովներու նը պեթովէնեան համանուագ է կարծես: Օդոտոտ կայսրը, հմայուած կը դիրին գեղեցկութենէն, Ք. Ա. 29ին, Գափրին առաւ Նափուլիէն՝ փոխանապետի Իսքիայի հետ: Օդոտոտի Պարտէզին քնանկարը, գեղեցկագոյններէն մէկն է: Վարը, կը նայիս զոյգ մը ապառաժներու վրայ, որոնք Գափրիի յատկանշներէն են եւ կը կոչուին «Ճարալիսնի»:

Օդոտոտէն ետք, իր յաջորդը Տիբերիոս կայսր իր դահլէ փոխադրեց Գափրի և՛ հոնկէ իշխեց Հռոմէական կայսրութեան, Քրիստոսի թուական 27-37: Տիբերիոս կղզիի վրայ կառուցանել տուաւ տասներկու շքեղ վիլլաներ, որոնց շքեղագոյնն ու մեծագոյնը Villa Jovis, որուն փլատակները դեռ կը մնան կղզիին, եթէ չեմ սխալիր, արեւմտեան կողմը, Տիբերիոս լեռն բարձունքին:

Նեղ փողոցը կը բարձրանայ ոլոր մոլոր: Պատերէն կախուած բազիլները, ծառ, ծաղիկ: Կարմիրերես գիւղացի կիներ: Միշտ ժպտուն: Ձեռք ձեռքի սիրահարներու նման կ'ընթանանք: Երիտասարդացած ենք, մտքով, մարմնով եւ զգացումով: Որովհետեւ, ո՛չ միայն միջովայրը մաքուր է եւ կազդուրիչ, այլեւ վերադասած ենք հին սէրերը, լաւատեսութիւնը, թաղուած դանձերը: Մեր իսկութիւնը: Ինչպէս ուկին, աղամանդը հողի ընդերքին մէջ, նոյնը՝ մարդկային էութեան: Վերջապէս յաղթած ենք սղեղութեան, դաին, ոճիրին: Կր ընչենք Աստուծոյ շունչը: Օղը, Զուրը, սնունդը, մտածումները, մարմինները — աղնիս են, մաքուր, գեղեցիկ:

Պարտէզներ, պուրակներ, սպիտակ տուններ, որոնց մէջ կեանքը քերթուած պէտք է ըլլայ:

Ճիշդ այս է, որ կը ցանկամ: Հանդանակս, կրօնս: Ապրիլը ըլլայ արուեստ, քու իսկ ստեղծագործութիւնդ: Կենդանի, ամէնօրեայ, տեւական: Ոչ թէ թանգարաններու, ներշնչման պահերու, մասնաւոր առիթներու միայն: Ի վերջոյ, կը զգամ, որ կը հասնիմ իմաստութեան, մանաւանդ՝ գեղեցկութեան: Որովհետեւ անոնք ամէն ինչի մէջ են, ամէն վայրկեան են: Մեր զգայարանները, բանականութիւնն ու զգացումն են թերին, անկատարը: Վեր, աւելի վեր: Վարը՝ Գափրիի նաւահանգիստը, խորունկ կանաչ, որ հեռզհեռէ մթին լեղակի կը վերածուի: Նուերը՝ իզձերու նման՝ դէպի անծանօթ թեւելու պատրաստ: Նահանջող ալիքը կանաչին: Բարձրացող ապառաժները, բարբաբոս եւ պիւրային երկինքը:

Վեր, հովերուն վրայ: Թեւեր ունենալ:

Մենթէ Տիբերիոս եւ Վիլլա Ժովիսի աւերակները:

Ինչպիսի դիրք, գեղեցկութիւն, մաքրութիւն: Եւ ապականութիւնը կայսեր, որ երբեմնի այս շքեղ պալատին պատերուն մէջ տեղի կ'ունենար, այս բարձունքին, այս մաքրութեան մէջ: Հակասութիւնը կեանքին: Բարեբախտար, ապականութիւնն ու ոճիրները կը մեռնին, կը չքանան: Կը մը-

նայ անմահ բնութիւնը. — մշտանորոգ ծառերը, հովր, ծովը, նախորդի ծոցը եւ վեղուվր: Տիեզերքի շքեղագոյն տեսարաններէն մէկը: Հոս, Տիւրքիոյ տնտեսութեան վերեւ, կաթնով եկեղեցիներ մատուցած է եւ խաչը կը տիրապետէ:

Ձորա-հինգ մղոն բարձրացած ենք հոս հասնելու համար: Անմոռանալի փորձառութիւն մը: Բոխանդակ կեսնքս եղած է պայքար մը անդունդի ձորակայանութեան — եւ թովանքին — ու միջոցի մէջ նետուելու եւ թեւելու միջեւ: Տեսակ մը էլ-կրիքոյն արուեստ: Ռէմպլանդեան դարձում՝ դպաստաւորին եւ ողնաւորին միջեւ: Հոս, Մոնթէ Տիւրքիոյ բարձունքի՝ կը զգամ բախումը բաժնորէն: Վարժ կապոյտ-կանաչ անդունդը, վերջ՝ անհունը եւ կեանքի հեթանոս, բարբարոս սէրը: Գեղեցկութիւնը միշտ մեղաւոր է:

Ապրիլ հոս: Անցրնել գոյութիւնը: Պարտելով, նկարելով, կարգաւորով ու գրելով, պայլելով: Հեռու կեանքին յորձանքէն: Հեռու ժողովուրդէն: Առանց բախումներու, ցաւի, քուսթեան ենթարկուելու: Ազգապաշտեան մէջ: Արդեօք ա՞յն է, որուն կը բաղձայ հոգիս: Ա՞յն է երջանկութիւնը: Ուսանց համար՝ այո՛: Արուեստագէտներ, գիտնականներ խորասուզուած իւրենց աշխատանքին մէջ, ստեղծագործած են, երջանկացած: Հանճարներ աշակէս: Թերեւս իտէալ կենցաղն է: Արուեստագէտը արդէն, միշտ պայքարի մէջ է. — իր նիւթին, միջոցներուն, արտայայտական կերպերուն: Միշտ դրուած է խնդիրներու առջեւ: Իր նպատակները եւ անոնց իրադրութեամբ իտական ձեւապատկերներ են: Եւ կ'ըսեմ, խառնուածքի հարց է: Ես պիտի չկրնայի: Տեւական խաղաղութիւնը, միջոցները, հակասութիւններու եւ պայքարներու բազմակայութիւնը, — պիտի ժանձրոյթի մատնէին գիտ: Յետոյ, անհնար է ինծի համար ժողովուրդէս հեռու ապրիլ, հայերէնը չըսել: Այս միակ լեզուով շարտայայտուիլ:

Ուստի՝ addio bella Capri:


Ետ՝ դէպի կեանքի յորձանուտը: Ետ՝ դէպի ժողովուրդս:

Սղանաւը կը դառնայ միջոցին մէջ եւ քիթը կ'ուղղէ Արեւմուտք: Դէպի Նոր Աշխարհ: Նորոգուած, կորսուած յուշեր եւ զգայնութիւններ վերադառնալ:

Ուրիշքին, գիտնականներ լինելուն: Երկրէն բարձր, շատ բարձր, անընդունակ մէջ: Ամէն ինչ պայծառութիւն է: Նիւթը, ձեւը տարբարութեամբ են: Միայն պայծառութիւն, Անհունը:

(Շար. 9 եւ վերջ)

Բ. ԿՐԻՆԵՆԸ



ՃԵՃՏԵՐ ՄԹԻՆ ՈՒ ՄԵԾԱՇՈՒՔ

«Որքան կրկնեմ քիչ է... Գրականութիւն մը արեան երևոյթ
է, միտք, խելք, սէ, տրուեալ ըլլալէ առաջ:

«Գրականութիւն մը ժողովուրդ մըն է: Որքան կրկնեմ քիչ
է նորէն»

(«ՀԱՄԱԳԱՏԿԵՐ» Ա. ՀԱՏՈՐ)

Յ. ՕՇԱԿԱՆ

I

Գրականութեան պատմութեան ընթացքին երեւան եկած հարցերը ուղղակի կամ անուղղակի ծնունդն են գրագէտին մէջ գոյութիւն ունեցող արուեստագէտ խառնուածքին, արեան կապին ու մարդկային շագախին: Յաճախ իրարու բախող, բայց խորքին մէջ զիրար ամբողջացնող այս երեք էստարթերուն երեւելի ու անեւրեւոյթ շեշտերուն բնական ընդհուդումէն կը ծնի Բանը:

Շատ մը այլ հարցերու կարգին, գրականութեան պատմութեան մէջ, սերունդէ տերունդ միշտ օրակարգի հարց դարձած է ազգային յղացքը: Արդիւնքը, անշուշտ, միշտ կախում ունեցած է հարցը արծարծողներուն հորիզոնական կամ ուղղահայեաց մօտեցումէն եւ այդ մօտեցման մակարդակէն:

Օչականեան «արեւմ կրեւոյթ» տարզը փոխոտփայութիւն, հոգեբանու-

թիւն, նկարագրի աշխարհաբնկալում եւ աշխարհադրոնէրում մըն է այն գրագէտին մօտ, որ ջղային գրութեամբ բաւարարուող անձը չէ միայն, այլ խուզարկու, սուզումի եւ թռիչքի ընդունակ միտքն է միաժամանակ: Կարճ ու կլորունկ՝ այն մտաւարակամբ, որ օրկանական կերպով հաղորդ է միջազգային գրականութեան առօրեայ հարցերուն, հեռու ու մօտ անցեալին, ապագայի հաշտոյն ծագող բանավէճերուն:

Աւելին. այն մտաւարական-արուեստագէտն է առիկա, որ կը տարբարւնէ հարցերը եւ իր համոզումներուն, մըտքին ու ջղային գրութեան լուսարձակին տակ առնելէ ետք զանոնք, կ'ընդունի տեղաւորութեանը, իր էութեան հաղորդը միայն, կը մերժէ իր ներքին կլիմային ներհակ տարրերը, ապա կը ձգտի ու կը փորձէ վեր դալ այս բոլորէն, հասնիլ նոր հանդրուսններու ու դասնալ ճեղքի ձայն:

Բայց կայ նաեւ միւսը, խորութենէ զուրկ այն «տիպար»ը, որ էր ընելիքին պակասը կը կարծէ քողարկել ազգային մերկապարանոց նիւթերով:

1971ին լոյս տեսած Կ. Փռատեանի «Ջրայց» հատորին մէջ, Հեղինակին եւ Վ. Օլականի միջեւ տեղի ունեցած զրոյցի ընթացքին, այս «տիպար»ին մասին արտայայտուելով Վ. Օլական կ'ըսէ Հետեւեալը.

«Մեծ ցնցումներէ, պզտիկ քղայնութիւններէ ու պատահական շնչատ խանութիւններէ ծագում առած՝ արւեստական գրգռումի մը մէջ ապաստանած, հիմ գորգի մը պէս թանկարժէք, քայց անգործածելի, քաղաքականացուած տեսա, մշակութային մարզի մէջ թափիկ ու թանգարանային, հետադարձ մարդանման կրկնէս, նախնայինի մէջ դիրքւած ու օրաթերթի մէջ փաթարած մտաւարական, խման, մետաղ-քունդ ամաթէօր վարժապետ...»:

Ուղիղ մէկուկէս տասնամեակ առաջ, «Յեղափոխութեան համար» հատորի էջերուն, նոյն իրականութեան դէմ կը դժգոհէր Պ. Սնապեան.

«Ջգացիմք, որ շուկէ կը պակսէր գաղափարներուն, կիրք կը պակսէր բաներուն եւ նախադասութիւնները գործութեանէ զուրկ էին ու վարակիչ յատկութիւններ բնաւ չունէին...»

«Կարօտներ ունէինք, կարծր ուղեղներ տեսանք միայն իմացական կայունութեան: Նորութիւն կը փնտռէինք, նուիրագործուած յիմարութիւններ մերկայացուցին մեզի»:

Տխուր իրականութիւններ ուրուանկարող Օլականի եւ Սնապեանի դժգոհութիւնները հիմք ունէին, ունին անկասկած:

II

Գրականութիւնը քաղքենիացնող վըտանդին դէմ ծաւալող Օլական-Սնապեան քննադէմը, որ վերջերս արծարծուեցաւ, եւ այդ վէճին առիթով ցոյց տըւած Պէրպէրեան-Թէօֆօրեան աշխուժու-

թիւնը խանգաղաւոր քան մը ունի: Եզրակացութեան մը յանգումին չափ գեղեցիկ է գրական այս կայտառութեան ըստեղծումը, որուն սիրոյն պէտք է ցնցըւինք, վառելի գրագէտն է, որ կ'առաջացրնէ գրական եռուզեռը:

Արդարեւ, «Հայկականութեան հարցը գրականութեան մէջ» նիւթը մերօրեայ տագնապ մը չէ, Ըսենք անմիջապէս, թէ Հայկականութիւն ըսելով չենք հասկընար նոյնիսկ յանձնառու Հայեցիութիւն մը, որովհետեւ Հայութիւնը տառցական հանգամանք մը չէ, տարազ մը չէ, զոր հաղնիս, զարդ չէ երբեք, այլ ծնունդ, խառնուածք, ինքնուրոյն դիմադրիչ, Հոգեբանութիւն, ջգային դրութիւն ու լինելութիւն է, դարերու ընթացքին հորովման ենթարկուած ու մշակութային ժառանգութեան ակօսներով կազմուած մարմին է եւ արեւն, ապրելու, դիտելու, զգալու եւ դրսևորելու ոճ:

1914ին, «Մեհեմեթի առաջին թիւրքացող եւ թերթին դիմադրիչը բնութագրող «Մեր հանգամանքը» խմբագրականին մէջ, Հայ Հոգին լուծեան մատնած դատակնիքի բեկման անհրաժեշտութիւնը բնորոշելէ ետք, մեհեմեթականութիւնը կ'աւելցենք.

«Կ'ըսենք. առանց Հայ Հոգւոյն, չըկայ հայ գրականութիւն եւ հայ արւեստ: Ամէն մշտնադիտ արուեստագէտ՝ իր ցեղի հոգին միայն կ'արտայայտէ»:

Յեղին Հոգին արտայայտելու սրբազան խնդրութեան նուիրուած մեհեմեթականները «մեզ կը պահանջենք արուեստին կատարեալ անկախութիւնը՝ չեփոքելով հանդերձ, նոյնքան կրքով կը կառնին Հայ Հոգիին, որովհետեւ անոնք գիտակից էին, որ Հայոց պատմութեան վերջին վեց դարերու խաւարը շատ չողեր թաղած էր Հայ Հոգիին, մեծաշուք յեշտեր, որուն յայտնագործման անդամադրեցին իրենց որոնող երիտասարդութիւնը:

III

«Ազգակն»ի էջերուն լոյս տեսած յուլէ մը մեկնելով Վ. Օլական արծարծեց

«Գրականությունը հայկականության մեջ հարցը: Այդ առթիվ, Պ. Մնասկան ստորագրեց «Մաշտոցի սկզբումն» խոսքի մասին հոդվածը, որում արձագանքեց երիտասարդ ժայռի մը՝ Ն. Պէրպէրեան, որ ընդգծեց մասնաւորաբար միջին սերունդի ներկայացուցիչ եւ Վ. Օշականի, եւ Պ. Մնասկանի մերթ իրարու ձայնակցող եւ մերթ թախող կարծիքներուն ու տեսակէտներուն զրգարատանքները:

Հետագային, «Բազին»-ի խմբագրութիւնը մասնաւոր նոթով մը վերոյիշեալ գրութիւնները փոխադրեց պրական ամսագրի էջերուն: Թղթածրարը բացող խմբագրական իր նոթին մէջ, «Բազին», արձանագրեց եւ «Երիտասարդին մատնած անհանգստութեան» ու «ճշմարտութեան» տեսակէտներուն խոտմուխով շափաղկոտութեան» պատճառած գոհունակութիւնը, կոչ կ'ուղղէ իր աշխատակիցներուն:

«Հետագայ էջերուն կը մէկտեղեմք խնդրոյ առարկայ գրութիւնները, յուսալով, որ ուրիշներ եւս, ի մասնաւորի երիտասարդներու խաւէն եկող ուրիշներ նոյն շահագրգռութեամբ մտնեան այս կամ այլ հարցերու, ընդունին, մերժեն, հաստատեն, կարկանդակ, համբաւ քանան, ըլլա՛նք ինչպէս յաճախ մագթած է այս հանդէսը:

Նոր երիտասարդներուն ուղղուած «Բազին»-ի կոչը նորերէն առաջ արձագանգ տուաւ հոռւոր Ամբրիկայի մէջ, Մ. Թէօֆօլեանի մօտ:

Արդարեւ, «Հայրենիք» օրաթերթի սեպտեմբերեան վերջին թիւերուն մէջ, յաջորդական երեք խմբագրականներով Թէօֆօլեան անդրադարձաւ «Երիտասարդին» գիտնալ, թէ ինչով կը նմանիմք ուրիշ գրականութիւններուն, բան թէ ինչով կը տարբերինք անոնցմէ՝ Վահէ Օշականի տեսակէտին:

Այս առթիվ, Մ. Թէօֆօլեան կը գրէր՝

«Վահէ Օշական կապանք մը կը նկատէ գրագետ մարդուն (այս պարագային հայ գրագետին) ազգային ինքնութեան

ցոյացումը գրագետի իր գործին մէջ. եւ եթէ նոյնիսկ չի դատաւարտեր հայ գրագետին հայկականութիւնը՝ սակայն հարկ կը տեսնէ, որ եմքական «ազատագրութիւն» անկէ, մարդ եւ գրագէտ տնհատի իր անկախութիւնը կարեւոր պահելու համար»:

Մինաս Թէօֆօլեանի յիշեալ յօդուածին զխաւոր մտածումներէն մէկը ա՛յն էր, որ ժողովուրդներու գրականութիւնը կ'ենթարկուի եւ կը զարգանայ նոր պայմաններու ու ազդակներու լուսարձակին տակ: Այլ խօսքով՝ կարելի չէ գրականութիւն մը անխառն իրեն ծնունդ տուած ժողովուրդին հոգեբանութենէն, նկարագրէն, ի՛ր պատմութեան ընթացքէն: Ի վերջոյ, գրականութիւն մը ժողովուրդի մը կենսական զգացմանն է նաեւ, «արեւմտեան երեսօյնք»ը, որմէ խոսափիր կ'ենթարկէ մահացում, ա՛յնքան՝ որքան ինք իր գոյնը յստակ ու անխաթար պահելու տուող գրութեամբ կ'զգեսցումը գրականութեան պարագային:

Ուստի՝ կարելի չէ անտեսել «Ինքնաշարժ» հոդուածը, որի ժողովուրդի կենսական, ինչպէս նաեւ այն քաղաքականութիւնը, որմէ դարձած են եմքական կամ ազգայնական մտաւոր մեր գործունէութեան, ինքզինքնըզնիւ միջնա փառքերով զար:

Մեկնելով այս ճամբարութենէն, Մ. Թէօֆօլեան կը հասնէր այն եզրակացութեան, թէ հայ գրականութեան պարագային, պէտք է «հայտնի» եւ այլ ժողովուրդներու միջեւ ստեղծուած գուգահեռով մը կշռել մեր վստասկը, իրագործումներն ու կարելիութիւնները՝ եւ ըստ այնմ հասնիլ հզօրացումի: Մնաց որ, տարբերութիւնները հարստութիւն են եւ՛ ազգային գրականութեան, եւ՛ համաշխարհային գրականութեան հաշտին:

Պ. Մնասկանի «մեր ազգային կառոյցէն ազատագրումը հարստացումը կը նշանակէ» տեսակէտին ձայնակցելով՝ Մինաս Թէօֆօլեան կ'ուշադրէ՝

«Դժուարեաններուն հասկնալի է, ժխտումը՝ ոչ: Գերազնահատել մեր արժէքները՝ մեղադրելի է, երբեմն նաեւ ծիծաղելի. սակայն գնահատութեան շա-

փանիշ ունենալ ուրիշները՝ նոյնքան սքալիս ու անտեղի, անարդար եւ մերժելի:

« - «ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՄ»՝ անաւանիկ բուն մեկնակէտը մեր գրականութեան վաստակին, եւ փորձաքարը գրական ըստեղծագործութեան բնոյթն ու էտաւարները արժեւորումի երթարկելու որեւէ փորձի»:

IV

Մակույթ, ազգային կառոյց, միջազգային գրականութիւն, նոր գրող, ճշմարիտ արուեստագէտ, բանաստեղծութիւն ու փիլիսոփայութիւն, ոգեղինութիւն ու հոգեբանութիւն...

Արդարեւ, գրականութեան կարեւորագոյն էտաւարները հանդիսացող այս նիւթերէն կը կազմուի գրականութեան հիւսիսը: Գրականութիւն կոչուող աշխարհին տարրական չափանիշներն են ասոնք: Անանջատելի: Միաժող:

«Նշմարներ արար գրողներու համագումարին առիթով» խորագրեալ մեր յօդուածին մէջ նոյն մտահոգութեամբ որուագծած էինք հետեւեալ միտքերը.

«Այսու գոյութիւն չունին արուեստը արուեստին համար եւ արուեստը մտորդուն համար հասկացողութիւնները: Գրական երազարարը այսօր ողորդած է մարդուն տագնապները, պարտութիւնները, խաղկամեծները, անկարելի յաղթանակներն ու անկարագրելի անհեթեթութիւնները գրանւորող, մարդկային ներաշխարհի բազմազան, բարդ ու վրիտ կացութիւնները պարագրկող գրականութեամբ մը:

«Խրափանչիր գրող, գրող ու մարդըլլալէ առաջ անդամ է ազգի մը: Ան կը կռուի հայ գրող, անգլիացի գրող, կամ արաբ գրող...»

«Մեկնելով այս իրողութենէն, գրողը մաս կը կազմէ մշակոյթի մը: Անոր վրայ տեղացող մէկ օգակն է իմք: Ժառանգորդն է այդ մշակոյթին, որ ճշմարիտ գրողին գերագոյն եւ անկարելի հարբատութիւնն է:

«Ազգային որեւէ մշակոյթ միայն է այն անընդհատը, ուր գոյութիւն ունին

մեծ ու փոքր ներկայութիւններ: Այսինքն՝ տեղացին եւ լուսաւոր արքանեակներ: Իրաւ գրողին կը մնայ ընտրել լուսաւորները, սերտել զանոնք, իւրացնել գեղեցկութիւնները, ապա անոնց վրայ գումարել այլ երկնակամարներէ, ուրիշ ազգերու անընդհատներէն քաղուած անծանօթ հարստութիւններ եւ մայր գումարին վրայ բարդելով իր ինքնուրոյն ճայնը՝ դառնալ յաւելում:

«Այս տեսանկիւնէն դիտած, իւրաքանչիւր նոր գրող, դառնալու համար ինքզինքն արդարացնող իրաւ նոր գրողը, պարտաւոր է իր մշակոյթին վրայ յաւելում արձանագրել եւ չբաւարարուիլ այդ մշակոյթի պաշտամանն հսկող պահակի պարտականութեամբ»:

Ասոր լուսաւորն ապացոյցներէն կարելի է յիշել լիբանանցի երիտասարդ բանաստեղծները, որոնք կերտելով հանդերձ գրագէտ անհատին անսակարկ ազատութիւնը, չլքեցին մշակոյթի ոգին, այլ՝ նոյնինքն ուղղապարհեան շնորհիւ նոր արժէք մը ներմուծեցին մշակութային ժառանգութեան, զարգացում մը բերին նախորդներուն վրայ, և արարական գրականութիւնը փրկեցին ինքն իր վրայ ամփոփուելու ու կղզիանալու վտանգէն:

Լիբանանցի նոր բանաստեղծներէն Ատոնիս, ծնած անպատահելիներուն ժառանգարտայաւունքով կ'ըսէ.

«Մշակոյթի պահպանում կը նշանակէ քաղաքում, այլ խօսքով՝ մահ. մինչ գրականութիւնը հանգիստ ու վախճան չ'անցնող շարժումն է, անծանօթ ու անծայրածիր անընդհատը, անկարելիին անհաւատ ծալքերը պնդող յեղափոխական կիրքն է. լիբանանցի ի խնդիր մերժին անկէզ նեններումը, եթէ կ'ուզէ ներքին մշտաբարբոճ տենդը»:

Մենք կը հաւատանք, որ հայը նաեւ օրըստօրէ կը զարգանայ, կ'անցնի զանազան մակարդակներէ, ինչպէս կը զարգանայ արուեստագէտը հայ գրագէտին մէջ, կը ծլարձակի, կը ճիւղաւորուի ու կը գեղեցկանայ թաւեայ նոր շրջաններով, ձայնաւոր գոյներու շղարշներուն խաղերով՝ գրագէտ ծառին ֆիզիքական առողջ-

ջութեան զուգահեռ ընթացող սովորային համեմատութեամբ, որ, իր կարգին, անուղղակիօրէն կ'ազդուի իր մէջ այլափոխուող հայ-մարդուն յուզումներէն, ցնցումներէն, տալանայներէն եւ պատրանաթափութիւններէն, այսինքն՝ ջրային ողջ գրութեան եւ արեան կլիմայական կացութիւններէն:

Ու կը հաւատանք դարձեալ, որ սերունդէ սերունդ, հանգրուանէ հանգրուան զարգացող, հարստացող ու այլափոխուող հայ արուեստագէտի հոգին դիտակից է այն ճշմարտութեան, ըստ որում՝ մշակոյթէն անդին անցնելու մէջ կը կայանայ գրադէտի իր կոչումը: Վասնզի գրադէտը մարդաբան է նաեւ, այն պատճառաւորութեամբ, որ անցեալն ու ներկան իրր զբաղակցութիւն ունեցող տեղադրւոյն է ինք, որուն համար անցեալն ու ներկան միջոցներ են զինք բարձրացնելու ապագային, այսինքն՝ անծանօթին որորտներուն: Հոն է նորը, խորախորհուրդը, որուն անդամագրութեամբ է գրողը: Ընթարիտ արուեստագէտը, ճշմարիտ հայր, ճշմարիտ մարդը...

Այս այն ճշմարիտ գրադէտն է, որ գիտակից է, թէ իր կոչումը կը կայանայ իր ազգային ողբերկութենէն ու մշակութային հարստութենէն անդին անցնելուն, ապագան ներկայի վերածելուն եւ կանխելուն մէջ:

Ու հոս է գագաթնօրէն, որ զարտուղի գրադէտները կը Ժնին հինէն, կը սնանին անոր ամենախոր արմատներէն, խորագոյն ակերէն, ապա նոյն կիրքով կը լքուին քայքայել մշակոյթի ծանօթ ու որբացած ուղիները, եւ կը բանան իրենց ուղիքն:

Նման օրինականցութիւն մը Ժխտական իմաստ շունի երբեք: Ընդհակառակը, մշակոյթին, այսինքն՝ հինին հաշտոյն արձանագործած գրականութիւնն է ասիկա, առանց որուն կարելի չէ գարգացնել նոյնինքն մշակոյթը:

Այսպէս են բոլոր բացառիկները: Մեծ բացառիկները: Ապացոյց... Գ. Դուրեան, Դ. Վարուժան, Մ. Մեծարենց, Ե. Զարենց, Ե. Օշական եւ բազում բն-

աւրիւսներ, որոնց արժէքը կը կայանայ մշակոյթին վրայ անոնց բերած իրաւութեան, խորութեան, զարստագութեան, հարստութեան, ողբերկութեան, զարգացումին եւ անկրկնելիութեան մէջ:

Ասոնք ընդօրինակելի են — իբր ոճ ու կառոյց — բայց անկրկնելի — իբր ինքնագործ աշխարհ —: Հոգեկան, փիլիսոփայական, խառնուածքային բացառիկ գոյներու եւ շնորհներու համապարփակ մոլորակներ են, Ժամանակը յաղթահարած եղակի գէմբեր:

V

Մինչ Գ. Մնացեան իր շեշտը կը դնէր հեռանալ նմանութիւններէն, ընդգծել տարբերութիւնները, գտնել սեւակեան բացատրութեամբ «օտարի շնչից գանգանելի» տարրը եւ ըստ այնմ շնշուորել զայն, անդին՝ Վ. Օշական կը գրաւորէր բաշխութիւն հակադիր մտածումներ...:

«Աւելի կարեւոր է գիտնալ, թէ իմնչով կը նմանինք յարիշ գրականութիւններուն, քան թէ իմնչով կը տարբերինք անոնցմէ: Մեզ կը պատկանինք եւրոպական գրականութեան մեծ ընտանիքին ու պէտք է վարժուինք մեզ մեզ տեսնել անոնց ակնոցով, ընդհանրօրէն անոնցմէ...»

Համալիսարհային նուաճումներուն պէտք ունեցող հայ գրադէտը, անկասկած, պէտք ունի նաեւ իր մշակութային Ժառանգութեան:

Հասկնալի է, որ ստեղծագործութիւն կը նշանակէ փայլատակում, վասնզի իրաքանիւր իրաւ ստեղծագործութիւն անակնկալ ու անկրկնելի լուսավառում է, ինքնուրոյն գոյութիւն մը, ընդգծելի զարտուղութիւն մը եթէ կ'ուզէք, եւ որ ինքն իր մէջ կը բովանդակէ իր զաւանանքը, սահմանները, հորիզոնները, իր լոյսը եւ իր լինելութեան ու ապրելակերպին տրոփը: Նման գրութեան մը ամբողջական ընկալումը կը պահանջէ մեզմէ գիտել այս բոլորը իր հորիզոններէն ու միայն իր սահմանները կենդանացնող ուղիներուն հաշտ հեռաւորութիւններէն:

Մական ռտեղծողործութեան հասնելու ճամարիս ուղին հայկականութենէ ազատագրումն ու այլ գրականութեան նմանիւր չէ: Ի վերջոյ, իւրաքանչիւր նմանողութիւն հետեւողութիւն է, որ գրականութիւն չի կրնար ըլլալ երբեք:

Հայ ժողովուրդին եւ իր պատմութեան ողբին խորթ ու թշնամի է ժողովուրդ հայկականութիւնը, շովինիզմը, ինչպէս խորթ է նմանողական գրականութեան գաղափարը արուեստի էութեան...

Մաքրամաբուր հայութիւնը...

«Ու բարեւի մը փոխան»

Հաղորդարիք եւ տալի...

Բարեւի մը փոխան հաղար բարիք տալու մեծարենցեան ոսկի ցանկութիւնը, ներքին այս ծարաւը կտրելի է արդեօք հայու նկարագրային հարստութենէն գաղափարող այլ վարկածով մը բացատրել:

«Ըլլայիցնեբու հարքին, շարքին իւրաքանչիւր տողին եւ իւրաքանչիւր տողին մէջ մի բառին մէջ ներկայ է հայ ժողովուրդը, հայ հիւղին ու հողին ապրնջականութեան շողարձակումը...

Այս ոճով արտայայտուած հայկականութիւնը խորհուրդն գետի մը պէս կը հոսի անտեսանելի ուժականութեամբ, ազդին ապրումներուն, իրաւութիւններուն, ժառանգուած գանձերուն բովանդակ փայլով եւ թրթռումով...

VI

Վահէ Օշական կը գրէ.

«Պզտիկ ազգ եմք, ուրեմն պէտք է զիջումներ քննեմք մեծերու ու ծայրագոյն յանդգնութիւնները փորձեմք, որպէսզի զիջանք»:

Թանգզնութիւններ ու դեռ նոյնիսկ ամէնէն զարտուղի յանդգնութիւնները փորձելու ու փորձէն անդին անցնելով՝ գրականութիւնը անկալուն եւ անփախճան յանդգնութիւններու հանդիսարանի մը վերածելու բաղձանքը արդար գտնելով հանդերձ, քիչ մը դժուար է հասկնալ Վ. Օշականի պէտք է զիջումներ քննեմք եզրափակութեան գրգռատնայանքը:

Որո՞նք են այս մեծերը եւ ինչո՞ւ դիմանալու հաշտին զիջումներ ընելու... այս զիջումը: Արդեօք մեծ ըսելով Վ. Օշական կը հասկնայ հարապակեան (Անգլիայ, Գերմանա, Գերմանիա, Եւայլն) դուք աւելցուցէք ռուսական, ամերիկեան, միւշհե յունական դասական գրականութիւնները...

Հաւանաբար: Բայց տարտամ է զմեծ ազգերու գրականութիւնն անոր սահմանումը: Ծղծարտութիւն է, թէ ազգերը կ'ըլլան մեծ քաղաքակրթութեան ու քաղաքականութեան ժարգերուն մէջ թիւով ու քանակով: Բայց զմեծ ազգերու մեծ գրականութիւն...» Երբեք:

Վերոյիշեալ տուեալները կը նպաստեն խնդրոյ առարկայ ազգի գրագէտ գաւազներուն զարգացման ու գանձը համախարհային լայն շրջանակներուն ծանոթացնելու գործին, բայց գոյութիւն չունի օրինադիրքի վերածուած, սահմանուած, իբր մոտէլ ընդունուած միւշազգային գրականութիւն, այլ՝ կան ու կը մնան մեծ գրականութիւններ, մեծ գրողներ, մեծ արուեստագէտներ:

Տակաւին. կան ու պիտի մնան միւշազգային շափանիչով, դեղարուեստական զարտուղի եւ եղակի բարձրութեամբ ազգային մեծ գրականութիւններ, ազգային մեծ գրական գործեր, վասնզի, կրկնենք դարձեալ, թէ գեղարուեստական իր արժէքին համար միւշազգային լայն շրջանակներու ծանօթ եւ բաղձադան ազգերու ընթերցողները, քննադատներն ու մտաւորականները իրմով գրադեցուցած իւրաքանչիւր մեծ գործ նաեւ մեծ է ազգային տեսանկիւնէն:

Թուրթոյ, Տոսթոյեւսկի, Պոսլէր, Շէյքսպիր, ու դեռ ձայրան, Թակոր, Իւերթ, Քամիւ, Եւայլն, եւ ազգային գրադէտներ են, եւ համամարդկային:

VII

Մշակոյթը միայն անցեալը չէ:

Մշակոյթը անցեալէն ժառանգուած եզակի հարստութիւն չէ, այլեւ ներկան է, անցեալէն խզուելու գործո-

զուրկան տարերքը, արդիւնքն ու ապագան, որովհետեւ մշակոյթը կը դառնայ անշունչ եւ անշարժ ներկայութիւն, այսինքն՝ դիակ ու թանդարանային իր, երբ կը դադրի ստեղծագործելէ, այլ խօսքով՝ ստեղծագործուելէ, այլափոխուելէ։ Այս տիտանիկէն դիտած, զանցեալէն խզուելը անհրաժեշտութիւն է եւ դրական քայլ մը։ Ժխտական է իրրեւ իմաստ եւ դրական իրրեւ արդիւնք, որուն կարելի չէ հասնիլ առանց խորունկ տարողութեան եւ ուժակոտորեան։ Կարճ ու կտրուկ՝ մշակոյթը մարդը կերտած շաղախը չէ միայն, այլեւ՝ անոր շրթներուն միայն փթթող կամ երակներն ի վեր խուժող ու գրչէն ժայթքող լաւան։ Անաւարտ այլափոխութիւնը, անվախճան թռիչքը, անյայտ խորհուրդները լուսաւորող, արեան ողեղինութիւնը դարգացումէ նուաճում առաջնորդող յարաւարժ եւ բազմերանգ տեսիլներու գոյութիւնն ու լինելութիւնը։

Ի վերջոյ ստեղծագործական իւրաքանչիւր պահ մշակութային կայսրութեան գէժ բացուած յեղափոխական ափք մըն է։ Որովհետեւ նորին հասնելու առաջին պայանը կը կայանայ դուրս չալալէն՝ այսինքն՝ ծանօթ ու նըւաճում ուղիներէն, օգտագործել ապագան լուսաւորող մշակոյթ-անցեալին մշտափառ լուսարձակները, ապա այդ լուսարձակներով յատկացնել խաւարը։ Եւ տեսիլներու լոյսին տակ բանաձեւել ու հաղորդակցիլ ապագային, այսինքն՝ անծանօթին հետ ու նուաճել զայն։

Այս աննատում-խզումը պէտք չէ շփոթել ուրացման հետ, ընդհակառակն, ուրոյն խառնուածքով զինուած գրագէտին մօտ մշակոյթի արարման պահն է ասիկա, սրբազան՝ որքան մշակութային ժառանգութիւնը, վասնզի ապագան միշտ աւելի հարուստ է եւ անհուն, քան նըւաճումը անցեալը։

Հարկ է մշակոյթին մօտենալ իրրեւ իրագործուած փորձերու հաւաքածոյ ու լաւագոյնս սերտելէ ետք պայթեցնել անցեալ-մշակոյթը, անոր առջեւ բանալ նոր ու արտասովոր հորիզոններ, առանց

որուն կարճ է մշակոյթին կեանքը, որովհետեւ կայունացումը նախերանգն է անխուսափելի մահուան, մինչ դրականութիւնը յարաւարժ ու մշտանորոգ, բազմերանգ ու բազմաձայն կախողական հրախաղութիւն մըն է անծանօթ։ Ու մըշակոյթը պայթեցնելու զծով կատարուելիք առաջին քայլն է վար առնել իր ուսերէն սրբազան պատմուճանը ու դիտել զինք իրրեւ փորձառութեան բազմազան նմոյշ-նուաճումներ պարունակող ցուցահանդէս։

Իւրաքանչիւր ստեղծագործ ինքնիշխան մըն է, որ կը ձգտի դուրս գալ մշակոյթին — անցեալ — սահմաններէն, բայց ո՛չ ողիէն, վասնզի մշակոյթի սփռումը, կլիման, աշխարհաշայնացքի որակը ներկայ է արեւսապէտի հոգեման ու խառնուածքին, դիտակցութեան ու անգիտակցութեան մէջ։ Բնազգային ու գիտակցութեան իւրաքանչիւր կացութեան ընթացքին մեզ ուղեւորող երեւելի ու թաքուն կողմնացոյց-ղեկն է մշակոյթը, մեր արեւը, որուն գէժ անկարելի է քաշել ու քաշողները, զայն ուրացողները այսինքն կը գատապարտուին անորոշութեան, հասարակութեան, ու նմանողական, պատեհապաշտ կարծիքներու պատեհապաշտ անակնկալներու հարւածներուն տակ թաղուելու ճակատագրին։

Արդարեւ, մշակոյթներու հաղորդակցութիւնը նպատակ է որեւէ ուղղի գերականութեան, երբ խնդրոյ առարկայ ազգը իր մէջ կը ձուլէ դուրսէն եկած ընտիր միտաղը ու այսպէսով կը հարստանայ իր պարունակութիւնը։ Իսկանք այլ մշակոյթներէ եկած տարրերն ու բնութիւնները ընդլայնուելի է, այլափոխել եւ ոչ թէ աճոր մէջ ընդլայնուելի։

Պարզացնելու համար մեր միտքը սենք, որ գոյութիւն չունի քաղաքացիական մտածողութիւն, ի վերջոյ մարդ անհատը իր ջղային ու բանական կազմութեամբ կը դառնայ բանական ու աստուածային կարողութիւններով հարուստ եւ անբան հակներէն զատորոշուող կենդանի, երբ հարցի մը առնչութեամբ կը ձեւաւորէ

իր բնույթին եւ էութեան հաշտ գիրքորոշում: Թէ այդ գիրքորոշումը կրնայ ըլլալ զբաղման կամ ժխտական՝ երկրորդական հարց. էականը այն է, որ այդ գիրքորոշումը ծնի ներքին խոր ու իրաւակց է եւ հանդիսանայ Թարգմանը գիրքորոշող արուեստագէտին ընկերային, հողերտնական, փոխութիւնայական, ազգային ու մարդկային շահախնդրէն արարւած մարդ արարիչի արարչագործ խառնուածքին:

Լիբանանցի նորարար եւ ամէնէն յեղափոխական բանաստեղծներէն Աստուխ, որ կր նկատուի արարական գոտական բանաստեղծութիւնն ու մշակոյթը տակնուվրայ բնող «անգղ»ը, հակառակ անոր, որ բանաստեղծութիւնը կ'ընդունի իբր անաւարտ պատարազ, շարունակական կազմաւորում, միշտ որոնման կարօտ մնացող աշխարհի որոնում»՝ չի կրնար ձերբազատուիլ իր ազգային էութենէն՝ ինչպէս բոլոր իրաւ արուեստագէտները եւ իր «Յառաջարկն արարական բանաստեղծութեան» անուն գործին մէջ ամենայն լրջութեամբ քննարկման նիւթ կը դարձնէ ազգայինն ու միջազգայինը արական բանաստեղծութեան մէջ:

Ահաւասիկ հետաքրքրական հատուած մը Աստուխի եղբակացութիւններէն.

«Ան՝ որ կը խօսի գիրքերու ձայնով, օրէնքներով ու քերականութեամբ՝ այդ ձայներումն ձգած օթեկ արձագանգներէն գաւ ոչինչ կը փոխանցէ մեզի: Սակայն ա'ն՝ որ կը խօսի իր ժողովուրդի եզրույն խորքէն այցնիող իսկական ազգայինութեամբ ձայներով՝ մեզի կը փոխանցէ միւլիմաւոր ձայներ, եւ մեր իւրաքանչիւրիս մակաւորագիրը կը քարոզարցնէ մարդկութեան մակաւորագրի մակարդակին: Այս իսկ պատճառով կը շարժէ մեր հոգւոյն խորագոյն ծալքերը: Այս է առաջնութիւնը իւրաքանչիւր մեծ բանաստեղծի, որ իր բանաստեղծութեամբ կը շօշափէ մարդկային կ'ընդունի խոր ու իրաւակց է եւ հանդիսանայ Թարգմանը գիրքորոշող արուեստագէտին ընկերային, հողերտնական, փոխութիւնայական, ազգային ու մարդկային շահախնդրէն արարւած մարդ արարիչի արարչագործ խառնուածքին:

տեղծի, որ իր բանաստեղծութեամբ կը շօշափէ մարդկային խորութիւնները, ուր մէկընդմիջտ կ'ընդհանրուին բոլոր շնչաւոր արարածները եւ համայն մարդկութեան ու իր անձին միջեւ տեղի ունեցող այս հանդիպման ընթացքին կ'անցնի անհատը: Ասոր մէջ է բանաստեղծութեան փառքն ու առանձնաշնչաւոր հանգամանքն եւ այս իսկ պատճառով բանաստեղծը կը դառնայ իր ազգին ու դարուն ձայնը միաժամանակ, որովհետեւ հանձնարը մէկը չէ, այլ բազմաթիւ»:

Բազմաթիւ հողիներու, ցեղին ձայներու համագումարը հանդիսացող եզակի արուեստագէտին նորութեամբ է, որ կը զարգանայ մշակոյթը:

Այս մասին արտայայտուելով՝ Կ. Զարեան կը գրէ.

«Մշակոյթը ստեղծուում է երբ ժողովուրդի ոգին ամուսնանում է սուրբ երկրի, հողի հետ:

«Մշակոյթը դրսից չի կարելի առնել, ինչպէս առնում ենք աղբիւրն ու մշակութային որոշ արժէքներ, իսկապէս, երկու սէնթ արժէք չունեն, եթէ նրանք սերտորէն կապուած չեն երկրի, տեղական ենթագործարարական հետ»:

Իսկ քանի մը էջ անդին՝

«Համեմարը մա է, գերազանցապէս մա. ով կարողանում է երաշխի մերշնչումովը արթնացնել ցեղի մէջ նրա քննաքնն հարազատ կարողութիւնները, որոնց վրայ դարձրել զգալը էին քաջիւր»:

«Երկիրներ եւ աստուածներէն արտադրուած վերի մէջերումը զարգացումըն է մեհենական Զարեանի մեհենական համոզումներուն, բոտ որում՝ չիք հայ արուեստ «առանց հայ եզրույն», որ ուրիշ բան չէ, եթէ ոչ սիդիֆեան տարբերով ալեկոծ հայկական ոգեղինութիւնը՝ ազատութեան հանապազօրեայ հրապարակութիւնը...»

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆԸ

ԻՍԱՀԱԿԵԱՆԱԿԱՆ

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ



ԵՐՐՈՐԿ ԱՐԱՐ

Շրջան մը, յատկապէս 1922ին, բուլեիկները յատուկ գիրով ու պատգամներով Հայաստան հրաւիրեցին արտասահման հաստատուած գրական կարկառուն դէմքերը, Օշականը, Շանթը, Աղբալեանը, Տիկին Զապէլ Եսայեանը եւ Կոստան Զարեանը:

Առաջին երեքը չխանդավառուեցան հրաւերով: Զարեանի «Անցորդը եւ իր ճամբարան» անուն գործէն ծանօթ է մեզի Օշականի արամազրութիւնը.

«Պոյսից մեկնելու ժամանակ, Օշականը տեսնում էր. —

«Ձիւմ կարծես, որ հոն մեր գրականութիւնը հասկնամ. յամենայն դէպս զմա՛, տես... գրէ՛, կը մտածեմք»:

Տիկին Եսայեան եւ Կոստան Զարեան անմիջապէս ճամբայ ելան: Երկրորդը երեք տարի հաջորդապէս գրեց Երեւանի ճգնիմ միջավայրէն», Եսայեան Սիւլեյմանի մէջ պարպեց «Վերջին բաժակը»:

Օշականի, Շանթի եւ Աղբալեանի պարագային, որքան մենք գիտենք, բուլեիկները չկրկնեցին իրենց հրաւերը, բայց Իսահակեանի առիթով յուսահատութիւն չճանչցան:

Ու պատահական չէ շորս տարիներու վրայ երկարաճգնող այս յամառութիւնը: Բուլեիկները զլուէին, թէ որու հետ է իրենց դուրձը: Ու զեւտենք այլևս, որ գրական չէր իրենց յամառութեան շարժառիթը, այլ կը թելադրուէր հնթակային յարմարողական բնութենէն: Գաղափարական հրապարակումները հարուածելու մեքենայութեան համար յարմարագոյն անձերէն մէկն էր ան իրենց մտածումին մէջ, ու ճիշդ այդ պատճառով՝ «Ե՛կ, Ե՛կ, Ե՛կ»:

Տանք՝ որը հեղ մը արամազրութիւն ու կեցուածք փոխող եւ նստիւն բանիւ «եկ-եկ» շնորհին արժանացած Իսահակեանի այդ յուսադրիչ շնորհ-նեւէն մէկ-երկու նմոյշ. —

1923ին գրուած նամակի մը մէջ՝ դովք բուլեիկներու մասին.

«Մենք փութալիս թելի տակ կ'ամրանանք, կը շատանանք, եւ 50 տարւոյ մէջ կը հասնինք մեր տեղեւորին, մեծ Հայաստանին, միմչեւ վաճ, ու Մուշ, բուլեիկները միայն մեզ է նպաստաւոր, այսինքն՝ ճերկայ բուլեիկները, որ վերիկոտութիւն իշխանութիւնն է»:

Իսկ տարի մը հաջորդ.

«Թող Ե՛կ մի հայ շնորհ, Ե՛կ քանի բուլեիկներ կայ, Հայաստանի հո-

դի վրայ մի քիզ հող կ'աւելնայ, երբե'ք. դեռ պիտի խլեն: Ղարսը, Իգդիրը կորած են, մինչեւ սովետների անկումն օրը»:

Նամակի մը մէջ կը կարդանք.

«Ինչո՞ւ եւ հարուածում բոլշեւիկներին, եւ մասնաւորապէս հայ բոլշեւիկներին, որ մեծ մասով մեզից պակաս հայրենասէրներ չեն»:

Եւ քիչ ժամանակ անց, երբ դեռ իշխանութեան գլուխը նոյն բողշեւիկները կը գտնուէին, կը կատարէ սա հաստատումը.

«Իմ սիրած հայրենիքում վիտում են հիմա մօր տեսակի քարքարոսներ, խամեր (զոհիկ), որ ծաղրում են բոլոր սրբօրիւնները, ծաղրում են ամէն բան. եւ պզծում են մեր բոլոր լաւ բաները»:

Նման օրինակները բազում են եւ բազմազան: Ու միշտ այսպէս եղած է Խաչակեան, ե՛ւ է՞ս է, ե՛ւ է՞ն: Շփոթաւար միտք մը:

Ըսուի հաւանաբար, որ քաղաքական տեղատուութիւններու եւ մակընթացութիւններու դիմաց մարդու մը ժառանգ հակառակեան մեղքը, ենթակայէն աւելի՝ վերադրելի է արտաքին ազդակներուն, նոյն մակընթացութիւններուն եւ տեղատուութիւններուն: Անտարակոյս:

Բայց միայն քաղաքական երեւոյթներու առջեւ չէ, որ Խաչակեանի մէջ ապրած են երկու իրերամերժ Խաչակեաններ, այլ ժամանակն ու պայմանները յաղթահարած յաւերժական նուաճումներն անգամ ան ենթարկած է ժամանակաւոր իր տրամադրութիւններուն եւ ներքին յեղեղուն պայմաններուն:

Ռուբէն Դարբինեանին գրուած 15 Սեպտեմբեր 1923 թուակիր նամակին մէջ, Խաչակեան կը գրէ.

«Բոլշեւիկները գրական մարդիկ չունեն: Մի Զարեկ ունեն, մի գանացի, որ բոլշեւիզմի քեւով կը քոչի եւ նրա եետ էլ պիտի յօգս ցնդուի»:

Նոյն թուականին եւ նոյն օրերուն՝ Վ. Ահարոնեանին գրուած նամակին մէջ կը կարդանք հեղեանքով յի սա ակնարկութիւնը.

«Ես օգտուելով ձեր կարծիքներից, մնում եմ իմ ըմբռնման վրայ, միեւնոյն ժամանակ որքազրելով ինձ՝ գիտեցաւ որ կատարեալ բան կարող է տալ, օրինակ, եզ. Զարեկը միայն...»:

Այս նամակէն տարի մը առաջ, Մոսկուայի մէջ լոյս տեսած էր Զարեկի բանաստեղծութիւններուն երկատարեակը, եւ ասկէ առաջ ինկող եօթը տարիներու ընթացքին նոյն հատորները լեցնող բանաստեղծին պրակային գրքոյկները.—

«Երեմ Երգ տխրադալուկ ազգեան» (1914)

«Կապուտայեայ հայրենիք» (1915)

«Տանթէական առաջադի» (1916)

«Երիտման» (1917)

«Առմա» (1918)

«Ամբոյնները խելագարուած» (1919)

«Ողջակիզուող կրակ» (1920)

«Էմայլէ պրոֆիլը ձեր» (1920)

«Փռզնայիմ սլոուի» (1920)

«Երեմ Լատիպուս» (1920)

«Տաղարան» (1922)

Եւ թերթերու մէջ ուրիշ բանաստեղծուածութիւններ, որոնց մէջ թէ՛ ամբողջական եւ թէ՛ հատուածային գոհարներ, կան՝

«Սումա»
«Լուսամիտի պէս ազգիկ»
«Ինչպէս երկիրս ամսփոփ»
«Շամիրամ»
«Երբ էս հին աշխարհը մտայ»
«Հագար ու մէ վէրք ես տեսիլ»
«Ես իմ ամուշ Հայաստանի»
«Մահաւամ տեսիլ»

անունները կրող կամ տողերով սկսող քերթուածները եւ որոնց այս կամ այն ձևով, բայց անպայման հանդիպած էր Իսահակեան, երբ Ձարենցը հզանաճ կ'որակէր եւ դայն կը համարէր ո'չ աւելի ոչ պակաս բուլղեւիկ բանաստեղծ մը, որ «բոլշեւիզմի քեւով կը քայի եւ նրա հետ էլ պիտի յօդս ցնդուի»:

Իր նամակը գրած տարիներուն (1923), Իսահակեան կը հաւատար, որ բուլղեւիզմը չուտով «պիտի յօդս ցնդուի», բայց գրական իր ո՛ր չափանիւշին ապակներով կը գրէր արդեօք, որ վերոյիշեալ գործերուն կամ առանձին բանաստեղծութիւններուն հեղինակը կրնայ երբեքիցէ «յօդս ցնդուի»:

Հոս բնաւ կարելիոր չեն բուլղեւիկներուն ապագան դուշակող իր տրականները, քննութեան հարցը միւսն է, միայն գրականութեամբ գրադած եւ յիսուին մօտեցող տարիքի մը Ձարենցը հզանաճացներու իր մոլուցքը, Ձարենցին մէջ միայն բուլղեւիկեան բանաստեղծ մը տեսնելու ողբալի իր դատումը:

Ձարենցի կարծիքներուն դէմ հանուած փոխդէժի տրամադրութիւն մը զժողովը չէ՛ ենթադրել այս կեցուածքին ետին: Իր յանդաւոր կարծիքէն («Ելիցի, գրուած վեցնեմիս») առաջ, դեռ 1922ին, «Ի՞նչ պէտք է լինի արդի հայ բանաստեղծութիւնը» անունին տակ տուած գրաւոր դատախառնութեան մէջ, անդրադառնալով Իսահակեանին, Ձարենց կը գրէր.

«...Այդ ինտելիգենտների ամառը երգիչը դեռ միմիայն օրս էլ ժընեւաւմ երազում է Այազեագի փերիները...»

«Բայց մենք այստեղ հարկադրուած ենք ցուցանանք, որ գրական նոր սերնդի վրայ Իսահակեանը չունի ամբիպական ազդեցութիւն եւ նրա արեւելաւորութեան միակ օղակը հայ նոր պոետիայի հետ — վ. Տերեմանի ստեղծագործութիւնն է»:

Այդ օրերուն, Ձարենց բազմաթիւ թշնամիներ ունէր, իսկ Ձարենցի թշնամիներուն մէջ բազմաթիւ էին Իսահակեանի բարեկամները, որոնք փութացին անպայման իմացնել իրեն՝ նոր սերունդին վրայ հանձնարական ազդեցութիւն չունենալու իր իրականութեան շարենցեան ախտաճանաչումը, որ, կը կարծենք, հրահրեց սրտին Ձարենցին դէմ անհոգի չարախօսութիւններ ընող այդ փոքրոգի կերպը:

Իսահակեան իր այս «կարծիք»ին վրայ հաստատ շմեաց հարկաւ Հեապատյին, երբ յիսունը շատոնց անցած էր ու հասած եօթանասունը՝ չէին գին, իմացանք, որ բարձրօրէն կը զնահատէ եղիչ Ձարենցը եւ առանձին համարում մը ունի մասնաւորաբար 1925էն առաջ ստորագրած անոր գործերուն հանդէպ: Այսպէս.

«Այդպէս ես նրան նախաջուր էի նախ քան նրա հետ ծանօթանալը: Ես կարդացել էի (վեցնեմիկի վամբը տտանում էր հայկական ամէն մի հրատարակութիւն, որ էլ որ լինի) Ձարենցի երկատարածակը, որ տպուած էր Մոսկուայում, 1922 թուականին: Ինձ վրայ մեծ տպաւորութիւն թողեցին «Տան»

թէական առասպելքը, եւ «Տաղարան»ը, լիրիկական մի շարք բանաստեղծութիւններ, մանաւանդ նրա հայրենասիրական բանաստեղծութիւնը՝ մեծ խորքով, «Եւ իմ անուշ Հայաստանի»ն: Իմն համար, առանց չափազանցութեան, բոլորովին արժեկտիւ կերպով կ'ստեմ, որ հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծութիւն չի գրուած հայրենասիրութեան տեսակէտից: Դա եզակի, անմիջական բան է: Նայնիսկ կարելի է ասել, որ եւրոպական, համաշխարհային գրականութեան հայրենասիրութեան ժանրի բանաստեղծութիւններ այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրուած բան գտնէ ես չեմ յիշում:

«Պէտք է ասեմ, որ Չարենցը հակամերձեան սոցիալիստական էպոխայի ամենամեծ բանաստեղծն է հայ գրականութեան մէջ եւ նա քաղաքացիական կերպով ազդեց հայ գրականութեան վրայ, մանաւանդ Ռիթմի, լեզուի, տաղաչափութեան, պոետիկայի կողմից»:

1961ին, Երեւան հրատարակուած «Յիշողութիւններ Եղիշէ Չարենցի մասին» անուն հատորին մէջ կարդացած ենք այս գրութիւնը, որ Հասանաբար գրուած է իր մահէն ոչ շատ առաջ, Չարենցի (նամակին առիթով, 1957ին):

Ինչպէս պարզ կ'երևի, մեր այն ենթադրութիւնը, որ Չարենցը «զանազան» ցած իր օրերուն Խաչակեան ծանօթ էր անոր գործին, հիմքէ զուրկ չէր. «Արդէն ես նրան ճանաչում էի նախ քան նրա ծանօթանալը»: Կը ճանչնար, բայց չէր վարաներ անոր արժէքին, էութեան, մեծութեան անյուրիւր բաներ գրելու:

Ձմռանը, ու կրկին: Քաղաքական տարուբեր երևույթի մը առջեւ չենք գտնուիր, կը գտնուինք կայուն գործի մը, Չարենցի ժառանգութեան մնայուն մէկ շարքին դէմ յանդիման, որուն մասին երէկ այնպէս կ'արտայայտուէր Խաչակեան, այսօր՝ այսպէս, շմռնալով նոյնիսկ հղերաբախտ բանաստեղծը պակեւի «հակամերձեան սոցիալիստական էպոխայի» հետ, որ նախկին տրամադրութեան համաձայն «յոգս տիրեի ցնդուէր» եւ նրա հետ էլ Չարենցը:

Ասիկա, սակայն, արժանաւոր ժարգու վայել կեցուածք չէ:

Ասիկա իր մտերիմ անձին, խղճին ու խղճէն աւելի մեծ ուժի մը՝ պատճառեան հանդէպ պատասխանատու մարդու մը վերաբերում չէ:

Ասիկա Խաչակեանականութիւնը ինքն է: Որ տասը կամ քսան տարիներու հեռավորութենէ մը յիսուն տարիկանին թուղթին յանձնած մտածութեան որում ազդեցութեան հակառակ բաներ բախու ողբերգական աւանդութեան մը պիտաւոր հերոսը կը մնայ մեր մէջ:

Չարենցի մասին «կարծիք» յայտնած տարիներուն, Խաչակեան խօսած է նոյնպէս Համաստեղի, Օշականի, Թշկատիցի, Վարուժանի, Սիւսանաթոյի, Մեծարենցի եւ Տէրեանի մասին, եւ իր խօսքը, ցաւօք, միշտ բխած է Չարենցը «զանազան» միեւնոյն ոգիէն:

Ըստ իրեն.

«Համաստեղը ունէր լուր բաներ, բայց միշտ խակ, մանկամիտ եւ երեխայութիւնն ու լուրջը իրար խառնած, անասունների էին հագեցրածութիւն»:

Իսկ Օշականի «Շահապազ» անուն պատմութիւն մասին.

«Օշականի «Շահապազ»ը համ լուր է, համ գէշ: Ամենից առաջ շատ սուտ բան կայ, ոչ-հագեցրածական: Երկրաբան՝ դժուար է կարդացում, շատ է սյրկուած լեզուն, ոճը: Նոր անկիւններից նայած՝ անտախտագ է: Բայց

այս լոյսերի հետ՝ ստուերները շատ են, եւ ասլոյ գրականութիւն չէ. յիշատակ, բիրեղացած չէ, եւ մանաւանդ անկեղծ չէ. մեմն է փոտաւրիստնե-րին, որ ասում են, թէ գրականութիւնը անկեղծ չպիտի լիի. այլ կեշծ, արուեստական, այսինքն՝ արուեստով շինուած»:

Տարի մը ետք (1925), Դարբիններն գրուած ուրիշ նամակի մը մէջ, «Շահագործի մասին զեղչուած կը գտնենք նոյնիսկ հիւսիսէն» զգուշացնելով քա-տինը:

«Պարսաւանի գրականութեան ինձ գայրացրեց... Երկինք հանել Օշա-կանի թռնագրովի «Շահագործ» իր անքակտեղ հանգոյցով. — ելքով, ան-քակտեղ միւթով. ո՞ր է տեսնուած, որ այդ մարդը էգ դառնայ վշտից, իր անհասկանալի ճոճով աւ լեզուով, եւ ոչ միայն անտեսել իմ «Լիլիթ»ի գեղեցի-կութիւնը, այլեւ թեթեւ արտով խաբանել այն, որպէս անյայտ ճանաչու-թիւն Կուպրինի «Աւալամիթ»ն, որ տարբեր բան է»:

Համատեղի, առաւել եւս Օշականի մասին Խաչակեանի կարծիքնե-րը, մանաւանդ «Շահագործ» բնկալելու իր կերպերը առանձին ոչ մէկ ար-ժէք ունի: Պէտք է համար: Նման բարդ յղացումներն ու հոգեբանական սու-ղումներով կարկառուած զեղչկութիւնները միշտ հեռու մնացին Խաչակե-անէն, որ հեքիաթայինին սահմաններէն քիչ անգամ համարձակեցաւ դուրս գալ եւ յեղափոխական խոյանքներով կարելի ներդրումէն: Եւ փոխարէն՝ ա-ւանդական կաղապարներու մէջ աւանդութիւններ լեցնելով շահագործ շա-րունակ:

Ձարնցի, Համատեղի եւ Օշականի գործերը թեթեւ արտով կշռելու այս թեթեւութիւնն աւելի ահաւոր է վերոյիշեալ նամակներէն վերջինին մէջ գտնուող սա խոստովանութիւնը:

«Պարսաւանի Թիկատիկցիի անունն է տալիս: Ո՞վ է դա, որից գը-րեթէ բան չեմ կարողացել... Վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Խաբրեղոյցի մի անմշակ վարժապետ՝ ինձ ուսուցիչ»:

Թիկատիկցիին բան մը կարողացած չըլլալու փաստը համագոր է հար-կաւ միայն մը, ու միայն իրեն դարձեալ, Թիկատիկցիին գրեթէ բան չկարողա-ցած մարդուն, Խաչակեանին, եւ այս անգամ գրականէն բոլորովին տար-բեր պատճառներով:

Նման խոստովանութիւններ եւ խոստովանութիւններուն յաջորդող նոյնքան փրաւորական մեկնաբանութիւններ մարդ պիտի չներէր ո՛չ թէ բա-նաստեղծի մը, այլ սովորական հայ մարդու մը անգամ:

Թիկատիկցիին մասին մէջըրերուած խօսքը առնուած է 1925ին գրուած նամակէ մը, Թիկատիկցիին նահատակութիւնէն տաս տարի ետք:

Արդ՝

Հայրենասէրի անուն ունեցող եւ մեր նահատակութեան սուգը երդած բանաստեղծի մը ներքին՝ է նահատակ իր զրչեղքօր գրականութենէն գրեթէ բան կարողացած չըլլալու այս խոստովանութիւնը: Կրնա՞յ այս ըլլալ մեր կորուստներուն եւ կորսուածներուն անկորուստ փառանգութեան հանդէպ հայ բանաստեղծի մը վերաբերումը:

Փաստը վերն է, ու բաւ համարելով այդ պատիժը՝ կը հրաժարինք իրաւական մարդուն նկարագրէր բացայայտող անպիտ Խորացումներու ձեռնարկել:

Ձենք կրնար սակայն միւս նահատակներուն եւ եղբարբայրներուն գը-րական անպարկէշտութիւններ վերագրելու անոր մոլեղնութիւնը չմատնա-նշել ու քանի մը խօսք չըսել այդ մասին:

«Ճշմարտութիւնը այն է, — կ'ըսէ Դարբինեանին գրուած 12 Փետրւար 1925 թուակիր իր նամակին մէջ, — որ եթէ ես, Յ. Թումանեանը կամ Յ. Յովհաննիսեանը օգտուեմ եմք հայ ժողովրդի յանդիմաններէ, այն մը տածումով է, թէ հայ տոհմիկ գրականութիւնը եմք մշակում: Իսկ թրջահայ գրողները մոյլի անում են փրանական եւ օտար գրականութիւններէ: Եթէ ժամանակ ունենամ, ցոյց կը տամ, թէ Վարուժանը, Սիւսանքան, Մեծաբեկը եւ միւսները, Երանց մէջ էլ մեր սիրելի Տերեւանը, ինչպէ՞ս են կողակտի վերաբերման, վերաբերման, Բողոքի, Կարգուչի, Լեւոնապետի, իսկ Վահան Տերեւանը, բացի այդ, մտել առաւ Բալմուդին, Բրիւսովին, Մերեժկովսկին, եւ այլն»:

Ճշմարտութիւնը երբեք ալ այն չէ, գոնէ իր պարագային, որ հայ ժողովրդի ոճերէց—ձեւերէց լայնօրէն օգտուելով հանդերձ, օտար ճակոյթներուն տուած այցելութիւններէն բնաւ պարագ ձեռքով չվերադարձաւ: Մանօթեմ էն ժամ Ռիչարդի «Գեղօն»էն քամած իր «Մօր սիրտ»ին եւ Ճ. Ն. Վօլքլէն որդեգրած «Պանդուխտ զրոյս»ին պատմութիւնները: Հարկ չկայ վերադարձելու հարցը, բայց նաեւ զօրուար է տանել կողոպտելի իր անձնական վարձուքէն թելագրուած տողին բեռը.

«Ինչքա՞ն են կողոպտել»:

Կողոպտողներուն եւ կողոպտուածներուն անունները տրուած են եւ կարելի է կատարել ստուգումը, բայց խիստ կասկածելի է Դահլիճեանի «կասկածը», կողոպտուող իր բնաւորութեան մաս կազմած եւ քերթողական իր ձեւերուն ձեռնտու երեւոյթ է եւ ոչ թէ միասնորուն, որոնց մեծատունի պոռթկուն շալկութիւնը, պիտի ըսէինք մեծագործութիւնը չկարենալ տանելու տուայտանքի մը հետեւանք կը թուի իր «կասկածը» աւելի, քան իրական տուեալներու շուքը:

Ուրիշներէն ի՞նչ կրնար կողոպտած ըլլալ Վարուժան, մեր տառապանքին ու յաւերժութեան տկուսներուն վրայ իր երգին ու անմահութեան խաւրիսները նետած այդ հեթանոս քուրմը, որ դիտէր անգամ Արարիչին երեսն ի վեր արարչօրէն պոռալ:

Վար մայէ, եոն—մեր քոնիքները քոյքը

Իրեց գուարթ քոցին վրայ կը փշիւն...

Կամ՝

Ուրիշ՝ կրնար առած ըլլալ մեծ հօր ու թոռան մը փոխարարներութեան մէջ բացուած յաւերժութեան մեր բնագոյնն ու անկրկնելի ու անթառամ ծաղիկը:

Ափ մը ցորեան գլուխդ ք չար

Թոյլ քր քափեմ, քառնիկ սիրում,

Թառնիկ սիրում, ցո՛ւպս ծաղկած:

Ասոնք, եւ Վարուժանը վարուժանացուցած նման հրաշալիքները չեն կրնար կողոպտուած ըլլալ, կրնան բխած ըլլալ միայն մեր իրականութենէն եւ ցեղային խորունկ խորութիւններէն:

Նոյնն է պարագան եւ միւսներուն:

Մեր իրականութեան եւ իրենց հոգիներուն խորքէն դառ՝ ուրիշ ի՞նչ աղբիւր կրնային ունենալ «Հայ դաշտերում պաղատանք» խորագրած Սիւսանքան, «Ամանձնական ուրախութիւն» աղբիւր ու բաշխող Մեծարեանը, կամ Նայիրիի դիւթական տեսիլքը բառերու մէջ բռնած շարքին վերջին տեսլահարը, որ Դահլիճեան կողոպտելի մեղքեր կը փորձէ վերագրել անոնց:

Սկսեալ քննադատներու զեղուծով համբաւի հասած եւ սկսեալի հասակէն վեր բարձրանալու քաջութենէն դուրկ ուրիշներու հետեւակութեան հետեւանքով առասպելներու տէր Իսահակեանի այս ելոյթներուն տուն արեւոյ պատճառը ներգոյակ ուժի մը պակասին դիտակցութեամբ միայն կը բացատրուի, վերիններուն արարչագործած մակընթաց գեղեցկութեան առջեւ սեփական գործերուն եղբրական տեղատուութիւնը կանխօրօք դազած մարդու տուայտանքը կը թուի ըլլալ ատիկա եւ ուրիշ ոչինչ: Տարբեր բան չի կըրնար ըլլալ մեծերուն վաստակը կասկածի ենթարկելու իր շարժառիթը, ինք՝ որ ուր-մոլոր աւազներու, անկիւմաններու, դարդիմաններու եւ եարաներու բառային ու բացազանչական հեղեղներով կարծեց անհատական կամ համաքական տառապանք կը տրուի, կամ՝ ախուժախերով յիշատակուած մէրիկներուն, պապիկներուն, քուրիկներուն, հոգեակներուն եւ քաղցներուն հետ մեր մայրերը, հայրերը, քոյրերն ու գաւակները կրնան յանկարծ կերպարանք ստանալ:

Հոս արդէն խօսքը Իսահակեան բանաստեղծին կը վերաբերի եւ մասնաւորաբար քաջութիւնը պարտք կը զգանք իրեցնել, որ բանաստեղծութիւնը համբաւ չէ:

Ուրիշ բան է բանաստեղծութիւնը:

Մեր ըմբռնումին հիմք տուող երկու նմոյշ յիշեցինք՝ Վարդանէն:

Բանաստեղծութիւնը վիճակ է՝ ո՛չ թէ բուռն քովի բերող վարժութիւն, վիճակը պատկերի վերածող հրաշք է՝ ո՛չ թէ տողերու յաջորդական կանուխութիւն, յայտնագործութիւն է՝ եւ ո՛չ թէ պատահարներու հեռաւոր արձագանք: Այդ ամբողջն է բանաստեղծութիւնը, ու նաեւ քիչ մը արուեստ:

Կարգապէս, օրինակի համար, Իսահակեանի «Սառնայ Մեծք» կնքող սա տողերը եւ ըսէք, թէ անոր ո՞ր մասը, ո՞ր տողը, ո՞ր պատկերը կապ ունի բանաստեղծութիւն ըսուածին հետ.

Միճչեւ էսօր գեւ	Հագած կուռ ասպառ
Էնտեղ է Մեծք.	Միշտ ու միալար
Հուրմի Զին հեծած.	Կը սպասէ անհիմք՝
Սաղաւարտ կապած.	Հոգին ակամքին՝
Կայծակն ամ անիմ.	Ու ակամքը՝
Վախան՝ ամիս անիմ.	Ռաւիկի կամքին:

Օրինակ ընտրեցինք այս կտորը տնոր համար, որ «Սառնայ Մեծք» («որ ի դէպ, շա՛տ եմ մշակել») կը վայելէ հեղինակին համարումը:

Եւ ասիկա՝ է ճշտ մշակուած» գործը:

Տեսքաններու յատուկ ճկունութենէն իսկ դուրկ այս տեսքա՞նք:

Իսահակեանի պարագային, առասպելի մը դէմ յանդիման կը գտնուինք հոս եւս:

Մեր կարծիքով, զայն վարպետ կոչող սովորածունքը (Ս. Կապուտիկեան) աւելի բանաստեղծ են եւ «վարպետաց վարպետ» հռչակող շտեմները (Վ. Խեչումեան) աւելի զրազէտ:

Իսահակեանական առասպելներուն երես կարմրցնելու չափ տուրք տըւած ենք: Հարկ է այլեւս շրջանցել առասպելները ու իրականութիւնը կշռել անսխալաշար ոգիով...

(Շար. 3 եւ վերջ)

Գ. Ս.



ԱՆՆԱԿՆԻՅԱՆ

ԲՆԱՐ ԺԻՆՊԱՇԵԱՆ

ՊՈՒՍՏԻԱՆ ԶՐԿՈՒԱԾ Է

ԻՐ ԱՄԵՆԵՆ ԳԵՂԵՑԻԿ

ԶԱՅՆԵՆ

•

Համալսարանային Առաջին պատերազմի աւարտին ծնած Ալեքսանդր Սուրենյանցին Համալսարանային Երկրորդ պատերազմի ընթացքին ճակատային կրակող է:

1945ին՝ կը դառնայ ճամբարային դատապարտեալ:

1962ին՝ նորայայտ դրազէտ մըն է, երբ Խրուչչեի օրհնութեամբ կը հրատարակէ ստալինեան խաւարին վրայ լուսարձակ բացող իր առաջին վէպը՝ «Իվան Տեմիսովիչի կեանքին մէկ օրը»:

Այդ թուականին, Սուրենյանցին կը կարծէր, որ ապաստանականացման ձեռնարկով Համայնական աշխարհին մէջ կը հնչէր ճշմարտութեան ժամը:

Սակայն դարձեալ պատրանաթափ կ'ըլլայ: Խրուչչեի պաշտօնականութիւնը պատճառ կը դառնայ, որ խեղդուի նաեւ իր ձայնը իր հայրենիքին մէջ:

Գրադէտին յաջորդ հատորները՝ «Ա-

ռաքին շրջանակ»ը, «Քաղցկեղաւորներու տաղաւար»ը, «Սգաստոս 14»ը, եւայլն, կը մերժուին խորհրդային պաշտօնական հրատարակատուններուն կողմէ եւ հրատարակութեան կ'արժանանան միայն արտասահմանեան երկիրներուն մէջ:

Իր եւ իշխանութիւններուն միջեւ ըսկըպած այս պայքարը հետզհետէ կը զօրանայ եւ, 1969ին, Խորհրդային Գրողներու Միութիւնը կը վտարէ զինք իր շարքերէն: Միութիւն մը, որուն առաքելութիւնն է արուեստի ու գրականութեան մշակումը, կը քայլ քոլորովին խոտոր ճամբաներէ: Սուրենյանցին չի լռեր, ինդակառակն, ձայնը աւելի բարձրացնելով՝ կը պոռայ զինք վտարող Միութեան անդամներուն:

«Այդքան ամօք չբաւեց ձեզի: Աւելի՞ն կ'ուզէք: Սակայն մօտ է ժամը, երբ ձեզմէ իրաքանցիւրը պիտի ճզմի սրբել իր ստորագրութիւնը, որ կ'երեւայ այսօրուան որոշումին տակ:

Ութ տարի հոգ, կը սկսի ձիւնհալը: Ալեքսանդր Սոլժենիցին ճամբայ կը հոսէ «կուլակ Արշիպեղագոս»-ի նախակալութեան հերթը: «Եվան Տեմիտովիչի կեանքին մէկ օրը», «Աջ սեւեքը», «Առաջին շրջանակը», «Քաղցկեղաւորներու տաղաւարը», ու կարծիք թելը կը քալէ: պատմել աշխարհին տնայաւորների տաճարները, պոռթկալ, ալեկոծիլ, երբեք չխաղաղիլ, ու՛ վերածնիլ:

Սոլժենիցին կը գոչէ.

«Կարելի չէ ընդունիլ, որ պատմութեան մահացող յիշատակներն են, եւ թէ՛ միտքը չի կրնար ազգի աշխարհի ամէնէն զօրաւոր ուժին վրայ: Վերջին սերունդներու փորձը զիս կը համարէ, թէ միակ սերունդներին մարդկային միտքն է, պատկանում զոնոգութեան եւ մահուան: Մարդկային միտքը, որ կ'աղաղակէ. «Այլեւ քայլ մը իսկ չեմ կրնար առնել»: Մարդկային միտքը, որ կը պաշտպանէ անհատին խաղաղութիւնը, քայքայի խաղաղութիւնը, համայն աշխարհի խաղաղութիւնը»:

Վաստէ ու հաւատարմ իր մտքի անընկճելի կորովին, որ կրնայ ազդել աշխարհի ամէնէն «բիրտ» ուժին, Սոլժենիցին ամէն անգամ քայլ մը առնելի կ'առնէ՝ պաշտպանելու համար «բոլորին խաղաղութիւնը, համայն աշխարհի խաղաղութիւնը»:

Այսուհանդերձ, հայրենիքը կը փոթորկի ու լուսանք կը ծալթէ անոր խորիւս ճակտին.

«Մոլի եւ խարդախ գործարար, որ պիզնէս կ'ընէ իր սովետատնտեսութեամբ, եւ շահաբաժին կը կորզէ. այդպէս է այդ քափքփութիւն իսկական կերպարը», կը գրէ «Փրաւտա» թերթը:

Եթէ այդպէս ըլլար Սոլժենիցինի կերպարը, եթէ «հաղհնիացած» հողի մը ծուարած ըլլար անոր ներքը, ան կը վարէ՛ր այնպէս՝ ինչպէս կը վարուի զինք հալածող «այրախտար» համայնավարութիւնը: Այսինքն՝ կը լռէր կեղծքին դիմաց՝ ի խնդիր անձնական իր բարօրութեան, ապահովելու համար միայն ու

միայն «անհատին խաղաղութիւնը», ի՛ր խաղաղութիւնը:

Անանձնական նկարագրէ մը բխող ազնիւ կերպն է, որ կը վարէ Սոլժենիցինի գրչին ընթացքը: Հատորներու էջերուն յանձնուած մեքէլագրութիւնը փորձերուն առնիքներ, ան կը խմբագրէ նաեւ նամակներ՝ խնդրանքներ ներկայացնելու համար, երբեմն ալ զեղարուեստի գողը պատուած՝ ուղղակի կը կշտամբէ ու կը դիմէ խիստ պոխարակումներու:

Ամենայն ուշաց պատրիարքին ուղղած Սոլժենիցինի նամակին ոճը քրիստոնեայ համեստ հաւատացեալի մը լուռ պաղատանքն է.

«Ինչո՞ւ Ռուսիան գրկուած է իր վաղնիս գարդարամէքի, իր ամէնէն գեղեցիկ ձայնէն. չեմ համարձակիր մոյրնիկ խօսք ըսել եկեղեցական զանգերու դոգմային մասին»:

Կամ՝

«Զխարեմի ժողովուրդը, եւ ինչ որ շատ աւելի կարեւոր է, չխարեմի մեմբ գմեզ, մինչ կ'ազօքեմք, մտածելով, որ արտաքին կապաւնները աւելի զօրաւոր են, քան մեր ռզին: Աւելի դիւրին չէր, քան երբ քրիստոնէութիւնը ծնաւ, քայց անիկա ապրեցաւ, ծաղկեցաւ եւ մեղի ցոյց տուաւ մամբան, գոնոգութեամբ մամբան»:

Ու գլխագրած այդ զոհողութեան փըշոտ ճամբէն կը քալէ միշտ ինքը:

Նուրբեան մրցանակի պսակն անգամ առիթ չի տար հաշտ տրամադրութիւններու ծնունդին: Ընդհակառակն, նոր ու աննախընթաց ցաւ մը կը բերէ ատիկա դրողէտին:

Իր հայրենիքէն դուրս դրուելու Սոլժենիցինի տարիներու մղձաւանջը դարձեալ դուրս կը ցցէ: Ահաւասիկ այդ առթիւ Եւսէտի արքայական Ակադեմիային ուղղած նամակին պերճախօս տողերը.

«Սակայն, անցեալ շաբթուան ընթացքին իմ գործերու եւ իմ անձիս հանդէպ հայրենի մամուլին մէջ դրսեւորուած քշմամական վերաբերում մը ստիպեցին ինձի հեքիաթել, որ իմ Սթոքհոլմ գալու հանգամանքը կրնայ օգտագործուիլ,

որսվեցի զիս կտրեմ հայրենի հողէն, պարգապէս խափանեմ իմ տուն վերադառնալս: Ներկայ պարագաներուն մէջ, նախընտրեցի Սթեֆանով գալու համար դիմում չներկայացնել»:

Ու ժինէ իրեն ճակատագրակէց մը՝ Քուզնեցով զազատութիւն կ'ըմտրէ»։ Սուրժենիցին կամոյին կը հրաժարի փառքի այդ ճամբորդութենէն, որպէսզի իր հայրենիքին դուռները փակ չգտնէ իր առջեւ, մնայ հոն, որովհետեւ առ զկը սարսափի ախորժակէն, որ զինք պիտի կտրէ իր հայրենիքէն եւ առսերէնէն, որոնք կը կազմեն աղբիւրը իր ներշնչումին»:

Աւելի'ն. Սուրժենիցին կ'արգիլուի իր Նոպէլեան ճառը արտասանել սեփական ձայնով: Տեղի չ'ունենար այն պարզուկ արարողութիւնը, որուն ընթացքին գրադէտին պէտք յանձնուէր այնքան արդար ժրջանակը: Ու Սուրժենիցին փոխանակ արտասանելու իր ճառը «կ'ազատադաշտէ» զայն, ուր իւրաքանչիւր բառ կը պայթի ու արձագանգ կը գտնէ զինք զարբնող մեն Շոգիին, իր Նախաձոր՝ Ֆէոտոսը Տոթթոյեւսկիի բառերուն մէջ: Տոթթոյեւսկի եւ Սուրժենիցին միաբերան կը պոռթկան:

«Ֆեոդոցկուքիւմը պիտի փրկէ աշխարհը»:

Ի հենուկս զինք կաշկանդող բռնադատումներուն, Սուրժենիցին կը շարունակէ հաւատար արուեստի հրաշքին ու արուեստագէտին հրաշագործ կարողութեան:

Նոյն այդ նշանաւոր ճառէն առնուած են հետագայ տողերը.

«Քարոզչութիւն, հարկադրանք, գիտական փաստեր: Այս բոլորը ամօգուտ են: Բարեբախտաբար, սակայն, առիկա ընելու միջոց մը գոյութիւն ունի այս աշխարհի մէջ, — արուեստը, գրականութիւնը: Արուեստագէտներ կրնան գործել այս հրաշքը: Անոնք կրնան յաղթահարել իրադատուկ այս տկարութիւնը մարդուն, որ կը սարկի միայն իր անձնական փորձառութեամբ, մինչ ուրիշներու փորձառութիւնը զինք չի հետաքրքրեր: Մար-



ԱՎ. ՍՈՂՇԵՆԻՑԻՆ ԳԵՐՄԱՆԻԱ ԵՐ ՀԱՍՆԻ

գոց կարճատեւ կեանքին ընթացքին, արւեստը մէկ մարդէն միւսը կը փոխանցէ շատ երկար եւ անսովոր փորձառութեան մը ամբողջ ծանրութիւնը՝ իր բառերով, գոյներով, կեանքի աւիշով: Արուեստը այդ փորձառութիւնը կը վերստեղծէ մեր միսին մէջ եւ մեզ տէր կը դարձնէ անոր, գայն կ'ընէ մեր փորձառութիւնը»:

Այս պայմաններով, երկար, ընդմիջւող ու պատահաւոր այս երկունքով կը ծնի ահաւասիկ «Կուլակ Արշիպեղագոս»ը: Սուրժենիցին ոգիտականին վերջին օղակը:

Սուրժենիցին գրականութիւնը յանդգնութեան աստիճանական ու հանդրաւանային զարգացում մը կը մատնէ: Անոր առաջին վէպին հերոսը՝ Իվան Տենիսովիչ անձանօթ կալանաւոր մըն է: Վերջին վէպին հերոսը ինքն է, ծանօթ ու համախաբհային ինքը, ինքը՝ կալանաւոր ու հալածեալ:

Այս պատճառով «Կուլակ Արշիպեղա-
գոսին կը տրուի զրականէն աւելի վա-
ւերադրային արժէք: Այդ կարծիքը կը
յայտնէ նաեւ ուսն ժամանակակից պատ-
մարան Րոյ Մետուսեւ, երախաւորե-
լով «Կուլակ Արշիպեղագոսին մէջ
պարզութեամբ պիտաւոր դէպքերուն զամ-
բողջական վաւերականութիւնը»:

«Կուլակ Արշիպեղագոս» գրքին հը-
րատարակութեան առիթով՝ խորհրդային
իշխանութիւնը կը պաշտօնականացնէ իր
սեղմումները հեղինակին վրայ ու կը
ստիպէ անոր կառուցիկ ձգել հայրենի հո-
ղը:

Սոցիէիցիէն դարձեալ կ'ամբաստան-
ւի իրրեւ կայսերապաշտութեան գործիք
ու մեղմացումի մթնոլորտը թունաւորող
մարդ: Այսպէս, ԹԱՍՍ զործակալութիւ-
նը կը յայտնէ, թէ «Խորհրդային Միու-
թիւնը զրարտելու այն նոր փորձը կը
կատարուի այն պահուն, երբ դրամատի-
քային ընդհանուր տագնապը ծանրա-
ցած է տնտեսական նոր դժուարութիւն-
ներով»:

Ամիսներ շարունակ, Սոցիէիցիէի
«Կուլակ Արշիպեղագոս»ը կը դառնայ
Խորհրդային Իշխանութեան անմիջապէս
բախը եւ, կողմնակի միջոցներով՝ կը
խանդարուին այդ գրքին հատուածներուն
ձայնասփռումը կատարող կայանները:

Մեծ գրագէտը կը քննադատուի ու
կ'ամբաստանուի փոքրագութեամբ, քաղ-
քնիտութեամբ, կայսերապաշտութեան ծա-
ռայելու յանցանքով, բայց անոր անդրա-
դարձ պատասխանը պարզ է ու մեկին.

«Այս պայքարին նպատակն է իմ
հայրենակիցներս հետացնել գրէտ»:

Այնուհետեւ դէպքերը կ'ընթանան օ-
րերու կապարային խտութեամբ:

Փետրուար 11ին՝ Սոցիէիցիէի հար-
ցաքննութեան կը կոնչուի, ու կը մեր-
ժէ ներկայանալ: Ընդհակառակն, ինք
դատի կը կանչէ Իշխանութիւնները՝ յայ-
տարարելով.

«Օրէնքի հանդէպ փաղաքացիներէն
յարգանք պահանջել առաջ, ճախ դո՛ւք
ստրվեցէ՛ք յարգել օրէնքը»:

Կոնսադիր կ'ուղղուի երկրորդ ան-
գամ, բայց ի զուր:

Փետրուար 12ին՝ Սոցիէիցիէն կը
ձերբակալուի: Գաղտնի ոստիկաններ զինք
չզթայի կը զարնեն Մոսկուայի իր բնա-
կարանին մէջ ու կը տանին անծանօթ
ուղղութեամբ:

Ձորս ժամ ետք, լուրը ստուգուած է
եւ սեփականութիւնը դարձած համայն
մարդկութեան:

Սոցիէիցիէին անակնկալ մը չի թը-
ւիր պատահար: Տասնըփնգ օր առաջ,
իր փաստարանին հասցէագրած մէկ նա-
մակին մէջ՝ ան կ'ըսէր.

«Համալայրտ եմ եւ պատրաստ ամէն
հաւանականութեան»:

Գրագէտը բանտ մտաւ իր ստեղծած
հերոսներուն վայել պատուով ու շուքով,
այսինքն՝ «...առանց դադարու այն ճազ-
ցըր կեանքին համար, զոր կը լքենք:
Սեմին վրայ, պէտք է ըսել, որ կեանքը
վերջացաւ: Քիչ մը կանուխ է, բայց ը-
նելիք չկայ: Երբեք պիտի չվերադառնամ
այլեւս ազատութեան: Դատապարտու-
ած եմ փնանալու: Հիմա քէ աւելի ետք,
կացութեան իրապէս ոչինչ կը փոխուի:
Մնաց որ, աւելի ետք՝ աւելի դժուար պի-
տի ըլլայ, ուրեմն աւելի լաւ է հիմա:
Բան չունիմ այլեւս: Մերժաւորներս մե-
ռած են ինծի համար, ու ես՝ իրենց հա-
մար: Այսօրս ընէ՛ք սկստալ մարմինս ու-
րիշի մը մարմնին է ինծի համար, անօ-
գուտ: Միայն միտքս ու խիղճս կարեւոր
ու սիրելի կը մնան ինծի:

«Ու մնամ քանտարկեայի մը առջեւ
հարցաքննութիւնը տեղի պիտի տայ:

«Պիտի յաղթէ ան, որ ամէն քանի
հրաժարած է»:

Մէկ օր ետք, աքսորի վճիռը կը ստո-
րագրուի եւ Սոցիէիցիէն ճամբայ կը
հանուի անոր ուղղութեամբ:

Սոցիէիցիէի աքսորէն մէկ օր անց,
13 Փետրուարին, կիկը Մոսկուայի օտար
մամուլին յանձնեց նախապէս դրագէտին
կողմէ դրուած յայտարարութիւն մը, ուր
կան իր արդարութեան գիտակցութիւնը
ունեցող ամբողջ մը ճիշդերը:

«Ի յառաջագունէ իրաւասութիւն չեմ տար քրեական որեւէ դատարանի՝ դատելու ռուսական գրականութիւնը, անոր գիրքերէն որեւէ մէկը, սեւէ՝ առաւ հեղինակ: Եթէ դատարան մը կազմուի ինծի դէմ, իմ սեփական ռոտքերովս պիտի չեքամ: Այս կրնամ յանձնել այդ դատարանին, ձեռքերս կապուած, քանտային կառքի մը մէջ: Նման դատարանի մը հարցումներէն ո՛չ մէկուն պիտի չպատասխանեմ:

«Եթէ բանտարկութեան դատաւարտուիմ, վնիսին պիտի ենթարկուիմ միայն ձեռնակապերով: Ասկէ առաջ արգելափակուած եւ կեանքիս լաւագոյն ուր տարինեան պետութեան համար տաժանակիր աշխատանք կատարած ու քաղցիկ մը քաղած բլլալով՝ կէ՛ս ժամ իսկ պիտի չաշխատիմ զիս կեղեքողներուն համար:

«Այսպէս վարուելով, իրենց պիտի բռնում անգիմակ բռնարարողներ բլլալու պարագայն կարելիութիւնը: Թող զիս արագօրէն ապանեն, որովհետեւ ճշարտութիւնը կը գրեմ ռուսական գրականութեան մասին»:

Նոյն օրը, Էրեկոյեան, խորհրդային մտաւորականներէն խումբ մը ստորագրեց պիտեական Անտրէ Սախարովի կողմէ խմբագրուած հաղորդագրութիւն մը, հիմնուելով հետեւեալ տուեալներուն վրայ.

«Խորհրդային իշխանութիւնները կը բռնեն միացողային համրային կարծիքին երեսին: Սոյսնիցիին ձերբակալութիւնը նախատիմ մըն է համայն աշխարհի եւ յիշատակին հանդէպ անոնց, որոնց մասին կը խօսի իր գիրքերուն մէջ... Սոյսնիցիին կը ճերկայացնէ մարդկութեան խիզը»:

Աքսորեալ գրագէտը գերմաներէն ցուցատախտակի մը բառերը կարդալով միայն կ'իմանայ, թէ կը գտնուի գերմանական հողի վրայ:

Ու միւս ճակատին յորձանք կ'առնէ համակրանքի ալիքը:

Աւելի ճիշդ՝ համակրանքի ու պաշտամունքի այդ ալիքը սկսած էր արդէն



Ա. ՍՈՒԺԵՆԻՑԻՆ ԵՒ ՀԱՅՆՐԻՆ ՊԵՏԻՆ

ձեռն գրագէտին ճաշակած առաջին տառապանքին տեսն, ու առաջին մէկ օրէն:

Ընկերային ու քաղաքական պայմաններու ու հոգեբանութեան իսկ բերումով, Արեւմուտք գիրք կը բռնէ ի նպաստ Սոյսնիցիին, հակադրուելով անմարդկային այդ վերաբերումներուն:

Իրմէ երկու տարի ետք Նոսիլեան ժրջականի արժանացած գերմանացի գրագէտ Հայնրիխ Պէօլ իր ընկարանին գուռները լայն կը բանայ իր արուեստական կիցին առջեւ ու աքսորական Սոյսնիցիին իր առաջին ապաստանը կը գտնէ անոր մօտ:

Ամերիկեան պետական քարտուղար Հէնրի Գիսինճէր հսկողովն կը հրաւիրէ Սոյսնիցիին Միացեալ Նահանգներ, ու իր ժողովուրդին բերնով կը յայտարարէ.

«Սոյսնիցիին սիրով տեղ ունի Միացեալ Նահանգներու մէջ»:

Արեւմտեան Գերմանիոյ վարչապետ Ուիլլի Պրանտ, իր կարգին, խօսնակը կը

դառնայ եւրոպայի մտայնութեան, ըսելով՝ թէ Սոյժենիցին պիտի կրնայ «ազատօրէն ապրիլ ու աշխատիլ Գերմանիոյ մէջ»:

Տակաւին, «Կուլակ Արշիպեղագոս»ը շարժանկարի վերածելու պատրաստութիւններ կը տեսնուին ու ֆիւթարտագործը «նուիրական պարտականութիւն» կը զգայ «խրակաւեցնելու գործ մը, որ կը դատապարտէ անհամըմուտքութիւնը իր ամբողջ գոյուելիութեամբ եւ մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող բեմայթով»:

Աւելի սրտառու է, սակայն, իրեն ներուն սէրը, իրեն ճակատադրական ծարղոց ծառացումը:

Գիտութեան մարզէն ներս սոյժենիցեան մեծութեան մը համբաւը վայելող Անուի Սախարով կ'առաջնորդէ պայքարի երթը: Հեռագիրներ կը յղուին աշխարհի հանրային կարծիքին ու հրապարակ կ'ելլեն կոչեր:

«Արտաշատած գրագէտին միակ դաւանութիւնը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ ան, տպաւորիչ ուժով մը, համայն աշխարհին առջեւ քողագործեց մօտաւոր անցեալին հարկիդային Միութեան մէջ գործուած քրէշային ռեփրմերը»:

«Խորհրդային Միութեան ուղղափառ խօսնակը»՝ բանաստեղծ Եւգենէ Եւտուշէնկօ ինքն ալ պարտք կը զգայ իր գրչեղբոր հաշտին արդար խօսք մը ըսելու, ու կը փորձէ նաեւ ինքզինք, շրջապատութեան դնելով «սովետական բարեկամներուն» ուղղուած բաց նամակ մը, ուր ի միջի այլոց կ'ըսէ.

«Կուլակ Արշիպեղագոս»ի մէջ Սոյժենիցին որդեգրած քաղաքի տեսկէտներուն համաձայն չեմ իմքս: Համաձայն չեմ, ի մասնաւորի, զօրավար վլադիմիր մասին գրածներուն: Բայց այս գիրքին

մէջ կայ ստալինեան արիւնտ ռֆիրմէրում մասին վաւերագրային սահմակէցուցիչ էջեր: Որքան ալ մեծ ըլլան Սոյժենիցինի մեղքերը, չեմ կրնար հասարակաց եզրեր ունենալ ստալինեան ժամանակաշրջանի դատմութիւններում հետ:

«Սոյժենիցինի ի նպաստ երկու անգամ կոչ ուղղած եւ Գրողներու Միութեան: Առաջին անգամ «Գաղցկեղաւորներու տաղաւար» վէպին առիթով ստեղծուած գայթակղութեան ատեն, պահանջելով այդ գործին հրատարակութիւնը: Երկրորդ անգամ առաջարկելու համար, որ Սոյժենիցինը Գրողներու Միութենէն հապճեպ որոշումով մը վտարելու սխալը չգործուի: Այս կոչերը ո'չ միայն ուշադիր եւ քարեացական բնութեան առարկայ չդարձան, այլեւ բազմաթիւ անգամներ իրրիւ յանցանք օգտագործեցին զանոնք ինծի դէմ»:

Տակաւին իրենց ահուհներն ու բախտը Սոյժենիցինի ճակատադրին կը կապեն պատմաբան Բոյ Մետեւսեւ, Տիկ. Սախարով, Վլատիմիր Մաքսիմով, Անաթոլի Մարչէնկօ, Փաւէլ Լիթֆինով, Լ. Չուբովսկայա եւ ուրիշներ:

Դատնութեանց բաժակը ցմբուր ըմպած Սոյժենիցին գառնութիւններու ահեղագոյնը կ'ապրի ներկայիս, իր հոգին անուցանող հայրենիքէն հեռու:

Սոյժենիցինի առիթով կարելի չէ զսպել կսկծացող ուրախութիւն մը: Այս օրերն՝ չմտածել աստուածային արուեստի ծնունդին ու այդ ծնունդով բնագոյն ըստ բախտին մասին, որ իրեն միշտ մայր ունեցած է հոգիի ու մարմնի անուր տանջանքը, դժբախտութիւնը:

Գերմարդկային ուժանութեամբ ու գերզգայուն ապրումներով յորդող Սոյժենիցինի հոգին նոր բախտերու դուռ կը բանայ դեռ աշխարհին:

ՔԱՍՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ



ԵՂՈՒԱՐԴ

ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

Յունուար 14ին, բարեկամներու, աշակերտներու եւ համակիրներու ստուար բազմութիւն մը հողին յանձնեց Եղուարդ Տասնապետեանը, մէկը իր չրջապատը հայոց սրտմտութեան, լեզուին ու գրականութեան ոգիով բարեխառնելու ստոյգ շնորհներով օժտուած մտաւորական մէկ ուսուցիչներէն:

Ուսուցիչի առօրեայ մը ունեցաւ Տասնապետեան եւ առօրեային խնայած ժամերուն ապրեցաւ երկրորդ կենսից մը՝ յանձնելով ինքզինք հայոց լեզուին ներքութիւններուն հետ ըլլալու կամ սիրելի մեծերու յատնադրած գեղեցկութիւնները կրկին ու կրկին ներծծելու հեշտանքին: Լեզուին ճշգրտութեամբ, հնչեղութեամբ եւ փայլելութեամբ, ու գրականութիւնը՝ հոգեկանութեամբ, հրայրքով ու ճարտարապետական բարեմասնութիւններով պայմանաւորող մտաւորական մը, որ կը ցնցուէր գեղեցկութեան մը ի տես, կամ, բնդհակառակն, էր պալարուէր ինքն իր մէջ, երբ սրբութեան մը վրայ տկարութեան կամ սղիտութեան հետեւանքով ինկած շուք մը կուսէր:

Պարզ՝ տէրփելի մը պէս, բծախնդիր՝ Զղայնութեան հասնող չափով մը, հաստատամիտ՝ յաւակնութեան հետ շփոթուող շնչառով, Եղուարդ Տասնապետեան գրական ստեղծութիւնը կուռքերու միայն խունկ ծխեց ու հաղուադէպ պարապաներու միայն դրելը թաթխեց մելանին, բայց իր ձիած խունկն ու քով քովի շարած դիրքերը հրապոյր ունեցան միշտ եւ հաղորդական գոլով մը հասան աշակերտներուն, ունկնդիրներուն, ընթերցողին:

Գրողի մը, մտաւորականի մը կամ ընթերցողի մը հետ գրոյցի բռնուած ատենն՝ ան զուրս չէր ձգեր մանաւանդ Սոյաթ-Նոփան, ու սքանչելի էր Սոյաթ-Նոփան, երբ անոր բանաստեղծական հրապոյրները բացուէին Տասնապետեանի շրթներով:

Աշխարհքս մէ փանջարա է, — քաղերումէն բեգարիլ իմ.
 Մրտիկ տըվողըն կու խուցվի, — զաղերումէն բեգարիլ իմ.
 Էրէգ լավ էր կանց վուր էսօր, — վաղերումէն բեգարիլ իմ.
 Մարթ համաշա մէկ չի՛ ըլի, — վաղերումէն բեգարիլ իմ:

Կ'արտասանէր բարձրաձայն ու շէր կրնար զսպել իր հիացումը հոն խը-
 տացուած մարդկային խորունկ վիճակներուն, յայտնագործուած իսկութեան,
 կիրարկուած արուեստին ընդհանուր գեղեցկութեան մասին, շարունակելով
 իր յստիտակութիւնը ուրիշ տեղ, այս անգամ զբաւոր, հարցական ոճով մը.

«Բայց ուրիշ՞ ար՝ գեղեցկութեան ձեւերու այսքան ճշիւ դրամագլուխ
 սա ճաւիկդին Բով: Ուրիշ՞ քանաստեղծական արուեստի «գարրաք» ծիրանին
 սա ճեղքալիսն ստեղծում:

«Կը քուի, թէ սերունդէ սերունդ թափում ճամբաներով քաւալող ըս-
 տեղծագործ ձուծի պահեստը ի վերջոյ կը կեդրոնացայ երջանիկ մօր մը ար-
 զանդին մէջ. քերես իբրեւ միակ ժառանգ, կը փոխանցուի անմահութեան
 սահմանուած իր զանկին»:

Գրաւոր ըլար Տասնապետեանի խօսքը թէ բանաւոր, ունէր վարակե-
 լու ուժանակութիւն մը, մինչեւ անպատճառ մէկնէն ծանօթ կտորը առտիճան մը
 աւելի սիրելի բնծայելու իւրայայտուել հմայք մը.

Մշուշի միջից, — տեսի՛լ դիտակեմ, —
 Բացում է կրկին Նայիրին տրտում.
 Ո՞ր երկրի սրտում քայլած կայ այնքան,
 Եւ այնքան ներում — ո՞ր երկրի սրտում...

Սայաթ-Նովա, Քուշակ, Վարուժան, Տէրեան, Օշական, Ջարենց եւ
 թիւով ոչ աւելի քանի մը ուրիշ մեծերու բերքով իր շուրջը մթնոլորտ մը
 ստեղծած եւ շափտնիշ կազմած մտաւորական էր Տասնապետեան, որ յատուկ
 դէպքերու շրջանում իր շուրջը կողմաւորուող սերունդներու հոգեկան կառույցին
 մէջ եւ կրնայ շարունակել նոյն գերը, եթէ խմբունի իր գրաւոր ժառանգու-
 թիւնները:

Սուրբոյ եւ Լիբանանի մէջ եւ Սուրբային եւ Լիբանանէն հեռացած եւ
 տարբեր երկրներ կայք հաստատած հարիւրաւոր աշակերտներ ունի Տաս-
 նապետեան եւ չկայ անոնց մէջ մէկը, որ երկիւղած յարգանքով մը չխօսի իր
 ուսուցիչին մասին:

Տասնապետեանի գրաւոր ժառանգութիւնը մէկտեղելու քաղցր պարտ-
 քը առաջին հերթին կը ծանրանայ անոնց, աշակերտներուն ուսին: Աշակերտ-
 ները պէտք է խմբեն անոր գործերը, անտիպներն ու մամուլին մէջ արդէն
 լոյս տեսածները եւ ամբողջութիւնը հաստորով մը բնծային հանրութեան,
 ու ատկա՛ն՝ ո՛չ անպայման ի յուշ ուսուցիչին, այլ ի խնդիր Մեծաւքանչիին
 եւ Մեծաւքանչիով նուաճուած ու նուիրագործուած գեղեցկութիւններուն տա-
 րածման:

Յաջորդող էջերուն ընթերցողին կը ներկայացնենք ողբացեալ մտաւո-
 րականին վերջին աշխատութեան առաջին էջին լուսանկարչական պատճէնը
 եւ քառորդ դար առաջ, Օշականի յորեկանին առիթով Հայէպի մէջ արտա-
 սանած նախագահական իր ճառը, որ գեռես կը պահէ իր թարմութիւնը,
 իրականութիւն, իրաւութիւն, ու ջիգ, ու արին ունենալու փաստով յաւուր-
 պատշաճութեան սահմանները անցնող բոլոր խօսքերուն պէս:

Բ Ա Ց Մ Ա Ն Ճ Ա Ռ Ը

ՀԱՅԷՊ, 1 ՄԱՅԻՍ 1946

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանն հանճարոյ»...
Ասիկա եղաւ նշանաբանը, որով Վեհափառ Վարդապետը՝ Մեսրոպ մեր
գրական մշակոյթը սկզբնաւորեց:

Ասով անիկա հայ գիրին նուիրական դեր մը կը սահմանէր: Ասով անիկա
հայ գիրը կը կանչէր իմաստութեան միայն ծառայելու, առաքինութեան միայն
սպասարկելու: Ասով անիկա հայ գիրը կ'ուզէր ընել անխաղաղ միջնորդը հայ
մտածումին, հայ յոյզին:

Սակայն հիմա անգամ մը հարցնէի՝նք Վարդապետին, թէ իր օրերէն
մինչեւ այսօր, բայց մանաւանդ այսօր, հայ գիրը մնա՞ց հաւատարիմ աւանդա-
պահը ճաճանչահիւս սա նշանաբանին, թէ իր օրերէն մինչեւ այսօր, բայց մա-
նաւանդ այսօր, իր հոգիին սա լուսեղէն ժայթքին վրայ հայ գիրը չձգե՞ց նաեւ
ստուերը իմաստութեան հերքումին եւ առաքինութեան դժոժմին...—

Ա՛խ, բարի ու միամիտ Վարդապետ, ինչո՞ւ հրաշքով մը քու այբուբե-
նիդ չտուիր կախարդական յատկութիւնը՝ իմաստութիւնը թելադրող եւ առաքի-
նութիւնը ներշնչող տարապնէրու համար միայն բաղադրուելու...

Այսուհանդերձ, օրինեալ ըլլաւ, իմաստուն Վարդապետ, հայ հանճա-
րին առաւօտեան լոյսը, որովհետեւ քու «մեծ եւ սքանչելի» խորհուրդիդ սա
լուսեղէն նշխարիններէն է դարձեալ, որ քու ժողովուրդդ սորվեցաւ իմաստութիւ-
նը վատել անմտութենէն: Օրինեալ ըլլաւ, միամտութեամբդ կրկնապէս բարի
Վարդապետ, հայ առաքինութեան անշամանդազ ճառագայթում, որովհետեւ քու
սրտիդ ալեւտական տագնապէն թափած սա սրբական մասունքէն է դարձեալ,
որ քու ժողովուրդդ զիտցաւ առաքինութիւնը բաժնել մեղքէն...

Եւ պատի՛ւ քեզի, հա՛յ ժողովուրդ, որովհետեւ «էուն էն զխէն իմաս-
տուն իս, խելքդ յիմարին բաբ չիս անի»: Պատի՛ւ քեզի հա՛յ ժողովուրդ, որով-
հետեւ քու հոգիիդ վճիտ-աւապանին, քու յոյզերուդ, քու սէրերուդ, քու խանդե-
րուդ մաքուր հոսանքը չի պղտորիր գորտերու կրկեղէն:

Եւ այսօր՝ երբ քու արժանաւոր պաւակներէդ մէկը՝ գրկած քառասուն
տարիներու իր հոգեկան վաստակը — ճառագայթի խուրձ մտածման եւ յոյզի —
կու գայ պայն նուիրել քու հոգեկան տաճարիդ, դուռները լայն կը քանաւ անոր
առջեւ:

Եւ ինչպէ՛ս ոչ, երբ այդ նուէրը շքեղ մէկ փունջ է քո՛ւ իսկ մտածումնե-
րուդ ու յոյզերուդ, քո՛ւ իսկ եսիդ նշխարիններուն: Որովհետեւ ո՛վ է գրագէտը
կամ բանաստեղծը, բայց մանաւանդ — Յոբելեարին սիրած վերադիրով — իրա՛ւ
գրագէտը կամ բանաստեղծը... ոգեկան ճարտարարուեստի վարպետ մը, որ իր
նախանիւթը կ'առնէ ժողովուրդէն եւ պայն իր անհատական հիշգիւրդ գործարկ-
նին մէջ ճարտարարուեստական ապրանքի կը վերածէ վերստին ժողովուրդին
մատուցանելու համար: Անկէք ժողովուրդի հոգեկան երկնակամարին տարտամ
ու անկերպարան յարազողներէն կը հնձէ աղօտ ու անտաշ բեկորները լոյսին
եւ զանոնք կը վերադարձնէ նոյն երկնքին՝ շքեղ համաստեղութիւններու վե-
րածած:

Բայց երբ խօսքը կը մասնատրուի օրուան Յոբելեարին վրայ, ժողովուրդին եւ անհատին՝ մօր եւ պապի այս յարաբերութիւնը կ'ըլլայ շատ անելի մտերիմ, որովհետեւ, այս պարագային, մէջտեղ դրձած վաստակը մեր ժողովուրդի հոգիէն փրցուած կտորներու կամ պանոնք որոնող մտահոգութիւններու պատկանելի գումար մը կ'ըլլայ: Գրագէտ Օշական հա՛յ գրագէտն է մանաւանդ — անոր յօրինումները հայ կեանքէն միայն կ'առնեն իրենց տարրերը, եթէ անոր մարդերը միշտ չեն քալեր մեր պատմութեան մայր գծէն, բայց իրենց մասնատրութիւններովը հանդերձ, եւ այդ մասնատրութիւններովը իսկ, տուեալ միջավայրի մը հայերն են դարձեալ, միշտ իրա՛ւ հայեր: Քննադատ Օշական հա՛յ քննադատն է մանաւանդ. — անիկա մեր գրական արուեստի ստեղծումներէն ներս փնտռեց միշտ հայ պգայարանքին ճառագայթումը. փնտռեց հա՛յ մտքին տազնապը, հա՛յ սրտին խռովքը, հա՛յ արիւնին եռքը, հա՛յ ջիղին սարսուռը. մեր գրական յօրինումներուն մէջ հայ տարրին կշիռը — բայց անխարդախ այդ տարրին, իրա՛ւ ապրուած այդ տարրին կշիռը — արժէքի creterium մը դարձաւ իրեն համար:

Ահա՛ թէ ինչու, հա՛յ ժողովուրդ, օրուան Յոբելեարը կ'ըլլայ քու հարապատ Գաւակդ Պի բնութենէ մօր», եւ դուն անոր ոգեկան աշխարհէն ներս կը գտնես քո՛ւ իսկ եսիդ անդրադարձները: Ու դուն չես կրնար չպանծացնել քեզի մատուցուած շքեղ փաստակը, որովհետեւ դուն չես կրնար չյարգել ինքզինքդ: Մեծ է այն ժողովուրդը, որ զիտէ կանխել պատմութեան գնահատումը իր արժանաւոր պատկանելիութիւն մասին:

Ժամանակին հոսանքը կուգայ հալեցնել սնամէջ պղպշակները խարդախուած դատումներուն եւ սուտ խնդիրներուն, կուգայ հանրային կեանքի հրապարակէն քշել դիրտը քոլոր նենգաւոր ուրացումներուն եւ սակարկուած դրժումներուն, կուգայ հրապարակը մաքրել առօրեայ կիրքերու գարշահոտ աղբակոյտէն եւ ցեղային խղճմտանքին հետ կը թեթեւայ նաեւ արուեստին ըզզայարանքը՝ քաղաքական դեկրետներու այլասերող միջամտութենէն. մարդերը կ'մայնան այլեւս ազգային արժէքները արտապգային կարգախօսներու ցուցմունքներովը դատելէ եւ հայրենիքի անունով հայրենիքի արժէքները ուրանալէ: — այն ատեն՝ վերջնական հաշուեյարդարէն վերապրող վաւերական արժէքներու աշխարհէն ներս, — ուր «աւազէ բունհաթ»ները տեղ չունին եւ ուր «քարափէ քարովրէն» կառոյցներ միայն կան, — անոր փառաշուք մէկ հրապարակին վրայ, դուք պիտի տեսնէք մեր օրերէն փրկուած մարդեղէն կոթող մը, որ այլեւս կանգնած անվերաքննելի գնահատումներու հաստատուն պատուանդանին վրայ՝ ապահով հեզութեամբ մը կը ծիծաղի ժամանակին շքեղ անվաճութեանը վրայ...

Այսպէ՛ս...

Որովհետեւ եթէ ի վերջոյ հարկ է ճշդել Յոբելեարին տեղն ու դիրքը մեր գրականութեան պատմութեան մէջ, պիտի ըսեմ՝ անիկա եղաւ մէկը Մեսրոպեան Այբուբենին սրբատաշ քարերովը հիմնարկուած տաճարին մայր սիւներէն, որոնց վրայ կը հանգչի զմբէթներուն եւ կամարներուն շքեղութիւնը:

Ահա՛ թէ ինչու, հա՛յ ժողովուրդ, երբ սա ազնուական պաւակդ, քառասուն տարիներու իր մտքի տազնապին ու սրտի արիւնին վաստակը զրկած, կուգայ վայն ձօնել քու հոգեկան գանձարանիդ, կուգայ ուխտաւորի մը երկիւղածութեամբ մըմնջել քեզի. «Մա՛յր, պըոյդ ի քոյոց քեզ մատուցանեմ», դուն չես վարանիր անոր գլխուն դնելու քու յոյսերուդ, քու սէրերուդ, քու խանդերուդ աննորութիւն յուսազանգը...

Ե՛ր. ՏԱՍՆԱՊԵՏԵՄԱՆ



17 փետրուար 1974ին, Ամերիկեան համայնարանի Ձեռքի մէջ տեղի ունեցաւ Քաղցիմի կողմակերպած դրական երեկոյթը, նուիրուած Յ. Օշականի, «Գ. Մելիտիենցի դժբախտական մրցանակի» դառնակազմին կողմէ հրատարակուած իր նոր հատորին առիթով, որ կը մէկտեղէ «Ծակ-պտուկը», «Հաճի Մարտա» եւ «Հաճի Ապտալլան» վեպերը:

Մտնել լեցուն էր դրողներով, մամուլի ներկայացուցիչներով, հանրային գէմբերով ու գրասէրներով: Հաւատարմութեան մէջ այժմ կը պարնէր մանաւանդ երիտասարդութեան ջանքերով տոկոսը:

Երեկոյթին կը նախագահէր Մ. Իշխան, իսկ Օշականը ներկայացնելու պաշտօն ստանձնած էին Վահէ Օշական (Օշական մարզը) եւ Գ. Մնացեան (Օշական վիպագիրը):

Գրական այս երեկոյթին իրենց մասնակցութիւնը բերին Եանօթ արուեստագէտներ Արփինէ Փեշիւանեան (երգ), Պաղոս Ճելալեան (նուագ) եւ Խաչիկ Արարուսեան (լեռնաշուք):

Երեկոյթին եւ երեկոյթին առընթեր Օշականի գրական-նութեան անդրադարձած հայ մամուլին հետ նաեւ ֆրանսա-առաջին թերթին ոտնը, — «Le Soir» (22 փետրուար), «Magazine» (28 փետրուար) եւ «La Revue du Liban» (3 Մարտ), յաջորդաբար հիւրընկալելով Եռլանտ Անէմեանի, Մանուկ Պոյանեանի եւ Մոնթա Նիկոլեանի գրութիւնները, հետեւեալ խորագրերով:—

- 1.-- Hagop Ochagan: «Le Balzac arménien».
- 2.-- Ochagan: Le Balzac ou le Dostoievski des Arméniens.
- 3.-- Cérémonie à la mémoire du grand écrivain Hagop Ochagan.

Մտնելու հաւանք Մ. Իշխանի խոսքը: Վահէ Օշականի եւ Գ. Մնացեանի վերլուծումները պիտի ներկայացնենք աւելի ուշ:

Խ Օ Ս Ք՝

Յ. ՕՇԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ



Երկու առիթներ պատճառ կը հանդիսանան, որ այսօր ուկրաինէ մեր մեծագոյն գրողներէն մէկուն՝ Յ. Օշականի յիշատակը:

Նոր լրացաւ անոր մահուան 25ամեակը:

Երկրորդը՝ աւելի բարեբախտ առիթ մը՝ իր երեք վէպերուն հրատարակութիւնն է:

Այս պահուստ իմ միտքս կ'երթայ 45 տարիներ առաջ, երբ նորահաս պատանի՝ Կիպրոս, Մելքոնեան հաստատութիւնը կը մէկնիմ, հրապարակած Յ. Օշականի հմայքէն:

Կը յիշեմ զինք բաց օձիքով, խառն ու գզգզուած մազերով, ծանրամարմին, խռրորակազմ, քիչ մը արիւնոտ աչքերուն մէջ քաղցր ժպիտ մը, երբ դասարան կը մտնէր եւ կատակախառն խօսքը ուղղելով մեզմէ մէկուն կ'ըսէր.

— Զորավարի, ելիր շարադրութիւնդ կարդա՛:

Օր մըն ալ կարգը եկաւ ինծի. անհամբեր եւ յուզուած կը սպասէի այդ վայրկեանին: Դուրսէն նոր եկած աշակերտ՝ բոլոր շնորհներս թափած էի շարադրութեանս վրայ. — լուրջուն բառեր, բանաստեղծական պատկերներ, հռետորական խօսքեր:

Օշական քանի մը վայրկեան լսելէ ետք, հեզնոտ ժպիտ մը գէմքին, կեցուց զիս եւ բտաւ.

— Այս ամէնը օ՛ղ է, տղա՛ն, ծալի մէկ կողմ դիր: Նայէ թէ դուք ի՞նչ ունիս տալիք մեզի իրական կեանքէն: Ոտքերդ ամուր դիր հողին վրայ:

Այն առիւն շատ լաւ չհասկցայ, թէ ի՛նչ բռն կ'ուզէր: Հետագային իր գրականութեան ընդմէջէն միայն կըցայ ըմբռնել Օշականի գրական դասանանքը:

Կը սխրէինք զինք եւ անհամբեր կը սպասէինք իր դասերուն, որոնք վայելքի պահերու կը վերածուէին բոլոր այն աշակերտներուն համար, որոնք հետաքրքրուած էին գրականութեամբ:

Կը դառաւանդէր առանց մասնաւոր ծրագրի, առանց մէթոտի, սակայն կը փոխանցէր գեղեցիկը եւ արժէքաւորը ըմբռնելու զգայարանքը. բան մը, զոր դասադրքերը չեն տար:

Օշական բացառիկ երեւոյթ մըն է մեր գրականութեան մէջ թէ՛ իր անձով եւ թէ՛ տաղանդով:

Վերջին ծայր աղքատ գիւղացիի զաւակ՝ աղբոս է թշուառ մանկութիւն մը: Հագիւ կրցած է ստանալ նախակրթութիւն մը եւ տարի մըն ալ Արմաշի դպրեմանէն մէջ աշակերտած Դուրեան Սրբազանին: Սակայն ինքնաշխատութեամբ սորված է Փրանսերէն, գերմաներէն եւ անգլերէն: Կատաղի ընթերցող մըն էր եւ այդպէս ալ մնաց ամբողջ կեանքի ընթացքին:

Մեր գրականութեան մէջ մուտք գործեց գիւղացիի տրեխներով, բայց առաջին վայրկեանէն իսկ ուշագրութիւն գրուեց իր յախուռն խառնուածքով: Միտաւ տապալել գրական կեղծ համբաւներ, ձկաւէ արձաններ: Տարիներուն հետ գտաւ իր դատողական հասունութիւնը եւ հրաժարեցաւ հայ արժէքները

օտար շահանքներով կշռելու արկածախնդրութենէն: Սկսաւ փնտռել հայ հոգին յատկանշող հիմնական տուեալները, նկատի առնել ժամանակը եւ պայմանները: Իր գրչին տակ եկող «Իրաւ» բառը դարձաւ ցուցանիշ հարադատութեան, հայեցիութեան:

1915ի նոյեմբերին ամբողջ սարսափը ապրելէ ետք, բախտը ունեցաւ փրկելու իր բնկերներու ճակատագրէն: Այս փրկութիւնը մեծ բախտ մը եղաւ նաեւ արեւմտահայ գրականութեան համար, որովհետեւ աւելի քան քսանորդ տար Յ. Օլական հանգիստացաւ Սփիւքքի մէջ ծաղկող գրական շարժումին կեդրոնական դէմքը: Իբրեւ գրականութեան ուսուցիչ՝ հարկաւորաւոր աշակերտներու ներշնչեց մեր արժէքներու ուժը եւ ըմբռնումը. իսկ իբրեւ քննադատ իր հեղինակաւոր ձայնը լսելի դարձուց տեւաբար: Մարդիկ կը սպասէին, թէ ի՞նչ պիտի ըսէ Օլական այս կամ այն երկի մասին: Եւ իր խօսքը միշտ կշիռ ունէր: Գրական հարցեր արծարծեց, ուղղութիւն տուաւ, հին ու նոր արժէքներ քննարկեց եւ այս ձեւով դարձաւ տեսակ մը կենդանի կապ մեր նահատակ գրողներու ձգած վաստակին եւ նորերուն միջեւ:

Մեծ է Յ. Օլականի վաստակը թէ՛ իբրեւ քննադատ եւ թէ՛ իբրեւ վիպագիր:

Բարերախոս դասուորումով մը այսօր այս հանդէսին ղերակատարները բոլորն ալ հարազատ են իրեն, իբրեւ իր հոգիին ժառանգորդները: Եւ տալիս են իրենց իրաւունքը՝ իրենց հոգիին հարազատ լինելու համար: Եւ իրենց հոգիին հարազատ լինելու համար:

Կեանքին մէջ խնայասէր ու ժլատ Օլական մեծատունի շնորհիւ շատ տուած է գրականութեան իր հարստութիւնը: 100 հատորներ լեցնելու չափ գործեր ունի, որոնց հազիւ կէսը տպուած է: Միւս կէսը կը մնայ սնտուկներու մէջ եւ կը թաղանթանդարտուի պէտքէն: Կ'ըսեմ կը թաղանթանդարտուի՝ որովհետեւ Օլական ջուր կը խառնէր մեղանքին, որպէսզի զրիշը աւելի դիւրաւ սահի: Այս պատճառով ձեռագիրները կրնան հետզհետէ անընթեռնելի դառնալ:

Ժողովրդական դրող մը չէ եղած եւ չի կրնար ըլլալ ան, մասամբ իր անսովոր ոճին պատճառով, մասամբ նաեւ հոգեվերլուծութիւն բաւիղներուն խորքը մխրճուած ըլլալուն: Այսուհանդերձ, երիտասարդները պէտք է կորցնեն Օլականը: Ընթերցումը հետզհետէ հաճոյքի կը վերածուի Օլականի էջերուն վրայ:


Օլական այն գրողներէն է, որոնց համար գրելը պարզ հաճոյք մը ըլլալէ անդին բան մըն էր: Գրականութիւնը կրօնք էր եւ հաւատք իրեն համար: Ինչպէս ճշմարիտ հաստատեցաւ չի կրնար ապրիլ առանց աղօթելու, այդպէս ալ Օլական չէր կրնար ապրիլ առանց գրելու: Թաճախ լսած եմ իր սա խօսքը. «Գրիչը անէ՛ք ձեռքէս եւ ես կը մեռնիմ»: Ու ան մեռաւ գրիչը ձեռքէն, աշխատանքի սեղանին առջեւ:

Գրողի իր պատգամը՝ ահաւասիկ.

«Գրագէտ մը հարազատ է որքան աւելի շատ արդար տարբեր վերքերէ ցեղային գգայութեան աւագանէն»:

Պիտի մաղթէի, որ մեր նոր գրողները իրենց հետ տանէին Օլականի այս պատգամը, որ յաւիտենական ճշմարտութեան պէս կը հնչէ:

Մ. ԻՇԽԱՆԻ



յայտնաբերեցան երկու արուեստագէտներ, —
լեւորին Զարարեան՝ իր բնիկը, Թաթեան, դե-
ղաբնիկ, Նարեան և Կնէզ ճաշեով, ու ան-
բախտիկ արեգեով դաշնակաւոր ժը, — Կարթիկ
Թաթեան, որուն կառարարական արուեստը եւ
ստեղծագործութիւնները ու երաժշտականութիւ-
նը Հրաշալիքներ էին. ան իր անձով արարող
դպրոց ժըն է կոչուելու՝Թաթեան՝ ուշադիր երա-
ժշտաւ սովորեցնելու ճամբար:

Ոչ-Հայկական կաթերեքը կ'երգուէին իրենց
 քաղաքային լեզուով. այս քաժիթին մէջ անճառա-
 նաւի էին նստի նեկալական Հոգեւոր զօրս երգերը,
 աջանիւր լէյլ Ունեմսիք քառան, մեծախաղճուս,
 կ'երգու յ. Հերարտան: Պարի, Հնճաւլի, Ռոտիթի,
 Մառաշէյի եւ Կոստո մեկնախառնակայն իրենց
 Հիմարիտ նկարագրով եւ որոնց մէջ թնճեթէթ քառ-
 ցական զարի:խառնութիւնը զոգաւան էլ կ'ընթիմանայ
 իմացողական տարաբնութեան եւ քեմական եղակի
 քաղաքին Հնուս:

«Գախի կամ կողմնասի մէկ էջը կը մտնէ անկենդան մարմինի մը, ուրկէ յարութիւն գլտմ է առէ իւրաճամիւր Յոբ»՝ բնագոյնի եւ եմբանտարայնի իր քոյրը ճիշդայտ ճշմտելութիւններով եւ նրանգներով»:

[illegible]

QZSPAU MIUZYBSNBDKZ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ



ԱՍՖԱԼԹԸ (վեպ), Զ. Մ. Որբունի, Խոթանպուլ, 1972

ՀՐԱՇԱԼԻ ԶԹՐՈՒԹԻՒՆ (բանաստեղծություններ), Գալուստ Խանենց, Թեհրան, 1972

ԱՐԵՆԱՅԱՂԻԿՆԵՐ (խորհրդածություն) Արամ Մուրադեան, Թեհրան, 1972

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ (խորհրդածություն) Արամ Մուրադեան, Թեհրան, 1972

ԱՐՇԱԽԱՆՔ (բանաստեղծություն), Վարանդ, Թեհրան, 1973

ՔԱՌԵԱԿՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ (գառնակներ), Արամ Յարութեան, Թեհրան, 1972

ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ «ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒՐԻՔ



Յ. Կարապետց (Ուաշինկյան), Պր. Արմեն Սահակյանին, Լոմոսմ

» » » » Տիկ. Աստղիկ Բեկլարեան, Լուս Ան-
նիլքս

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ	40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	20 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	4 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اوتين كارنيك قزائجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐԻՑ ԽՄԲԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ
ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth - Liban